

ISSN 1829 – 0043

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԼՐԱԲԵՐ

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ВЕСТНИК

ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ

**СБОРНИК НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ
СТАТЕЙ**

PROCEEDINGS

OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA

**SCIENTIFIC AND TECHNOLOGICAL
COLLECTED ARTICLES**

XV

ՀԱՏՈՐ TOM VOLUME

№ 1

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN

2018

Печатается согласно решению Президиумов Инженерной академии Армении (ИАА) и Международной инженерной академии (МИА), включен в список публикаций, принятых Высшей аттестационной комиссией (ВАК) РА

(<http://www.boh.am/periodicals.php?langid=1>).

**ВЕСТНИК ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ (ВИАА)
РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

Главный редактор	д.т.н., проф. С. Амбарцумян (РА)
Первый заместитель	
гл. редактора	д.т.н., проф. С. Минасян (РА)
Заместители гл. редактора	д.экон.н., проф. А. Гюрджян (РА) , д. архит., проф. Ю. Сафарян (РА) , д.т.н., проф. М. Стакян (РА)
Отв. секретарь	к.т.н., доц. Р. Барсегян (РА) д.т.н., проф. А. Аракелян (РА) , д.экон.н., проф. В. Бостанджян (РА) , д.т.н., проф. А. Варданын (РА) , д.т.н. В. Габзималян (РА) , д.т.н., проф. Г. Галстян (РА) , д.ф.-м.н., проф. А. Гукасян (РА) , д.т.н., проф. Б. Гусев (РФ) , д.архит. Г. Дибан (САР) , д.т.н., проф. Н. Ефимов (РФ) , д.т.н., проф. Ин Самуэл Йен-Лян (Тайвань) , Казуро Имаи (Япония), проф. Р. Калленборн (Норвегия) , д.экон. наук К. Карапетян (РА) , проф. Г. Маргулов (РФ) , проф. В. Марухян (РА) , к.т.н. И. Махрикова (Словения) , д.пед.н. М. Мкртчян (РА) , проф. Дж. Момджян (Германия) , Э. Мороян (США) , проф. С. Паглиара (Италия) , Паоло Дель-Биянко (Италия) , д.т.н., проф. Б. Патон (Украина) , д.т.н., проф. В. Петросян (РА) , д.т.н., проф. И. Пешков (РФ) , канд. архит., проф. Н. Саргсян (РА) , д.хим.н., проф. Г. Торосян (РА) , д.биол.н., проф. А. Трчунян (РА) , проф. П. Хлавинец (Чехия) , д.т.н., проф. В. Чердынцев (Беларусь) , д.экон.наук Чжэн Веньтан (КНР) , д.хим. н., проф. Г. Чилингарян (США)

Printed according to the Decision of Engineering Academy of Armenia (EAA) and International Academy of Engineering (IAE), included into the list of publication accepted by the Highest Certifying Commission (HCC RA) (<http://www.boh.am/periodicals.php?langid=1>)).

**PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA (PEAA)
EDITORIAL COUNCIL**

Editor-in-chief	doctor of tech. sci., prof. S. Hambartsumyan (RA)
First deputy Editor-in-chief	doctor of tech. sci., prof. S. Minasyan (RA)
Editor-in-chief deputies	doctor of econ. sci., prof. A. Gyurjyan (RA) , doctor of architecture, prof. Yu. Safaryan (RA) , doctor of tech. sci., prof. M. Stakyan (RA)
Responsible secretary	candidate of tech. sci. R. Barseghyan (RA) doctor of tech. sci., prof. A. Arakelyan (RA) , doctor of econ. sci., prof. V. Bostanjyan (RA) , doctor of tech. sci., prof. V. Cherdintsev (Belarus) , doctor of chem. sci., prof. G. Chilingaryan (USA) , doctor of architecture G. Diban (SAR) , doctor of tech. sci., prof. N. Yefimov (RF) , doctor of tech. sci. V. Gabzimalyan (RA) , doctor of tech. sci., prof. G. Galstyan (RA) , doctor of phys.-math. sci., prof. A. Ghukasyan (RA) , doctor of tech. sci., prof. B. Gusev (RF) , prof. P. Hlavinec (Czech republic) , prof. R. Kallenborn (Norway) , cand. of tech. sci. I. Mahrikova (Slovak republic) , doctor of econ. sci. K. Karapetyan (RA) , Kazuro Ima (Japan) , doctor of tech. sci., prof. H. Margulov (RF) , prof. V. Marukhyan (RA) , doctor of ped. sci. M. Mkrтчян (RA) , prof. J. Momjyan (Germany) , A. Moroyan (USA) , doctor of tech. sci. Paolo Del-Biyanko (Italy) , prof. S. Pagliara (Italy) , doctor of tech. sci., prof. B. Paton (Ukraine) , doctor of tech. sci., prof. V. Petrosyan (RA) , doctor of tech. sci., prof. I. Peshkov (RF) , doctor of tech. sci., prof. Samuel Yen-Liang Yin (Taiwan) , candidate of arc., prof. N. Sargsyan (RA) , doctor of chem. sci., prof. G. Torosyan (RA) , doctor of biol. sci., prof. A. Trchunyan (RA) , doctor of tech. sci., prof. A. Vardanyan (RA) , doctor of econ. sci. Wentang Zheng (PRC)

© ВЕСТНИК ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ (ВИАА), 2018

© PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA (PEAA), 2018

Հրատարակվում է Հայաստանի Ճարտարագիտական ակադեմիայի (ՀՃԱ) և Միջազգային Ճարտարագիտական ակադեմիայի (ՄՃԱ) Նախագահությունների որոշմամբ, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ) կողմից **06.03.2012 վերանայված ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ՈՒՄ (<http://www.boh.am/periodicals.php?langid=1>)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ) ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր՝	տ.գ.դ., պրոֆ. Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ (ՀՀ)
Գլխ. խմբագրի առաջին տեղակալ՝	տ.գ.դ., պրոֆ. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ (ՀՀ)
Գլխ. խմբագրի տեղակալներ՝	տնտ.գ.դ., պրոֆ. Ա. ԳՅՈՒՐՁՅԱՆ (ՀՀ), ճարտ. դ., պրոֆ. Յու. ՍԱՖԱՐՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Մ. ՍՏԱԿՅԱՆ (ՀՀ)
Պատ. քարտուղար՝	տ.գ.թ., դոց. Ռ. ԲԱՐՍԵԴՅԱՆ (ՀՀ) տ.գ.դ., պրոֆ. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ (ՀՀ), տնտ.դ., պրոֆ. Վ. ԲՈՍՏԱՆՁՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ. Վ. ԳԱԲԶԻՄԱԼՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, տ.գ.դ., պրոֆ. Բ. ԳՈՒՄԵՎ (ՈՂ), ճարտ. դ. Գ. ԴԻԲԱՆ (ՍԱՀ), տ.գ.դ., պրոֆ. Ն. ԵՖԻՄՈՎ (ՈՂ), ք.գ.դ., պրոֆ. Գ. ԹՈՐՈՍՅԱՆ (ՀՀ), կ.գ.դ., պրոֆ. Ա. ԹՈՂՈՒՆՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. ԻՆ ՍԱՄՈՒԵԼ ԻԵՆ-ԼՅԱՆ (Թայվան), տ.գ.դ., ԿԱԶՈՒՐՈՒՄՅԱՆ (Ճապոնիա), պրոֆ. Ռ. ԿԱԼԼԵՆԲՈՐՆ (Նորվեգիա), տնտ.դ. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ՀՀ), պրոֆ. Պ. ՀԼԱՎԻՆԵԿ (Չեխիա), ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ (ՀՀ), տ.գ.թ. Ի. ՄԱՀՐԻԿՈՎԱ (Սլովենիա), պրոֆ. Հ. ՄԱՐԳՈՒԼՈՎ (ՈՂ), պրոֆ. Ո. ՄԱՐՈՒԽՅԱՆ (ՀՀ), մանկ. գ.դ. Մ. ՄԿՐՏՅԱՆ (ՀՀ), պրոֆ. Զ. ՄՈՍՁՅԱՆ (Գերմանիա), Է. ՄՈՈՈՅԱՆ (ԱՄՆ), տնտ.դ. ԶԺԵՆ ՎԵՆՏԱՆ (Չինաստան), տ.գ.դ., պրոֆ. Վ. ԶԵՐԴԻՆՅԵՎ (Բելառուս), ք.գ.դ., պրոֆ. Գ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ (ՀՀ), պրոֆ. Ս. ՊԱԳԼԻԱՐԱ (Իտալիա), տ.գ.դ., պրոֆ. Բ. ՊԱՏՈՆ (Ուկրաինա), ՊԱՌԻԼՈՂԵԼ-ԲԻԱՆԿՈ (Իտալիա), տ.գ.դ., պրոֆ. Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Ի. ՊԵՇԿՈՎ (ՈՂ), ճարտ. թ. պրոֆ. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ (ՀՀ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ»-ի խմբագրական խորհուրդը շնորհակալություն է հայտնում «ՎիվաՍել-ՄՏՍ» ՓԲԸ գլխավոր տնօրեն **ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ ԼՐԱԲԵՐԻ** հրատարակման գործում ցուցաբերած օգնության համար:

Редакционный совет **“ВЕСТНИКА ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ”** благодарит Генерального директора ЗАО “ВиваСелл-МТС” **РАЛЬФА ЙИРИКЯНА** за оказанную помощь при издании **ВЕСТНИКА**.

Editorial council of **“PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA”** expresses gratitude to the General Manager of CJSC “VivaCell-MTS” **RALPH YIRIKIAN** for the help in publishing **“PROCEEDINGS”**.

<http://www.engineeracademy.am>

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ), 2018

A.A. Karapetyan, A.H. Arakelyan

EVALUATING ARMENIA'S COMPARATIVE ADVANTAGES OF EXPORT IN CIS AND EU COUNTRIES

The relevance and the need of determining the comparative advantages of export are studied. There have been observed two different indicators by which Armenia's comparative advantages in CIS and EU countries are evaluated. As a result of the analysis seven products' groups were separated in which Armenia has comparative advantage. The commodity circulation of these products' groups and the share of their export in Armenia's GDP and in Armenia's total export were studied.

Keywords: comparative advantage, trade, export, index, trade policy, product group.

The relevance of research. In the current period, there have been significant changes in the global economy, which may lead to the rise in globalization, the economic integration processes of individual countries or regions, the increase in trade links and trade in general, and the increase in foreign direct investment, which contributes to the global economy growth [1].

In today's conditions, the adoption of a decision to join an economic union for the Republic of Armenia is associated with various risks and potential interests, both of its own and of economic unions that it intends to join. However, it is necessary to take into consideration all the features of the Republic of Armenia, such as tense relations with neighboring countries (Turkey and Azerbaijan), blockade, lack of access to the sea, lack of common border with EAEU member states, which can hamper Armenia's external for the development of trade.

The modern problem of the Republic of Armenia is the development of a favorable economic integration policy, overcoming new emerging political and economic challenges, as well as developing a realistic and correct foreign trade policy.

Thus, the relevance of the topic of work is conditioned by the fact that it is dedicated to identifying the comparative advantages of Armenia's export, which will enable to develop a more effective foreign trade policy.

Purpose. The main purpose of the work is estimation of comparative advantages of exports of separate products' groups of the Republic of Armenia towards CIS and other countries.

To achieve this major goal, the following key issues are the basis of the research:

- Investigate the structure of the foreign trade turnover of the Republic of Armenia,
- Identify different export-specific indicators and analyze the export of the Republic of Armenia.

Subject and object of the research. The object of the research is the export of the Republic of Armenia, in particular export structure, product groups with comparative advantages, their circulation structure, share in GDP and in total export.

The main findings and novelty of the study. The work innovation is based on various methodological and practical results obtained during the research. The comparative advantages of export of separate commodity groups in the Republic of Armenia have been elaborated and evaluated on CIS and other countries, based on which the main commodity groups are separated, by the export of which Armenia has a comparative advantage.

One of the main indicators characterizing the economy of any country is the foreign trade turnover, the export and the import of the country. From 2000 to 2015, the largest share of exports to CIS countries was the export of alcoholic and non-alcoholic products' group. The export in 2015 decreased by almost 12% compared to 2000.

From 2000 to 2008, the largest share of exports to non-CIS countries (other countries) was the export of natural or artificial pearls, precious and semi-precious stones products' group, while export decreased by about 5 times in 2008 compared to 2000. From 2009 to 2015 inclusive, the largest share of exports to other countries was the export of ore, slag and ash products' group, while exports in 2015 increased by about 60% compared to 2009.

Different approaches and indicators have been developed to assess the country's specialization and the structure of international trade, by which a comparative advantage of the country's international trade

can be estimated. These indicators are based on the Balassa's index and can help to evaluate the country's specialization from different perspectives.

Balassa's Index. B. Balassa recommended the International trade competitiveness assessment index [2]. He has revealed that "comparative advantages arise as a result of economic factors, and they can be measurable and immeasurable." According to Balassa, the following specialization index, called the Balassa's Index, is proposed.

$$B_{ij} = 100 \times \frac{x_{ji}}{\sum_{j=1}^N x_{ji}} / \frac{\sum_{i=1}^N x_{ji}}{\sum_{j=1}^N \sum_{i=1}^M x_{ji}}, \quad (1)$$

where x_{ji} is the export of j-th product (service) from i-th country. The Balassa (1) Index is limited to 0 below and does not have an upper limit. If the country is specialized in the export of any product or product group, and the mean of that industrial sector is above the average of the rest of the countries, then the branch has a high index of 100, and if that index is less than 100, that branch of industry has a lower degree of expertise than other countries. This value is used to estimate the relative importance of interdisciplinary specialization and cross-border trade. It is well-known (Balassa (1965)) that the higher the interdisciplinary specialization is, the greater is the standard mid-square deviation of the time series derived from the index. It should be noted that the Balassa's index (1) does not give full access to the country's trade, as it only examines the export. For example, the country has a relatively high productivity of any product, but at the same time, the volume of imports is higher than its export. Such an example is the export and import of alcoholic and soft drinks in 2012. Different authors suggest studying other indicators of international trade, including import and export.

Balassa's logarithmic index. The Balassa's index of comparative advantage of the international trade (1) is also presented in the following way:

$$RCA = \ln \left(\frac{X_i}{M_i} \right) \times \left(\frac{\sum_{i=1}^n X_i}{\sum_{i=1}^n M_i} \right) \times 100, \quad (2)$$

where X and M are exported and imported respectively, and i are the product group.

The following is also known as the Balassa's comparative advantage index:

$$RCA_{ij} = \frac{x_{ij}}{\frac{X_i}{x_{aj}}}, \quad (3)$$

where x_{ij} is exported from i-th country, X_i is the total export of i-th country, x_{aj} is the export of the given commodity in the selected region, X_a is the entire export of the selected region.

The country has a comparative advantage, if the value of the Balassa (3) index is greater than 1 for that product group.

We can estimate Armenia's comparative advantages of export in CIS and EU(non-CIS countries-other countries) based on Balassa (1) index, Logarithmical index of Balassa (2), Comparative advantages index of Balassa (3).

Measuring Armenia's comparative advantages by the Logarithmical index of Balassa and by the Comparative advantages index of Balassa, we can separate 7 products' groups in which Armenia has comparative advantages:

- live animals,
- fish and crustaceans,
- alcoholic and non-alcoholic,
- ores, slag and ash,
- salt, sulphur, earths and stone, plastering materials, lime and cement,
- aircraft, spacecraft and parts thereof,
- works of art, antiques.

From analyzation in Table 1-Table 3 [3,4] it was clear that, Armenia in 2000-2003, 2005 and 2007-2008 mostly exported Alcoholic and non-alcoholic products, in 2004, 2006 and 2009-2015 mostly exported Ores, slag and ash products' group.

In 2000 and 2007 mostly imported an aircraft, spacecraft and parts thereof products' group, in 2001 live animals, in 2002-2004, 2006, 2008-2015 mostly exported alcoholic and non-alcoholic products' group, in 2005 ores, slag and ash products' group.

From the product groups of comparative advantage in 2000 and 2007 the most imported were flying machines, spacecraft product group, in 2001 live animal product group, in 2002-2004, 2006 and 2008-2015, Alcohol and soft drinks product group, in 2005, Ore, slag and ash product group.

Moreover, in 2005 the ore, slag and ash product group was imported at \$ 30.6582 million.

It is essential to consider the protection mechanisms for domestic producers' rights in other countries to increase the export volumes of the products' group, that have comparative advantages [5].

The government pursues the goal of expanding the volumes of exported goods by domestic producers to new markets [6]. Therefore, the exporting companies can apply different taxation mechanisms or control exports. But such an approach can not last long. In such a situation, of course, a question arises: how to protect the interests of the exporting companies and, as a consequence, to support them with the aim of increasing the output volumes [7]. For this purpose, the economic peculiarities of export benefits, as well as the role of the state's export promotion policy were reviewed. Particularly, the role of the state in the policy of trade expansion to exporters is great [8].

Table 1

Export/Import for the products' groups in which Armenia has comparative advantages

Products' group	Country	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Live animals	CIS and other countries	0,0047387	0,0772480	0,247434	0,1396360	0,0207367	0,0393596	0,2598399	0,307919
Fish and crustaceans	CIS and other countries	11,580097	4,7012448	12,512598	21,997900	33,681344	1,6664391	6,3272595	5,811982
Alcoholic and nonalcoholic	CIS and other countries	41,926492	28,583369	17,525334	12,164868	7,0080611	5,4906530	3,7679095	3,107110
Ores, slag and ash	CIS and other countries	-	12054,352	2664,3396	342,18705	79,529212	1,6773848	8,6945607	4,867109
Salt; sulphur; earth and stone, plastering materials, lime and cement	CIS and other countries	1,7604676	0,2376808	0,3867066	1,5828694	5,7544235	6,2552994	5,3239705	4,488189
Aircraft, spacecraft and parts thereof	CIS and other countries	0,4797512	0,7439136	0,5139383	0,2503075	0,6303897	0,0488461	7,64591439	0,041224
Works of art, antiques	CIS and other countries	6,4295774	20,924050	28,517110	2,5884021	10,078014	0,1105918	0,1878591	0,311602

Continuation Table 1

Products' group	Country	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Live animals	CIS and other countries	0,27382884	2,44921365	5,009686817	3,5659233	2,1420262	1,915151356	1,582418	0,910743
Fish and crustaceans	CIS and other countries	1,37734392	0,66125457	2,512502037	4,3926115	4,8882435	9,116994382	8,496325	4,359564
Alcoholic and nonalcoholic	CIS and other countries	2,30926058	1,90399935	2,074839495	3,1223469	3,5380363	3,765445211	3,381596	2,300742
Ores, slag and ash	CIS and other countries	14,3142369	120,201638	69,69998789	88,236800	445,17179	277,6756336	169,4718	695,2537
Salt; sulphur; earth and stone, plastering materials, lime and cement	CIS and other countries	3,72722169	1,00479696	0,395939232	0,8120651	1,1043274	1,185024859	0,565824	0,235908
Aircraft, spacecraft and parts thereof	CIS and other countries	8,77801570	2,19166106	0,026605118	0,5261192	0,0660937	1,026662375	391,9677	0,138519
Works of art, antiques	CIS and other countries	0,7139582	0,95546689	0,499792846	0,7939147	0,5207638	2,128520912	2,442729	1,852173

Table 2

The percentage of exports of the product groups with comparative advantage in GDP

<u>Products' group</u>	Country	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Live animals	CIS and other countries	1,88334E-06	5,18E-05	0,000151212	6,18E-05	5,01E-06	1,03E-05	6,31E-05
Fish and crustaceans	CIS and other countries	0,000249595	0,000321	0,000731442	0,00112	0,000813	0,000598	0,000685
Alcoholic and nonalcoholic	CIS and other countries	0,011756526	0,018467	0,018908788	0,021413	0,015947	0,017202	0,012389
Ores, slag and ash	CIS and other countries	0,007973529	0,009674	0,011885723	0,013556	0,020363	0,010494	0,01464
Salt; sulphur; earth and stone, plastering materials, lime and cement	CIS and other countries	0,000677478	0,000111	0,000189763	0,000446	0,001955	0,003035	0,003669
Aircraft, spacecraft and parts thereof	CIS and other countries	0,000306775	0,000381	0,000103193	0,000152	0,00017	4,48E-05	3,08E-05
Works of art, antiques	CIS and other countries	0,000143291	0,000156	0,00031564	0,000227	3,97E-05	7,2E-05	0,000103

Continuation Table 2

<u>Products' group</u>	Country	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Live animals	CIS and other countries	7,6E-05	0,00012732	0,001064	0,001486	0,001319	0,000881	0,001311	0,000808	0,000433
Fish and crustaceans	CIS and other countries	0,000504	0,00042834	0,000373	0,000832	0,00169	0,002143	0,002918	0,002625	0,0014
Alcoholic and nonalcoholic	CIS and other countries	0,013708	0,01246729	0,009264	0,01178	0,01589	0,018734	0,019157	0,016299	0,009894
Ores, slag and ash	CIS and other countries	0,013657	0,01077784	0,013401	0,024858	0,031043	0,028055	0,027285	0,025081	0,034757
Salt; sulphur; earth and stone, plastering materials, lime and cement	CIS and other countries	0,003775	0,00347303	0,001153	0,000597	0,001066	0,001413	0,001425	0,000685	0,000309
Aircraft, spacecraft and parts thereof	CIS and other countries	0,000201	0,00010546	3,77E-05	2,32E-05	0,002137	5,25E-06	0,00066	0,002829	3,47E-06
Works of art, antiques	CIS and other countries	0,00029	0,00011484	0,000102	7,82E-05	9,07E-05	0,000102	0,000157	0,000139	6,27E-05

Table 3

Products' group	Country	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Live animals	CIS and other countries	1,198E-05	0,0003209	0,0007112	0,0002529	2,47614E-05	5,17507E-05	0,0004087	0,0006073
Fish and crustaceans	CIS and other countries	0,0015876	0,0019888	0,0034402	0,0045850	0,004020	0,0030081	0,0044414	0,0040239
Alcoholic and nonalcoholic	CIS and other countries	0,0747840	0,1144505	0,0889344	0,087668	0,0788908	0,0865548	0,0803014	0,1095133
Ores, slag and ash	CIS and other countries	0,0507201	0,0599543	0,0559026	0,0555005	0,1007399	0,0528037	0,0948926	0,1091059
Salt; sulphur; earth and stone, plastering materials, lime and cement	CIS and other countries	0,0043094	0,0006872	0,0008925	0,0018248	0,0096724	0,0152711	0,0237819	0,0301584
Aircraft, spacecraft and parts thereof	CIS and other countries	0,0019514	0,0023601	0,0004853	0,000623	0,0008413	0,0002253	0,0001994	0,001609
Works of art, antiques	CIS and other countries	0,0009114	0,0009672	0,0014845	0,0009310	0,0001965	0,0003620	0,0006703	0,002313

The percentage of the export of the product groups with comparative advantage in Armenia's export

Continuation Table 3

Products' group	Country	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Live animals	CIS and other countries	0,001404	0,0129595	0,0132135	0,0091509	0,0063542	0,0098577	0,0060663	0,0030694
Fish and crustaceans	CIS and other countries	0,004724	0,0045360	0,00740284	0,0117273	0,0154619	0,0219493	0,0196975	0,0099247
Alcoholic and nonalcoholic	CIS and other countries	0,1375137	0,1128051	0,1047653	0,1102680	0,1351531	0,1440925	0,1223007	0,0701411
Ores, slag and ash	CIS and other countries	0,1188791	0,1631743	0,2210770	0,2154239	0,2023947	0,2052287	0,1881900	0,2464024
Salt; sulphur; earth and stone, plastering materials, lime and cement	CIS and other countries	0,0383073	0,0140391	0,0053120	0,0073966	0,0101954	0,0107190	0,0051388	0,0021912
Aircraft, spacecraft and parts thereof	CIS and other countries	0,0011632	0,0004585	0,0002059	0,0148282	3,78931E-05	0,0049607	0,0212285	2,45742E-05
Works of art, antiques	CIS and other countries	0,0012666	0,0012476	0,0006952	0,0006296	0,0007350	0,0011804	0,0010433	0,0004445

In this case, however, importing countries may appeal against the political expansion of RA, as one of the mechanisms for implementing such policy is based on dumping: the exported goods are sold at artificially lower prices and push out the products of the importing country.

Such a policy will also be appealed by other exporting countries, as their exported goods will be pulled out by Armenia's exporting goods.

Thus, Armenia, based on dumping in its export policy, will be the reason for pulling out the products that are introduced in the country of origin, as well as imports from other countries.

There are dumping definitions and differentiation of its types [9].

The laws of the developed countries distinguish two types of dumping:

1. Price dumping, which implies the sale of goods at the exported market at a lower price than in its national market.

2. Value quota, which implies selling a lower price than the cost of exported goods.

According to the Treaty adopted by the EAEU, Member States should apply anti-dumping measures throughout the EAEU. The treaty regulates a clear procedure for the use of anti-dumping measures, which defines the necessary steps of protective measures, starting with submitting an application to the responsible body of the EAEU, consideration of that application before making a decision. More detailed is the concept of dumping, the explanation of the EAEU economic branch, the analysis of the damage caused to the EAEU economic branch as a result of dumping imports.

Conclusion. In order to enlarge products' groups (with comparative advantages) export volume we have to take into account the rights protection mechanisms applicable to domestic producers in other countries. The government aims to expand exports of goods produced by domestic manufacturers in search of new markets. Therefore, the export of goods can be applied to various tax mechanisms to control the export of producer organizations.

References

1. **Libman A.** Models of economic integration – Russian and Post-Soviet experience. – Moscow, 2009. – 413p. // Online at <http://mpira.ub.uni-muenchen.de/19434/>.
2. **Ballassa B.** The theory of Economic Integration.- Homewood 3, 1961. –304 p.
3. <http://knoema.ru/>
4. <http://www.armstat.am>
5. **Viner J.** The Customs Union Issue.- New York: Carnegie Endowment for International Peace; London: Stevens & Sons Limited, 1950. – 221 p.
6. **Булатов А. Г.** Экономика. – М.: Издательство “Юрист”, 1999. – 632с.
7. **Сальваторе Д.** Международная экономика / Пер. с англ.; Под ред. **А. Аракеляна**. – М.: Изд-во Института внешних связей, 1998. – 714 с..
8. **Российская Бизнес-Газета**, 2011.
9. **Булатов А. Г.** Мировая экономика и международные экономические отношения. – М., 2012. – 654с. 21.02.2018.

Ա.Ա. Կարապետյան, Ա.Ա. Առաքելյան ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՊՀ ԵՎ ԵՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ուսումնասիրվում է արտահանման համեմատական առավելությունների գնահատման անհրաժեշտությունը և հիմնավորվում՝ արդիականությունը: Դիտարկվել է արտահանման համեմատական առավելության գնահատման երկու տարրեր ցուցանիշ, որոնցով գնահատվել են ՀՀ-ի արտահանման համեմատական առավելությունները ԱՊՀ և ԵՄ երկրներում: Վերլուծության արդյունքում առանձնացվել է յոթ ապրանքային խումբ, որոնց արտահանման մեջ ՀՀ-ն ունի համեմատական առավելություն: Ուսումնասիրվել են այդ ապրանքային խմբերի առևտրաշրջանառությունը և դրանց արտահանման տեսակարար կշիռը ՀՀ ՀՆԱ-ի և ընդհանուր արտահանման մեջ:

Առանցքային բառեր. համեմատական առավելություն, առևտուր, արտահանում, ցուցանիշ, առևտրային քաղաքականություն, ապրանքային խումբ:

Ա.Ա. Карапетян, А.А. Аракелян ОЦЕНКА СРАВНИТЕЛЬНЫХ ПРЕИМУЩЕСТВ ЭКСПОРТА АРМЕНИИ В СТРАНАХ СНГ И ЕС

Изучаются актуальность и необходимость определения сравнительных преимуществ экспорта. Рассмотрены два разных показателя, по которым оценивались сравнительные оценки экспорта Армении в странах СНГ и ЕС. В результате анализа выделены семь групп продуктов, в которых Армения имеет преимущество при сравнительной оценке экспорта. Изучены товарный оборот групп этих продуктов и доля их экспорта в валовом внутреннем продукте Армении и в общем экспорте Армении.

Ключевые слова: сравнительные преимущества, торговля, экспорт, индекс, торговая политика, группа продуктов.

Karapetyan Armine – Master Student, Department of Mathematical Modeling in Economics, YSU
Arakelyan Aram – Doctor of Technical Sciences, Prof, Head of Chair Department of Mathematical Modeling in Economics, Yerevan State University

Գ.Օ. Ավետիսյան

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ

Դիտարկվում են կոռուպցիայի և իրավունքի գերակայության էությունը և հասկացությունը, ինչպես նաև կառավարման գործառնական և համակարգային արդյունավետությունը բնորոշող որոշ գործոններ: Դիտարկվող ցուցիչների հիման վրա կատարվում է գործոնային և ռեգրեսիոն վերլուծություն: Վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտել կոռուպցիայի ընկալման համաթիվ ազդեցությունը իրավունքի գերակայության համաթիվ վրա:

Առանցքային բառեր. կոռուպցիա, կոռուպցիայի ընկալման համաթիվ, իրավունքի գերակայություն, կառավարման արդյունավետություն, պանելային սովալներ, գործոնային վերլուծություն, էկոնոմետրիկ գնահատական:

Ներածություն: Ինստիտուցիոնալ և սահմանադրական տնտեսագիտության շրջանակներում լայնորեն քննարկվում և ուսումնասիրվում են իրավունքի գերակայության և կոռուպցիայի հասկացությունները, քանի որ առաջինը երկրի սահմանադրականության համատեքստում ունի ելակետային կարևորություն, իսկ երկրորդը՝ զսպում կամ խոչընդոտում է սահմանադրությամբ ամրագրված դրույթների և այդ դրույթներին ածանցյալ օրենքների օպտիմալ իրացվելիությանը իրական կյանքում [1]: Վերջինիս արդյունքում առաջացող սահմանադրական դեֆիցիտն արտացոլվում է նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում [2]: Ուստի, հաշվի առնելով վերը նշվածը, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել, մասնավորապես, կոռուպցիայի ունեցած ազդեցությունը իրավունքի գերակայության մակարդակի վրա:

Կոռուպցիայի հասկացությունը և էությունը: Ակադեմիական գրականությունն առաջարկում է կոռուպցիայի բազմաթիվ սահմանումներ, որոնք սովորաբար փոխլրացնում են միմյանց: Առավել հայտնի սահմանումներից են.

- ❖ Վեբստերի (Webster) [3] բառարան. ազնվության կամ շիտակության խաթարման, կամ կորստի գործողություն (գործընթաց):
- ❖ Օքսֆորդի (Oxford) [4] բառարան. իշխանության անարդար կամ անլեգալ վարքագիծ:
- ❖ Համաշխարհային Բանկ (World Bank) [5]. հանրային իշխանության չարաշահումը (անարդյունավետ օգտագործումը), որը հանգեցնում է մասնավոր շահի:

Վերոգրյալ սահմանումներից բխում է, որ կոռուպցիոն գործողությունը այնպիսի իրադարձություն է, երբ մասնակիցներից մեկը սովորաբար պետաիշխանական ոլորտի ներկայացուցիչ է, ով անձնական օգտակարությունը առավելարկելու նպատակով չարաշահում և/կամ անարդյունավետ է օգտագործում օրենսդրությամբ իրեն վերապահված իշխանական լծակները, ինչը բացասաբար է անդրադառնում հանրային բարեկեցության վրա:

Իրավունքի գերակայության հասկացությունը և էությունը: Իրավա-տնտեսագիտական գրականությունն առաջարկում է իրավունքի գերակայության հասկացության զանազան սահմանումներ, որոնցից առավել հայտնիները ներկայացված են ստորև.

- ❖ Վեբստերի (Webster) [6] բառարան. իրավիճակ, որտեղ երկրի օրենքներին ենթարկվում են բոլորը:
- ❖ Օքսֆորդի (Oxford) [7] բառարան. իշխանության կամայականության սահմանափակումը՝ ենթարկելով հստակ որոշված և սահմանված օրենքներին:
- ❖ Իրավունքի գերակայության Ավստրալիայի ինստիտուտ (Rule of Law Institute of Australia) [8]. ժողովուրդը (ներառյալ կառավարությունը) պետք է կառավարվի օրենքի կողմից և ենթարկվի դրան, և օրենքը պետք է լինի այնպիսին, որ ժողովուրդը ունակ լինի հետևելու դրան:

Ի լրացում վերը նշվածի, Համաշխարհային արդարադատության ծրագիրը (World Justice Project) [9] սահմանում է իրավունքի գերակայությունը հիմնված 4 հիմնական հասկացությունների վրա: Դրանք են՝

1. Հաշվետվողականություն. կառավարությունը/պետությունը, ինչպես նաև մասնավոր անձինք հաշվետվողական են օրենքի առաջ:
2. Արդար օրենքներ. օրենքները հստակ են, հրապարակված, կայուն և արդար: Կիրառվում են հավասարապես և պաշտպանում մարդկանց հիմնարար իրավունքները՝ ներառյալ մարդկանց և իրենց ունեցվածքի/սեփականության անվտանգությունը և մարդու այլ հիմնական իրավունքները:
3. Բաց կառավարություն. այն գործընթացները, որոնց միջոցով օրենքները ուժի մեջ են մտնում, կառավարելի են, հասանելի են, արդար են և արդյունավետ:
4. Վեճերի հասանելի և անկողմնակալ լուծում. արդարադատությունը սահմանափակ ժամանակով հանձնվում է իրավասու, մրցունակ և անկախ ներկայացուցիչների, ովքեր ունեն բավարար ռեսուրսներ և ներկայացնում են այն համայնքների շահերը, որոնց ծառայում են:

Այսպիսով, վերոնշյալ սահմանումներից հետևում է, որ իրավունքի գերակայությունը մի կողմից ենթադրում է ողջամիտ և արդարացի օրենսդրական կարգավորումների առկայություն, իսկ մյուս կողմից՝ այդ օրենքների անկողմնակալ և պատշաճ իրացվելիություն: Ստացվում է, որ իրավունքի գերակայության գաղափարը բավական մոտ է սահմանադրականության գաղափարին և նմանօրինակ ազդեցություն ունի երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդավարական զարգացման վրա:

Կոռուպցիայի ազդեցությունը իրավունքի գերակայության մակարդակի վրա: Հաշվի առնելով իրավունքի գերակայության հասկացության <<տարրողունակությունը>> հարց է առաջանում, որո՞նք են կառավարման համակարգային և գործառնական արդյունավետությունը բնորոշող և իրավունքի գերակայության մակարդակը պայմանավորող գործոնները:

Այս հարցին պատասխանելու համար ստորև դիտարկվել են հետևյալ ցուցիչները.

- ❖ Իրավունքի գերակայության համաթիվ (RLI),
- ❖ Կոռուպցիայի ընկալման համաթիվ (CPI),
- ❖ Սեփականության իրավունքի համաթիվ (PRI),
- ❖ Կառավարման արդյունավետության համաթիվ (GEI),
- ❖ Կառավարման հաշվետվողականության համաթիվ (GAI),
- ❖ Կառավարման թափանցիկության համաթիվ (GTI),
- ❖ Իշխանությունների հանդեպ հանրային վստահության համաթիվ (PTPI),
- ❖ Դատական իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվ (JCEI),
- ❖ Օրենսդիր իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվ (LCEI),
- ❖ Իշխանության թևերի տարանջատման համաթիվ (DPI):

Տվյալները ձեռք են բերվել Թրանսփերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի [10] և Համաշխարհային տնտեսական համաժողովի [11] տվյալների շտեմարաններից: Դիտարկվել են 2011-2015 թթ.-ների տվյալները 127 երկրների համար:

Տվյալներում առկա կոռելացիայի մակարդակը անհրաժեշտություն է ստեղծում կատարել գործոնային վերլուծություն՝ մոդելում բազմակոլենարությունը բացառելու և չափողականությունը կրճատելու նպատակով:

Աղյուսակ 1-ում ներկայացված են գործոնային վերլուծության արդյունքները:

Աղյուսակ 1

Գործոնային վերլուծության արդյունքները		
<i>Rotated Component Matrix^a</i>		
	<i>Component</i>	
	1	2
<i>GTI</i>	0.95	
<i>PTPI</i>	0.92	
<i>GAI</i>	0.82	
<i>LCEI</i>		0.91
<i>JCEI</i>		0.88
<i>DPI</i>		0.80

Extraction Method: Principal Component Analysis.
Rotation Method: Varimax with Kaiser Normalization.
a. Rotation converged in 3 iterations.

Ինչպես պարզ է դառնում վերոնշյալ աղյուսակից, կառավարման հաշվետվողականության համաթիվը (GAI), կառավարման թափանցիկության համաթիվը (GTI) և իշխանությունների հանդեպ հանրային վստահության համաթիվը (PTPI) միավորվել են մեկ գործոնում, որն այստեղ կկոչվի կառավարության և հանրության փոխկապվածության գործոն (GSLF): Մյուս կողմից՝ մեկ գործոնում են ներառվել դատական իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվը (JCEI), օրենսդիր իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվը (LCEI) և իշխանության թևերի տարանջատման համաթիվը (DPI), և ստացված գործոնը ներկայացնում է զսպումների և հակակշիռների համակարգը (CBF):

Առկա համաթիվների և ստացված գործոնային փոփոխականների կիրառմամբ կատարվել է ստորև նշված մոդելի գնահատումը՝

$$RLI_{ij} = \beta_0 + \beta_1 * CPI_{ij} + \beta_2 * CBF_{ij} + \beta_3 * PRI_{ij} + \beta_4 * GEI_{ij} + e,$$

որտեղ i -ն երկրի ցուցիչն է, իսկ j -ն՝ տարեթիվը:

Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում և 3-ում:

Աղյուսակ 2

Մոդելի գնահատման արդյունքները (համեմատություն)

Dependent Variable: RLI	M1		M2		M3		M4	
Variables	Coef.	Prob. (t-Stat.)	Coef.	Prob. (t-Stat.)	Coef.	Prob. (t-Stat.)	Coef.	Prob. (t-Stat.)
Const.	-2.0864	0.0000	-1.9677	0.0000	-2.4659	0.0000	-1.5572	0.0000
CPI	0.0474	0.0000	0.0452	0.0000	0.0342	0.0000	0.0203	0.0000
CBF	-	-	0.0826	0.0000	0.1208	0.0000	0.0643	0.0000
PRI	-	-	-	-	0.2337	0.0000	0.1521	0.0000
GEI	-	-	-	-	-	-	0.4322	0.0000
Prob. (F-Stat.)	0.0000		0.0000		0.0000		0.0000	
Adj. R-Squared	0.9104		0.9210		0.9376		0.9571	
Periods	5		5		5		5	
Cross-sections	127		127		127		127	
Total panel obs.	595		595		595		595	

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 2-ից, բոլոր 4 մոդելներում էլ ստացված արդյունքները վիճակագրորեն նշանականակալի են, ունակ և անշեղ: Մասնավորապես, F և t վիճակագրականները ցույց են տալիս մոդելի բացատրող փոփոխականների ստացված գործակիցների զրո լինելու հավանականության բացառումը: 4-րդ մոդելում բացատրող փոփոխականները բացատրում են կախյալ փոփոխականի վարիացիայի 95.7%-ը (*Adjusted R-squared* = 0.9571): Հետագա վերլուծության համար կդիտարկվի վերոնշյալ մոդելներից 4-րդը, քանի որ այդ մոդելում բացատրող փոփոխականները առավելագույն չափով են բացատրում կախյալ փոփոխականի վարիացիան:

Մոդելի գնահատման արդյունքները

<i>Dependent Variable: RLI</i>				
<i>Method: Panel Least Squares</i>				
<i>Sample (adjusted): 2011 2015</i>				
<i>Periods included: 5</i>				
<i>Cross-sections included: 127</i>				
<i>Total panel (unbalanced) observations: 595</i>				
<i>Variables</i>	<i>Coef.</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
<i>CPI</i>	<i>0.0203</i>	<i>0.0013</i>	<i>16.2455</i>	<i>0.0000</i>
<i>CBF</i>	<i>0.0643</i>	<i>0.0105</i>	<i>6.1148</i>	<i>0.0000</i>
<i>PRI</i>	<i>0.1521</i>	<i>0.0164</i>	<i>9.3019</i>	<i>0.0000</i>
<i>GEI</i>	<i>0.4322</i>	<i>0.0268</i>	<i>16.1431</i>	<i>0.0000</i>
<i>Const.</i>	<i>-1.5572</i>	<i>0.0690</i>	<i>-22.5691</i>	<i>0.0000</i>
<i>Effects Specification</i>		<i>Period fixed (dummy variables)</i>		
<i>R-squared</i>	<i>0.9577</i>	<i>Mean dependent var</i>	<i>0.0290</i>	
<i>Adjusted R-squared</i>	<i>0.9571</i>	<i>S.D. dependent var</i>	<i>0.9652</i>	
<i>S.E. of regression</i>	<i>0.1998</i>	<i>Akaike info criterion</i>	<i>-0.3679</i>	
<i>Sum squared resid</i>	<i>23.3946</i>	<i>Schwarz criterion</i>	<i>-0.3015</i>	
<i>Log likelihood</i>	<i>118.4584</i>	<i>Hannan-Quinn criter.</i>	<i>-0.3421</i>	
<i>F-statistic</i>	<i>1659.2417</i>	<i>Durbin-Watson stat</i>	<i>0.2585</i>	
<i>Prob(F-statistic)</i>	<i>0.0000</i>			

Աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ կոռուպցիայի ընկալման համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է իրավունքի գերակայության համաթվի 0,02 միավոր փոփոխության հետ: Սա իրենից ներկայացնում է բավական ուժեղ ազդեցություն, քանի որ 1-ին համաթիվը տատանվում է 0...100 միջակայքում, իսկ 2-րդը՝ -2,5...2,5 միջակայքում: Զսպումների և հակակշիռների գործոնի միավոր փոփոխությունը զուգորդվում է իրավունքի գերակայության համաթվի 0,06 միավոր փոփոխության հետ, սեփականության իրավունքի համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է կախյալ փոփոխականի 0,15 միավոր փոփոխության հետ, իսկ կառավարման արդյունավետության համաթվի միավոր փոփոխությունը իրավունքի գերակայության համաթվի 0,43 միավոր փոփոխության հետ:

Շգրակացություն: Այսպիսով, ստացվում է, որ կոռուպցիան և կառավարման արդյունավետությունը ունեն լայնամասշտաբ ազդեցություն երկրում առկա իրավունքի գերակայության մակարդակի վրա: Ուստի իրավունքի գերակայության որոշակի մակարդակ նպատակադրելու համատեքստում անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել հակակոռուպցիոն ծրագրի արդյունավետ լրամշակմանը, քանի որ վերջինիս օպտիմալ կառավարումը կարող է հանգեցնել երկրում ավելի բարձր օրինավորության մակարդակի և, հետևաբար, հանրային բարեկեցության մակարդակի աճին:

Գրականություն

1. **Տարգսյան Գ.** Некоторые подходы к разработке инструментария и методов реализации конституционной диагностики // Альманах “Конституционное правосудие в новом тысячелетии”. - Ереван, 2016. - С. 78-93.
2. **Harutyunyan, G., Sargsyan, H., and Gevorgyan, R.** Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies // Journal of Advanced Research in Law and Economics.- 2017.- Vol. VIII, Summer, 4(26).- P. 1126 – 1135.
3. <http://www.merriam-webster.com/dictionary/corruption>
4. <http://www.oxforddictionaries.com/definition/english/corruption>
5. <http://www1.worldbank.org/publicsector/anticorrupt/corruptn/cor02.htm#define>
6. <https://www.merriam-webster.com/dictionary/rule%20of%20law>
7. https://en.oxforddictionaries.com/definition/rule_of_law
8. <https://www.ruleoflaw.org.au/what-is-the-rule-of-law/>
9. <https://worldjusticeproject.org/about-us/overview/what-rule-law>
10. <http://transparency.am/hy/cpi>
11. <https://www.weforum.org/>

12.01.2018.

Գ.Օ. Ավետիսյան

ВОЗДЕЙСТВИЕ КОРРУПЦИИ НА УРОВЕНЬ ВЕРХОВЕНСТВА ПРАВА

Рассмотрены сущность и концепция коррупции и верховенства права, а также некоторые факторы, определяющие операционную и системную эффективность управления. Факторный и регрессионный анализы проводятся на основе наблюдаемых показателей. Анализ поможет выявить влияние восприятия коррупции на верховенство права.

Ключевые слова: коррупция, индекс восприятия коррупции, верховенство права, эффективность управления, панельные данные, факторный анализ, эконометрическая оценка.

G.O. Avetisyan

CORRUPTION IMPACT ON THE LEVEL OF RULE OF LAW

The essence and concept of corruption and the rule of law, as well as some factors that determine the operational and systemic effectiveness of governance are considered. Factor and regression analyses are performed based on the observed indicators. Analysis will help to identify the impact of corruption perceptions on the rule of law.

Keywords: corruption, corruption perception index, rule of law, governance efficiency, panel data, factor analysis, econometric evaluation.

Ավետիսյան Գեորգի Օնիկի - ԵՊՀ, Տնտեսագիտության և Կառավարման ֆակուլտետ, ասպիրանտ

Գ.Ռ. Չախոյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Ներկայացվում են ՀՀ սահմանադրականության և միգրացիայի փոխազդեցության միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական մոդելները: Առաջարկվել են նոր մոտեցումներ միկրո մակարդակում միգրացիայի որոշիչները հետազոտելու համար, մասնավորապես մոդելում ներառվել է նոր բաղադրիչ, որն արտահայտում է մարդկանց վերաբերմունքը ինստիտուտների գործունեության արդյունավետության նկատմամբ: Մակրո մակարդակում նոր մոտեցումներն առաջարկում են տարածական ռեգրեսիոն մոդելների կիրառությունը, ինչպես նաև այդ մոդելների շրջանակներում ուսումնասիրվում է ՀՀ համայնքներից արտագաղթի և համայնքների զարգացման մակարդակի միջև կապը:

Առաջադրված թափանչ. սահմանադրականություն, միգրացիա, պատահական օգտակարության առավելագույն մոդել, միգրացիայի գործակից, տարածական ռեգրեսիա:

Պայմանավորված 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին տարբեր ոլորտների գիտնականների և քաղաքական գործիչների կողմից միգրացիոն գործընթացների վերաբերյալ հետաքրքրվածության կտրուկ աճով՝ տվյալ աշխատանքում փորձ է արվել միկրո և մակրո մակարդակով կառուցել սահմանադրականության և միգրացիայի փոխազդեցության տնտեսագիտամաթեմատիկական մոդելները: Սահմանադրականության և միգրացիայի միկրոտնտեսագիտական մոդելը կառուցվում է Շասթադի առաջարկած մարդկային կապիտալի մոդելի հիման վրա [1], իսկ հիմնական ենթադրությունն այն է, որ երկրում սահմանադրականության մակարդակը միգրացիայի հրահրող կամ պահող գործոն կարող է լինել, ընդ որում, սահմանադրականության ազդեցությունը մարդկանց միգրացիոն հակումների վրա ուղղակի և անուղղակի բնույթ կարող է ունենալ:

Դիտարկենք միջազգային միգրացիայի դեպքը: Դիցուք ունենք n քանակությամբ երկիր: Համաձայն Պատահական օգտակարության մաքսիմալիզացիոն մոդելի (անգլ.՝ Random Utility Maximization (RUM) model) [2]՝ j երկրում բնակվող i անհատը t ժամանակահատվածի ընթացքում k երկիր տեղափոխվելիս ստանում է որոշակի օգտակարություն, որը կազմված է երեք կարևոր բաղադրիչից

$$U_{ijkt} = w_{jkt} - c_{jkt} + s_{ijkt}, \quad (1)$$

որտեղ U_{ijkt} -ն միգրացիայի դիմելիս ստացվող օգտակարությունն է, w_{jkt} -ն օգտակարության այն բաղադրիչն է, որը ֆունկցիա է j և k երկրների տարբեր բնութագրերից, c_{jkt} -ն տեղաշարժման ծախսերն են, իսկ s_{ijkt} -ն օգտակարության անհատական-յուրահատուկ ստոխաստիկ բաղադրիչն է:

Անհատը ժամանակի t պահին <<հաշվարկում>> է բոլոր $n - 1$ ուղղություններով տեղաշարժվելու դեպքում իր օգտակարության փոփոխությունները և ընտրում է այն ուղղությունը, որի համար U_{ijkt} ($k = 1, \dots, n - 1$) մեծությունը առավելագույնն է ստացվում: Եթե բոլոր k -երի համար $U_{ijkt} < 0$, ապա նա մնում է իր երկրում:

w_{jkt} -ն երկու երկրների ընձեռած հնարավորությունների տարբերությունն է, օրինակ, երկու երկրներում միջին աշխատավարձերի տարբերությունը, հանրային ծառայությունների որակի տարբերությունները, երկրի ինստիտուցիոնալ որակի տարբերությունները և այլն: Այլ հավասար պայմաններում ենթադրվում է, որ w_{jkt} -ի և անհատի միգրացիոն հակումների միջև առկա է ուղիղ կախվածություն. որքան մեծ են j երկրից k երկիր տեղաշարժվելու դեպքում անհատի բարեկեցությունը բարձրացնելու հնարավորությունները, այնքան նա ավելի է շահագրգռված այդ ուղղությամբ միգրացիայի դիմելու: Սակայն այդ հնարավորություններից օգտվելու ունակությունները տարբերվում են տարբեր մարդկանց մոտ: Օրինակ, եթե այլ հավասար պայմաններում բոլոր երկրներում միջին աշխատավարձի մեծությունները իրար հավասար են, ապա միայն w_{jkt} բաղադրիչի վրա հիմնվելով՝ կարելի է ենթադրել, որ անհատը չի մեկնի իր երկրից: Եթե նաև ենթադրենք, որ j երկրում տղամարդկանց և կանանց միևնույն աշխատանքը կատարելու դեպքում ստացվող աշխատավարձերի միջև առկա է տարբերություն, օրինակ, տղամարդիկ ստանում են միջինում մոտ 20% ավելի բարձր աշխատավարձ, սակայն մնացած երկրներում այդ տարբերությունները բացակայում են, ապա պատկերը փոխվում է, և այժմ, եթե որոշում կայացնողը կին է, ապա այլ հավասար պայմաններում նա կցանկանա մեկնել իր երկրից, իսկ տղամարդը՝ ոչ: Նշված հանգամանքով է պայմանավորված մոդելում անհատական-յուրահատուկ բաղադրիչը s_{ijkt} , ներառելը: Այն պարունակում է տեղեկություն մարդու անհատական առանձնահատկությունների վերաբերյալ՝ սեռ, տարիք, կրթություն, մասնագիտական ունակություններ և այլն: Մոդելում t բաղադրիչի առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ անհատը կարող է մեկից ավել անգամ դիմել միգրացիայի իր ամբողջ կյանքի ընթացքում:

Եթե արտերկրի բոլոր երկրները համարենք մեկ k երկիր, ապա (1) հավասարմանը համարժեք կլինի հետևյալ հավասարումը՝

$$\Pr(Y_i = 1 | X_j, X_k, s_i) = \beta_0 + \beta_1 X_j + \beta_2 X_k + \beta_3 c_{jk} + \beta_4 s_i + \varepsilon_i, \quad (2)$$

որտեղ Y_i -ն միգրացիայի դիմելու որոշումն է (երկու հնարավոր ելքով՝ մեկնել կամ մնալ), որի հավանականությունը կախված է մարդու բնակության երկրի և k արտերկրի բնութագրիչ առանձնահատկություններից՝ X_j և X_k , միգրացիայի ծախսերից՝ c_{jk} , և մարդու անհատական-յուրահատուկ բնութագրերից՝ s_i , իսկ ε_i -ն այն գործոններն են, որոնք չեն ներառվել մոդելում:

Եթե դիտարկվում է միակողմանի միգրացիան, այսինքն՝ միայն j երկրից արտերկիր մեկնելու դեպքը՝ անկախ մեկնելու ուղղությունից, ապա (2) հավասարումը կլինի՝

$$\Pr(Y_i = 1|X, s_i) = \beta_0 + \beta_1 X + \beta_2 s_i + \varepsilon_i, \quad (3)$$

որտեղ $X = X_j$, իսկ մոդելից X_k և c_{jk} փոփոխականները դուրս թողնելու արդյունքում կորուսյալ տեղեկության մի մասը փոխհատուցվում է s_i -ի հաշվին (օրինակ, արտերկրում մոտ բարեկամ կամ ընկեր ունենալու հանգամանքը կարող է փոխարինել միգրացիայի հետ կապված ծախսերի վերաբերյալ փոփոխականին և այլն), մյուս մասն ավելանում է ε_i -ին:

(3) հավասարման տեսքի մոդելներում պետք է մեծ գգուշավորություն ցուցաբերել մեկ հանգամանքի նկատմամբ: Այդ տեսքի միկրոտնտեսագիտական մոդելները գնահատվում են միկրո տվյալների, այսինքն՝ ներկայացուցչական հարցումների օգտագործմամբ, հետևաբար մոդելի X բաղադրիչը, որն ուղարկող երկրի օբյեկտիվորեն չափելի բնութագրիչ առանձնահատկությունն է, իրականում արտահայտվում է երկու գործոնների համատեղման միջոցով: Օրինակ, եթե խոսում ենք երկրում որևէ ինստիտուտի գործունեության արդյունավետության մասին, ապա առաջին գործոնը այդ ինստիտուտի գործունեության արդյունավետության օբյեկտիվ մակարդակն է երկրում, իսկ երկրորդ գործոնը՝ մարդկանց ունեցած կարծիքը առաջին գործոնի վերաբերյալ: Եթե առաջինը անկախ է մարդկանց կամքից և հաստատուն է բոլորի համար, ապա երկրորդը փոփոխվում է մի մարդուց մյուսին անցնելիս: Նշվածը մոդելում արտահայտվում է X -ի տարրալուծմամբ երկու մասի, որոնցից առաջինը բաշխվում է β_0 ազատ անդամի վրա (β_0'), քանի որ նույնն է բոլորի համար, իսկ երկրորդը ավելանում է s_i անհատական-յուրահատուկ որոշիչների շարքին (s_i^a): Արդյունքում վերջնական հավասարումը կլինի՝

$$\Pr(Y_i = 1|s_i, s_i^a) = \beta_0 + \beta_0' + \beta_2 s_i + \beta_3 s_i^a + \varepsilon_i, \quad (4)$$

կամ որ նույնն է՝

$$\Pr(Y_i = 1|s_i, s_i^a) = \beta_0 + \beta_1 s_i + \beta_2 s_i^a + \varepsilon_i: \quad (5)$$

Մեր կողմից արդեն իրականացվել էր (5) հավասարման հիման վրա ՀՀ-ից արտագաղթի որոշիչներին գնահատում՝ օգտագործելով Հետազոտական ռեսուրսերի կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ, անգլ.՝ Caucasus Research Resource Center, CRRC) կողմից 2015թ. անցկացված հարցումների տվյալները [3]: Տվյալների բազայում առկա հարցերը վերաբերում են մարդկանց կյանքի տարբեր ոլորտներին, այդ թվում կան հարցեր, որոնք առնչություն ունեն միգրացիայի հետ: Այդ հարցերից առավել կարևորները չորսն են՝ <<ունե՞ք արդյոք արտերկրում ապրող մոտ բարեկամ>>, <<ունե՞ք արդյոք արտերկրում ապրող մոտ ընկեր>>, <<հետաքրքրվա՞ծ եք արդյոք մշտական միգրացիայի դիմելով>>, <<հետաքրքրվա՞ծ եք արդյոք ժամանակավոր միգրացիայի դիմելով>>: Մյուս կարևոր հարցերը վերաբերում են մարդկանց տարիքին, սեռին, տնային տնտեսությանը (անդամների քանակ, գլխավոր անդամի վերաբերյալ տվյալներ), կրթվածության աստիճանին, զբաղվածությանը, եկամուտներին, ծախսերին և այլն: Մարդկանց նաև այնպիսի հարցեր են տրվում, որոնք փորձում են բացահայտել նրանց ունեցած վերաբերմունքը երկրում ընթացող քաղաքական գործընթացներին և մարդու իրավունքների պաշտպանվածությանը, օրինակ, արդյոք երկրում ընտրությունները արդա՞ր են, ինչքանով է մարդը վստահում տարբեր ինստիտուտներին, ինչքանով է պաշտպանված ազատ խոսելու իրավունքը և այլն: Քանի որ ամբողջ տվյալների բազան կազմված է մարդկանց տրված հարցերին ստացված պատասխաններից, ապա այդ փոփոխականները օբյեկտիվ լինել չեն կարող. դրանք ընդամենը ցույց են տալիս մարդկանց սուբյեկտիվ կարծիքը: Իհարկե, այդ հարցերի մեջ ոչ մի ակնարկ չկա երկրում սահմանադրականության մակարդակի մասին, սակայն մեր կարծիքով այնպիսի հարցերը, ինչպիսիք են <<ինչքանո՞վ եք վստահում երկրի նախագահին, կառավարությանը, ազգային ժողովին, դատական համակարգին>>, <<ինչքանո՞վ են պաշտպանված մարդու իրավունքները>> և նման մյուս հարցերը կարող են բավականին լավ մոտարկում հանդիսանալ <<սահմանադրականության մակարդակ>> փոփոխականի համար: Մյուս կողմից՝ սահմանադրականության մակարդակը ինտեգրալ ցուցանիշ է [4], որը կառուցվում է ժողովրդավարական, քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական ցուցանիշների հիման վրա: Հետևաբար մեր մոդելում s_i^a -ը կարող ենք ընդունել որպես վեկտոր, որի տարրերը կազմված են սահմանադրականության մակարդակի հիմքը հանդիսացող փոփոխականներից:

Միգրացիայի որոշիչների գնահատման՝ մեր կողմից առաջարկված այս մոտեցումը կարող է հիմք հանդիսանալ հետագա հետազոտությունների համար, որոնցում կենտրոնական հարցը միգրացիայի դիմելու որոշման կախվածությունն է մարդկանց անհատական-յուրահատուկ բնութագրիչներից, և խնդիրը լուծելու համար առկա են լացուցիչ տվյալների բազաներ, որոնցում այդ բնութագրիչները ավելի հստակ են արտահայտված: Սահմանադրականության և միգրացիայի փոխազդեցության **մակրոտնտեսագիտական** մոդելում դիտարկվում են ՀՀ համայնքներից ներքին՝ դեպի այլ համայնքներ և Երևան, և արտաքին՝ դեպի արտերկիր, միգրացիոն հոսքերը: Այն կառուցվում է միկրոտնտեսագիտական մոդելի հիմքի վրա:

Դիցուք N_{jt} -ն t ժամանակահատվածի սկզբում j երկրում ապրող մարդկանց քանակն է, իսկ m_{jkt} -ն՝ t ժամանակահատվածում j երկրից k երկիր տեղաշարժողների քանակը: Եթե $M_{jkt} \in [0,1]$ -ով նշանակենք j երկրից k տեղափոխվածների մասնաբաժինը j երկրի բնակչության մեջ, ապա՝

$$m_{jkt} = M_{jkt} N_{jt} \quad (6)$$

(6) հավասարման մեջ M_{jkt} բաղադրիչի սպասվող արժեքը դուրս բերելու համար կիրառվենք պատահական օգտակարության մաքսիմալացման մոդելի վրա: Չ. Գրոգերը և Գ. Հանսոնը ենթադրում են, որ (1) հավասարման մեջ s_{ijkt} բաղադրիչը՝ օգտակարության անհատական-յուրահատուկ ստոխաստիկ բաղադրիչը, ունի ՄաքՖադենի կողմից առաջարկված անկախ և միևնույն ձևով բաշխված էքստրեմալ արժեքով տիպ-1 բաշխում [5] (անգլ.՝ independent and identically distributed Extreme Value Type-1 distribution) [6]: Մ. Բայնեն, Ս. Բերտոլին և Խ. Մորազան, հիմնվելով այդ ենթադրության վրա, առաջարկում են i անհատի կողմից k երկիրը ընտրելու հավանականությունը ներկայացնել հետևյալ բանաձևով [2]՝

$$E(M_{jkt}) = \frac{e^{w_{jkt} - c_{jlt}}}{\sum_l w_{jlt} - c_{jlt}}, \quad (7)$$

որտեղ w_{jkt} -ն օգտակարության այն բաղադրիչն է, որը ֆունկցիա է j և k երկրների տարբեր բնութագրերից, c_{jlt} -ն տեղաշարժման ծախսերն են, իսկ l ($l = 1, \dots, n-1$)-ը միգրանտին հասանելի երկրներն են:

Այսպիսով, j երկրից k երկիր սպասվող համախառն միգրացիոն հոսքը կլինի՝

$$E(m_{jkt}) = \frac{e^{w_{jkt} - c_{jlt}}}{\sum_l w_{jlt} - c_{jlt}} N_{jt} \quad (8)$$

կամ

$$E(m_{jkt}) = \phi_{jkt} \frac{y_{jkt}}{\Omega_{jt}} N_{jt}, \quad (9)$$

որտեղ $\phi_{jkt} = e^{-c_{jkt}}$, $y_{jkt} = e^{w_{jkt}}$ և $\Omega_{jt} = \sum_l w_{jlt} - c_{jlt}$:

Ըստ մոդելի վարկերի երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակը ստանալուց հետո ժամանակն է հաշվարկել ըստ մոդելի հաշվարկված միջնորդության եւ առկա միջնորդության ցուցանիշի տարբերությունը՝ «ճեղքվածքը»: Սա հատկապես կարեւոր է մակրոպրոդեցնիալ քաղաքականության տեսանկյունից, քանի որ հակացիկլային բուֆերները սահմանվում են՝ հաշվի առնելով միջնորդության՝ հավասարակշիռ մակարդակի նկատմամբ ունեցած շեղումները: Բազելյան կոմիտեն առաջարկել է այդ ճեղքվածքի հաշվարկման պարզ մեթոդաբանություն՝ Հոդրիկ-Պրեսկոտ միակողմանի ֆիլտրը: ARDL մոդելով գնահատված երկարաժամկետ տրենդը այլընտրանք է այդ մոտեցմանը: ARDL մոդելով գնահատված տրենդը (Նկ. 1), ըստ էության ոչ այլ ինչ է, քան փոքրագույն քառակուսիների գնահատական, որի պարագայում մեթոդը ձգտում է առկա շարքի եւ գնահատված արժեքների միջև տարբերությունը հասցնել զրոյի. հենց սրանով է բացատրվում ARDL մոդելով գնահատված տրենդի եւ առկա միջնորդության մակարդակի մոտ լինելը:



Նկ. 1. ՀՀ միջնորդության մակարդակի եւ ARDL մոդելով գնահատված տրենդի համեմատությունը

Հետաքրքրություն է ներկայացնում նաեւ այն հարցը, թե երբ պետք է սահմանվի կապիտալի հակացիկլային բուֆերը [4]: Նկ. 2-ից կարելի է նկատել, որ բուֆերը պետք է սահմանվեր 2007թ. երրորդ եռամսյակում (ճեղքվածքը մեծ է 2%-ից): Այլ մեթոդով գնահատված ճեղքվածքի միջոցով կապիտալի հակացիկլային բուֆերի չափը սահմանելիս կարող է անհրաժեշտություն առաջանալ Բազելյան կոմիտեի կողմից սահմանված 2-10% միջակայքը վերանայելու անհրաժեշտություն, քանի որ

ճեղքվածքի 2-10% միջակայքը սահմանվել է HP միակողմանի ֆիլտրով գնահատված ճեղքվածքի համար, եւ կարող է ճիշտ չլինել այլ մեթոդներով գնահատված ճեղքվածքների համար:



Նկ. 2. ARDL մոդելով գնահատված ճեղքվածքը

Եզրակացություն: Այսպիսով, կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ, չնայած ՀՀ ֆինանսական ոլորտում մի շարք հիմնարար հատկանիշների դրական փոփոխություններին (վարկային ռեզիստի ներդրում, վարկերի ժամկետայնության աճ եւ այլն), նախքան 2009թ. ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամը, ՀՀ վարկավորման շուկայում առկա է եղել «գերտաքացում», այսինքն վարկավորման մակարդակը շեղվել է տնտեսության հիմնարար կարողություններով նախորոշված մակարդակից:

Գրականություն

1. **Buncic D., Melecky M.** Equilibrium Credit: the Reference Point for Macroprudential Supervisors. -Universitat St. Gallen, 2014. Discussion Paper no. 2013-01.
 2. **Kelly R., McQuinn K., Stuart R.** Exploring the Steady State Relationship Between Credit and GDP for a Small Open Economy: The Case of Ireland, 2013.
 3. **Pesaran H., Shin Y.** An Autoregressive Distributed Lag Modelling Approach to Cointegration Analysis.- 1999.
 4. **Basel Committee on Banking Supervision.** Countercyclical capital buffer proposal: Consultative Document. - July 2010.
- 13.03.2018.

А.Г. Кечечян

ОЦЕНКА ОПТИМАЛЬНОГО УРОВНЯ ФИНАНСОВОГО ПОСРЕДНИЧЕСТВА ДЛЯ ЭКОНОМИКИ РА

Делается попытка проанализировать, соответствует ли существующий кредитный портфель (долговое бремя в экономике) текущему уровню доходов и не приведет ли будущий рост кредитного портфеля к дополнительным рискам в экономике. Чтобы ответить на этот вопрос, предлагается методология, которая позволяет оценить оптимальный уровень долгосрочного долга в экономике. Результаты исследования могут быть полезны и применимы при распознавании рисков в индустрии кредитования, разработке и внедрении новых инструментов политики.

Ключевые слова: кредитный портфель, долгосрочный тренд, кредитный риск, кредиты/ валовой национальный продукт.

A.H. Ketshtshyan

ESTIMATION OF OPTIMAL LEVEL OF FINANCIAL INTERMEDIATION FOR THE ECONOMY OF RA

An attempt is made to analyze whether the existing loan portfolio (debt burden in the economy) corresponds to the current level of income and if the future growth of the loan portfolio will not lead to additional risks in the economy. To answer that question a methodology is proposed, which allows to evaluate the long-term steady-state debt burden of the economy. The results of the study can be useful and applicable for risk recognition in the crediting industry and for the development and implementation of new policy tools.

Keywords: credit portfolio, long-term trend, credit risk, loans/gross domestic product.

Քեճեճյան Անահիտ Հրաչյայի – ԵՊՀ ասպիրանտ

Մ.Թ. Մխիթարյան

ՄՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԴԻԱԳՐԱՄԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ

Մշակվել է սննդի արտադրության կազմակերպությունների ներքին ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնող համակարգ: Վերջինիս հիմնական առանձնահատկությունն այն է, որ հաշվի առնելով սննդի կազմակերպություններին հատուկ անթույլատրելի ռիսկերի բարձր մակարդակը, կապված բնակչության կյանքին և առողջությանը վնաս հասցնելու հետ՝ առաջադրում է դիագրամային մոդել, ինչը հնարավորություն է տալիս տարանջատել և հնարավորինս արդյունավետ կառավարել անթույլատրելի ռիսկերը:

Առանցքային բառեր. անթույլատրելի և թույլատրելի ռիսկեր, սննդի արտադրություն, կառավարման արդյունավետություն, կրիտիկական կետեր, մոնիտորինգ, ինքնաապահովագրում, հեջավորում, դիվերսիֆիկացում:

Ներածություն. Մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտ լի է ռիսկերով, որոնք սպառնում են ձախողել բնականոն գործունեության ընթացքը և արդյունքը: Վերոնշյալից զերծ չէ նաև ձեռնարկատիրական գործունեությունը, որը մարդկային գործունեության այն եզակի ոլորտներից է, որտեղ նպատակներն ու արդյունքները շոշափելի ու գնահատելի են, կորուստները՝ նույնպես: Հենց այդ նպատակների ու իրականության միջև եղած շեղումն էլ պայմանավորված է ռիսկերի կառավարման արդյունավետությամբ: Ստացվում է, որ ձեռնարկատիրական գործունեության արդյունավետությունը ուղիղ համեմատականության մեջ է ռիսկերի կառավարման արդյունավետությանը: Այսպիսով, մրցունակ ձեռնարկության հաջողության գրավականը ռիսկերի կառավարման ճիշտ քայլերի մշակումն ու իրականացումն է: Կան ռիսկեր, որոնք սպառնում են աշխարհում գործող գրեթե բոլոր ձեռնարկություններին (օրինակ՝ նավթի գների թանկացումը), ռիսկեր, որոնք ազդում են տվյալ երկրում գործող ձեռնարկությունների վրա (օրինակ՝ անբարենպաստ ֆինանսական շուկան կամ հարկային համակարգը), ռիսկեր, որոնք հատուկ են տնտեսության տվյալ ճյուղին կամ ենթաճյուղին և այլն: Նույն տրամաբանությամբ կան նաև ռիսկեր, որոնք հատուկ են հենց սննդի արտադրության կազմակերպություններին: Առհասարակ, սննդի արտադրությունը անմիջականորեն կապված է մարդու կյանքի և առողջության հետ, հետևաբար այս ոլորտին սպառնացող ռիսկերը պետք է լինեն ոչ միայն ձեռնարկությունների, այլև պետության ուշադրության կենտրոնում:

ՀՀ-ում սննդամթերքի շուկան աճի միտումներ ունեցող ճյուղերից է, և նրա հետագա աճի ու զարգացման կարևոր նախապայմաններից մեկը ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացումն է: Մինչդեռ, ուսումնասիրությունները վկայում են ձեռնարկությունների մեծ մասում ռիսկերի կառավարման հստակ կանոնների ու քայլերի բացակայության մասին: Հաճախ ձեռներեցները նույնիսկ պատկերացում չունեն՝ ձեռնարկատիրական ռիսկերի մինչև որ մակարդակը կարելի է համարել թույլատրելի, որ մակարդակից՝ ոչ, ինչպիսի միջոցառումներ պետք է ձեռնարկել այս կամ այն ռիսկի ի հայտ գալու դեպքում և այլն: Կախված այն հանգամանքից, որ սննդի արտադրության կազմակերպություններում ներդրված չէ «ռիսկերի կառավարման մշակույթը»՝ կապված բարձր մասնագիտացում ունեցող աշխատողների, փորձագետների, համակարգչային բարդ ծրագրերի իմացության և այդ ամենի իրականացման համար անհրաժեշտ մեծ ֆինանսական միջոցների անհրաժեշտությամբ՝ փորձ է արվել մշակել ռիսկերի կառավարման հնարավորինս պարզ համակարգ, որը կարող է ներդրվել սննդի արտադրության ձեռնարկությունների կողմից և պրակտիկորեն կիրառվել: Ռիսկերի կառավարման առաջադրված մոտեցումը ձեռներեցին հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն առանձնացնել անթույլատրելի ռիսկերը թույլատրելիից և կազմակերպել դրանց կառավարումն ըստ կարևորության, ինչի արդյունքում ռիսկերի կառավարումը դառնում է ավելի արդյունավետ և հնարավորինս բացառում հասարակության առողջությանը սպառնացող վտանգները:

Ռիսկերի կառավարման համակարգի մեթոդաբանությունը. Ուսումնասիրված գրականության [1-5] քննական վերլուծության արդյունքում հեղինակի կողմից առաջադրվել է ռիսկերի կառավարման

հետևյալ, առավել ամբողջական փուլային հաջորդականությունը և յուրաքանչյուր փուլին հատուկ գործելակարգը՝

1. ռիսկերի կառավարման պլանավորում,
2. նպատակների սահմանում,
3. ռիսկակիր օբյեկտների և նրան սպառնացող վտանգների սահմանում (ռիսկի ախտորոշում)
4. ռիսկերի ի հայտ գալու հավանականության և հետևանքների գնահատում ու վարկանշում ըստ թույլատրելի (I խումբ) և անթույլատրելի (II խումբ) խմբերի,
5. ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացում ըստ I և II խմբերի՝
 - 5.1. թույլատրելի ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատում և նվազեցման գործիքակազմի ընտրություն,
 - 5.2. անթույլատրելի ռիսկերի կրիտիկական սահմանների գնահատում և դրանց պահպանման միջոցառումների իրականացում:
6. ռիսկերի կառավարման մոնիտորինգ:

Եվ այսպես, առաջին փուլում առաջարկվում է իրականացնել ռիսկերի կառավարման պլանավորումը, այն է՝ ռիսկերի կառավարման մոտեցումների և սկզբունքների ընտրության գործընթացը՝ կառավարման սխեմայի մշակում, կադրային ապահովում և կառավարման պլանավորման համար անհրաժեշտ այլ գործընթացների իրականացում:

Առաջարկվում է սննդի արտադրության ձեռնարկությունը դիտարկել որպես գործունեության հետևյալ ենթատեսակների ամբողջություն՝

- արտադրություն,
- ֆինանսական գործունեություն,
- մարքեթինգ,
- կորպորատիվ կառավարում:

Նախ՝ ձեռնարկությունում պետք է բացվի ռիսկերի կառավարման բաժին, որը պետք է գլխավորվի ռիսկ-մենեջերի կողմից: Այս բաժինը պետք է համաձայնեցնի իր գործունեությունը վերոնշյալ 4 բաժինների հետ՝ կապված անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքմամբ և վերլուծությամբ: Ռիսկերի կառավարման բաժինը պետք է ենթարկվի տնտեսական և ֆինանսական գծով ղեկավարներին: Ռիսկ-մենեջերի գլխավոր գործառնությունը պետք է լինի ռիսկերի կառավարման առաջարկված ընթացակարգերի մշակումն ու գործարկումը:

Առաջարկվում է յուրաքանչյուր բաժնում ընտրել մեկ աշխատող, ով պատասխանատու կլինի ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքման և վերլուծության համար: Վերջինս գործառնաբար պետք է ենթարկվի ռիսկ-մենեջերին, իսկ վարչական մասով՝ տվյալ բաժնի ղեկավարին:

Պատրաստված և փորձառու աշխատողների առկայությունը ռիսկերի արդյունավետ կառավարման գրավականներից մեկն է: Հաշվի առնելով ՀՀ-ում սննդի արտադրության կազմակերպությունների մեծամասնությունում սահմանափակ միջոցների հանգամանքը, ինչպես նաև վերջիններիս համար «ռիսկ-մենեջմենթ» մշակույթի խորթությունը՝ առաջարկվում է ռիսկի կառավարումն իրականացնել՝ չներգրավելով նոր աշխատողներ, փոխարենը՝ վերապատրաստելով արդեն իսկ աշխատող կադրերին ձեռնարկության սահմաններում անցկացվելիք բիզնես-վերապատրաստումների միջոցով: Վերջինս կազմակերպված և պարբերաբար իրականացվող ուսուցում է՝ ուղղված աշխատողների մոտ որոշակի որակների ձևավորմանը, որն անհրաժեշտ է սահմանված աշխատանքը հնարավորինս արդյունավետ իրականացնելու համար: Որպես վերապատրաստման օբյեկտ պետք է հանդիսանա ոչ թե մարդը, այլ այն գործունեությունը, որով նա զբաղվում է: Բիզնես-վերապատրաստումները կարող են իրականացվել թե՛ ժամանակ առ ժամանակ հրավիրվող համապատասխան մասնագետների կողմից, թե՛ ռիսկ-մենեջերի և բաժինների գլխավոր մասնագետների կողմից: Այս փուլի որակն ու ընդգրկվածությունը սերտորեն պայմանավորված է գործունեության մեջ ներգրավված կապիտալի մեծությամբ, ձեռնարկատիրոջ անհատական հատկանիշներով, գործելաոճով և այլն:

Ռիսկերի կառավարման մյուս փուլը նպատակների սահմանումն է: Սա այն փուլն է, որում ձեռ-ներեցը պետք է հստակ պատկերացում կազմի ձեռնարկատիրական գործունեությունից իր սպասելիք-ների մասին և ըստ այդմ փորձի հետագա գործունեությունը համապատասխանեցնել այդ սպասելիք-ներին կամ դրա գերակատարմանը: Նպատակներին համապատասխան ձեռնարկության ղեկավարի


կողմից սահմանվում է ձեռնարկության ռազմավարությունը: Վերջինիս համապատասխան էլ ձևավորվում են ենթաբաժինների ու առանձին աշխատակիցների նպատակներն ու գործառնությունները:

Ելնելով նախորդ փուլի շարունակական տրամաբանությունից՝ այս փուլի նպատակը բոլոր այն իրավիճակների բացահայտումն ու սահմանումն է, որոնք կարող են սպառնալ նախորդ փուլում սահմանված նպատակների և գործառնությունների իրականացմանը: Այս փուլը կարելի է անվանել նաև «Ռիսկի ախտորոշում»: «Ռիսկի ախտորոշումն» առաջարկվում է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ՝

- ռիսկակիր օբյեկտի հստակեցում,
- նրան սպառնացող հնարավոր վտանգների և դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:

Վերոնշյալը կարող է իրականացվել որակական գնահատման տարբեր մեթոդների օգտագործմամբ: Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն ռիսկերի որակական գնահատման մի շարք մեթոդներ՝ պարզ կիրառելիից մինչև շատ բարդ և ծախսատար: Կատարվել է գոյություն ունեցող մեթոդների առանձնահատկությունների ուսումնասիրություն և դրա հիման վրա առաջարկվել սխեմա, որում ներկայացված է, թե առկա մեթոդների բազմազանությունից ձեռնարկատիրական գործունեության նախանշված ստորաբաժանումներում ինչ մեթոդ պետք է կիրառել ռիսկերի որակական վերլուծության համար:

Ռիսկային օբյեկտների հստակեցման նպատակով օգտագործվում է հարցաթերթիկների մեթոդը: Նրա գլխավոր առավելություններից մեկն այն է, որ այն կիրառելու առումով շատ պարզ է և կարող է հանդիսանալ ռիսկերի ախտորոշման համար անհրաժեշտ տեղեկատվության մեծ աղբյուր: Հարցերի ճիշտ կազմման դեպքում վերջինիս կարող են պատասխանել ռիսկերից նույնիսկ գաղափար չունեցող աշխատակիցները:



Նկ. 1. Գործունեության յուրաքանչյուր ոլորտում «Ռիսկերի ախտորոշման» համար կիրառվելիք մեթոդների սխեմա

Ըստ այս մեթոդի, բոլոր աշխատակիցներին տրվում են հարցաթերթիկներ, որոնք պետք է պարունակեն հետևյալ բովանդակությամբ հարցերը՝

- Ի՞նչ օբյեկտների են սպառնում ռիսկային գործոններ,
- Ինչու՞ են սպառնում ռիսկային գործոններ:

Բնական է, որ յուրաքանչյուր աշխատակից նշում է այն օբյեկտները, որոնց հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն պայմանավորված են իրեն վերապահված գործառնությունները:

Այնուհետև «ուղեղների գրոհի» մեթոդի միջոցով հարցաթերթիկներում նշված օբյեկտներից ընտրվում են նրանք, որոնք ըստ քննարկման արդյունքների ավելի հիմնավորված են, իրատեսական և առավել հաճախ են կրկնվել հարցաթերթիկներում: Եվ շատ կարևոր է արդյունքների օբյեկտիվության նպատակով պահպանել լրացման «անոնիմությունը»:

«Ուղեղների գրոհի» արդյունքում ընտրված օբյեկտներին սպառնացող հնարավոր վտանգների և դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով իրականացվում է մյուս հարցումը, որը պետք է ունենա հետևյալ բովանդակությունը՝

- Ի՞նչ վտանգներ են սպառնում տվյալ օբյեկտին,
- Ինչու՞ :

Վերջինիս արդյունքները նախորդի պես գեներացվում են «ուղեղների գրոհի» միջոցով և մնում են այն տարբերակները, որոնք ըստ քննարկման պետք է լինեն ուշադրության կենտրոնում: «Ուղեղների գրոհի» հիմնական մասնակցները պետք է լինեն ղեկավարության անդամները, ռիսկ-մենեջերը և անհրաժեշտության դեպքում՝ բաժնի պատասխանատուները: Ելնելով ձեռնարկության հնարավորություններից ու նպատակներից, անհրաժեշտության դեպքում կարող են մասնակցել նաև հրավիրված փորձագետներ: Այս գործընթացի արդյունքում բացահայտվում են այն ռիսկերը, որոնք հատուկ են տվյալ ձեռնարկատիրական գործունեությանը և հերքվում նրանք, որոնք չեն սպառնում վերջինիս:

Զորորդ փուլի գլխավոր նախապայմանը պետք է լինի ձեռնարկությանը հասանելի տեղեկատվական բազայի հուսալիության գնահատումը: Վերջինս պետք է գնահատվի՝ ելնելով ինչպես տեղեկատվության լիարժեքությունից, այնպես էլ տեղեկատվության հավաստիությունից և արդիականությունից: Ըստ այդմ տեղեկատվական բազան պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- հավաստի տեղեկատվական բազա. երբ ռիսկային իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունն առկա է և հավաստի: Որպես այդպիսին կարող են ծառայել արտադրական գործընթացի արդյունքները, հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, աուդիտի արդյունքները և այլն,

- մասամբ հավաստի տեղեկատվական բազա. ինֆորմացիայի աղբյուր են ծառայում մարքեթինգային հետազոտության արդյունքները, ղեկավարի անձնական փորձը, նախկինում նմանատիպ իրավիճակների հաճախականությունը և այլն,

- ոչ հավաստի տեղեկատվական բազա. երբ ռիսկային իրավիճակի ի հայտ գալու հետ կապված տեղեկատվությունը բացակայում է, և գնահատականները տրվում են համապատասխան մասնագետների եզրակացությունների հիման վրա:

Ելնելով ռիսկի տեսակից, տեղեկատվական բազայի ամբողջականությունից և հավաստիությունից, ռիսկ-մենեջերի մասնագիտացման մակարդակից, տեխնիկական և ծրագրային ապահովվածության մակարդակից՝ ռիսկերը լինում են՝

- հայտնի. հայտնի են առաջացման գործոններն ու անհրաժեշտ տեղեկատվությունը, հետևաբար ռիսկերի ի հայտ գալու հավանականությունն ու կորուստները հնարավոր է գնահատել մեծ ճշգրտությամբ,

- մասամբ կանխատեսելի. նման ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը հիմնված է փորձի վրա: Հետևաբար, համապատասխան նախագծերի ու օպերացիաների հետ կապված որոշումների կայացումը, որպես կանոն, կատարվում է մասնակի անորոշության պայմաններում,

- անկանխատեսելի. ռիսկային գործոնների վերաբերյալ տվյալները բացակայում են կամ շատ քիչ են (օրինակ՝ քաղաքական իրավիճակի փոփոխություն, փոփոխություն բանկային քաղաքականության մեջ և այլն) և որոշումները կայացվում են կատարյալ անորոշության պայմաններում:

Պետք է նշել, որ վարկանշման արդյունքներից կախված, տարբեր են նաև ռիսկերի գնահատման ցուցանիշները: Հայտնի ռիսկերի պարագայում ռիսկերի գնահատման ցուցանիշները լինում են բացարձակ (արժեքային, բնեղեն), հարաբերական (տոկոս, գործակից) և միջին: Մասնակի անորոշության պարագայում՝ հավանական և վիճակագրական, լրիվ անորոշության պարագայում՝ փորձագիտական:

Առանձին ռիսկային իրավիճակի համար միավորներով գնահատումը կատարվում է հետևյալ

կերպ. նախ՝ կատարվում է ախտադրման հետևանքների և ղեկավար մարմինների՝ i-րդ ռիսկի ի հայտ գալու հավանականության գնահատում՝ տոկոսային արտահայտությամբ: Այնուհետև կատարվում է գնահատված արդյունքների միջինացում միջին թվաբանականի մեթոդով՝

$$R_i = \frac{\sum_{j=1}^n R_{ij}}{n}, \quad (1)$$

որտեղ՝ R_i -ն i-րդ ռիսկային իրավիճակի ի հայտ գալու հավանականությունն է, n-ը հարցման մասնակիցների քանակը, R_{ij} -ն j-րդ մասնակցի գնահատականն է i-րդ ռիսկային իրավիճակի ի հայտ գալու վերաբերյալ: Հաշվարկն առանձին-առանձին կատարվում է աշխատողների և ղեկավար մարմինների արդյունքներով, որից հետո վերջիններս միջինացվում են՝

$$R_i = \frac{R_{i1} + R_{i2}}{2}, \quad (2)$$

որտեղ՝ R_i -ն i-րդ ռիսկային իրավիճակի ի հայտ գալու վերջնական ցուցանիշն է, R_{i1} -ը i-րդ իրավիճակի ի հայտ գալու միջինացված ցուցանիշն է ըստ աշխատակիցների, R_{i2} -ը i-րդ իրավիճակի ի հայտ գալու միջինացված ցուցանիշն է ըստ ղեկավարության անդամների:

Ռիսկային յուրաքանչյուր իրավիճակի համար ստացված տոկոսային գնահատականը վերածվում է միավորային ըստ աղյուսակ 1-ում ներկայացված կարգի՝

Աղյուսակ 1

<i>Ռիսկային իրավիճակի ի հայտ գալու հավանականությունը</i>				
Միավոր	$R_i < 25\%$	$25\% < R_i < 50\%$	$50\% < R_i < 75\%$	$75\% < R_i$
	1	2	3	4
Ի հայտ գալու հավանականություն	զրոյական	փոքր	միջին	բարձր

Բացասական ֆինանսական հետևանքների գնահատումը ենթադրում է որոշել՝ որքան կկազմեն ֆինանսական կորուստները i-րդ իրավիճակի հանդեպ գալու դեպքում: Դա գնահատելուց հետո, ռիսկային յուրաքանչյուր իրավիճակի հնարավոր բացասական ֆինանսական հետևանքները համեմատվում են սպասվելիք շահույթի, հատույթի և սեփական կապիտալի հետ և ըստ այդմ էլ կատարվում է միավորներով գնահատում աղյուսակ 2-ում ներկայացված համապատասխանությամբ՝

Աղյուսակ 2

<i>Ռիսկային իրավիճակի ի հայտ գալու հետևանքները</i>				
Միավոր	$C_i < \text{շահույթ}$	$C_i \leq \text{շահույթ}$	$\text{Շահույթ} < C_i \leq \text{հատույթ}$	$\text{Հատույթ} < C_i$, սեփական կապիտալ $\leq C_i$
	1	2	3	4
Ըստ հետևանքների	ոչ ռիսկային	թույլատրելի	կրիտիկական	կատաստրոֆիկ

C_i -ը i-րդ ռիսկային իրավիճակի ի հայտ գալու հետևանքով հնարավոր կորուստն է: Բոլոր ռիսկային իրավիճակները ըստ ի հայտ գալու հավանականության և ըստ հետևանքների գնահատելուց հետո կատարվում է վերջիններիս վարկանշում ըստ նկ.2-ում ներկայացված դիագրամի:

Ելնելով հետևյալ դիագրամի արդյունքներից՝ կատարվում է ռիսկերի դասակարգում 2 մեծ խմբի՝ թույլատրելի և անթույլատրելի:


Գրաֆիկից երևում է, որ անթույլատրելի խմբի մեջ մտնում են առավել հավանական ու մեծ կորուստներ հետապնդող ռիսկերը: Վերջիններս, որպես կանոն, օրենսդրական պահանջներին հակասող իրավիճակներն են՝ պայմանավորված հասարակության անվտանգությանն ու առողջությանը վնաս հասցնելու հանգամանքով:

Այս փուլում հեղինակի կողմից ճիշտ է համարվում թույլատրելի և անթույլատրելի ռիսկերի հետագա կառավարման տարբերակված մոտեցումը, համաձայն որի թույլատրելի ռիսկերի գծով նախատեսվում է իրականացնել այնպիսի միջոցառումների խումբ, ինչպիսիք են կառավարման արդյունավետության գնահատումը և համապատասխան մեթոդների կիրառումը ռիսկերի նվազեցման կամ վերացման նպատակով: Անթույլատրելի ռիսկերի հետագա կառավարումն իրականացվում է այլ ուղիով, այն է՝ կրիտիկական կետերի սահմանում և դրանց համապատասխանության նկատմամբ մոնիտորինգի իրականացումը: Ըստ էության, սա կառավարման առումով ոչ մի բարդություն չի ստեղծում, և այս երկու խմբերի հետագա կառավարումը կարելի է իրականացնել զուգահեռաբար:

Եվ այսպես, 5.1 փուլում նախատեսվում է իրականացնել թույլատրելի ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատում, այսինքն՝ պարզել՝ որքանով են ներդրված ջանքերն արդարացվում: Դա կարելի է հաշվարկել՝ ելնելով հետևյալ տրամաբանությունից. եթե i-րդ ռիսկի ի

հայտ գալու հավանականությունը տոկոսային արտահայտությամբ R_i է, իսկ դրա 100% ի հայտ գալու դեպքում կրած կորուստները՝ C_i , ապա i -որ ռիսկային իրավիճակի հանդես գալու կորուստը կլինի՝

$$P = R_i \times C_i / 100: \quad (3)$$




Նկ. 2. Ռիսկերի վարկանշում ըստ ռիսկային իրավիճակի ի հայտ գալու և հետևանքների

Եթե K_i -ով նշանակենք i -րդ ռիսկային իրավիճակի կանխման կամ նվազեցման համար անհրաժեշտ ծախսումները, իսկ T -ով կառավարելիության աստիճանը, ապա i -որ ռիսկային իրավիճակի կառավարման ծախսումները կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով՝

$$H = T \times K_i / 100: \quad (4)$$

Բանաձևում T -ն ցույց է տալիս, թե K_i ծախսումների դեպքում քանի տոկոսով է հավանական վերացնել տվյալ ռիսկը: Ենթադրենք, եթե $T=100$, դա նշանակում է, որ K_i ծախսումներ կատարելով 100%-ով վերացվում է i -րդ ռիսկի ի հայտ գալու հավանականությունը:



Նկ. 3. Ռիսկերի կառավարման արդյունավետությունից և ի հայտ գալու հետևանքներից կախված՝ նվազեցման գործիքակազմի ընտրությունը

i -րդ ռիսկի կառավարման արդյունավետության գործակիցը կորոշվի հետևյալ կերպ՝

$$E = P/H, \quad (5)$$

որտեղ՝ եթե $E > 1$, ապա ռիսկի կառավարումն արդյունավետ է, եթե $E \leq 1$ ՝ ոչ: Ելնելով ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատականից և ռիսկերի ի հայտ գալու կորստից՝ իրականացվում է ռիսկային գործոնների վերացման կամ նվազեցմանն ուղղված մեթոդի ընտրությունն ու կիրառումը, որի համար առաջարկվում է կիրառել գծապատկեր 3-ում ներկայացված մատրիցը:

Զուգահեռաբար 5.2 փուլով իրականացվում է ռիսկերի կրիտիկական կետերի սահմանում: Կրիտիկական կետերը սահմանվում են՝ ելնելով օրենսդրական նորմատիվ պահանջներից և ձեռնարկության սահմանած անհատական նորմերից և ներկայացվում աղյուսակ 3-ի տեսքով:

Աղյուսակ 3

Կրիտիկական կետերի սահմանում			
Գործընթացի անվանումը	Կրիտիկական վերահսկողության կետ №	Ռիսկային իրավիճակի բովանդակություն	Վերահսկողության գործիքներ
	1		
	2		
	-		
	i		

Հաջորդ քայլով կատարվում է յուրաքանչյուր ռիսկային իրավիճակի վերահսկողության ու վերացման միջոցառումների սահմանում, որը ներկայացված է աղյուսակ 4-ի տեսքով:

Աղյուսակ 4

Ռիսկերի վերացման պլանավորում:

Կրիտիկական վերահսկողության կետ №	Կրիտիկական սահմանները	Նվազեցման կամ վերացման նպատակաուղղված քայլեր
1		
2		
-		
i		

Յուրաքանչյուր ռիսկային իրավիճակի համար վերահսկողության գործընթացը մշակվում է՝ վեջինիս և նրա ի հայտ գալու փուլի առանձնահատկություններից կախված: Եվ ելնելով վերահսկողության արդյունքներից՝ եթե տվյալ իրավիճակը չի համապատասխանում սահմանված նորմերին, իրականացվում են նախապես մշակված միջոցառումները:

Ի վերջո, մոնիտորինգ փուլում գնահատվում է ռիսկերի կառավարման ողջ գործընթացն ու արդյունավետությունը՝ հաշվի առնելով ռիսկի նվազման միտումները: Մոնիտորինգի հիմնական նպատակն է պարզել՝

- արդյո՞ք ռիսկերին արձագանքելու համակարգը ներդրված է նախագծին համապատասխան,
- փոխվե՞լ է ռիսկի կարևորությունը նախկինի համեմատ,
- ռիսկային գործոնների ներկայիս ազդեցությունը պլանավորված էր, թե՞՝ պատահական:

Գրականություն

1. **Казакова Н.А.** Финансовая среда предпринимательства и предпринимательские риски. -М.: ИНФРА-М, 2015.- 208 с.
2. A Guide to the Project Management Body of Knowledge (PMBOK Guide). - USA, Project Management institute, 2000. – 216 p.
3. **Лапуста И. Г., Шаршукова Л. Г.** Риски предпринимательской деятельности. -М.: ИНФРА-М, 1998.- 223 с.
4. **Бланк И. А.** Управление использованием капитала. -М.: Омега-Л, 2008. – 656 с.
5. **Иода Е.В., Мешкова Л.Л.** Управление предпринимательскими рисками. – Тамбов: Тамб гос. техн. ун., 2002. - 212 с.

05.03.2018.

М.Т. Мхитарян

УПРАВЛЕНИЕ ВНУТРЕННИМИ РИСКАМИ В ОРГАНИЗАЦИЯХ ПИЩЕВОЙ ПРОМЫШЛЕННОСТИ ПРИ ПОМОЩИ ВНЕДРЕННОЙ ДИАГРАММНОЙ МОДЕЛИ

Разработана система повышения эффективности внутреннего управления рисками организаций пищевой промышленности. Главной особенностью является то, что, учитывая высокий уровень неприемлемого риска для пищевых организаций, связанный с жизнью и здоровьем населения, предлагается диаграммная модель, которая позволяет максимально эффективно и без риска отделять и управлять недопустимыми рисками.

Ключевые слова: неприемлемые и допустимые риски, производство продуктов питания, управленческая эффективность, критические точки, мониторинг, самострахование, хеджирование, диверсификация.

M.T. Mkhitarian

INTERNAL RISK MANAGEMENT IN FOOD MANUFACTURING ORGANIZATIONS WITH THE INTEGRATED DIAGRAM MODEL

An internal food production organizational risk analysis system was implemented to increase productivity. The main unique feature is to take into account the food production companies guidelines connected with the high level risks that effect the lifestyles and health of the population. The system suggests a diagram model which allows to separate prohibited risks and to govern them effectively.

Keywords: unacceptable and permissible risks, food production, management efficiency, critical points, monitoring, self-insurance, hedging, diversification.

Մխիթարյան Մարինա Թորոսի - հայցորդ (ՀՊՏՀ)

ՀՏԴ 621.182

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Տ.Է. Հակոբյան

ԱՅՏԱՎՈՐ ԶԱՐԴԻՉՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԲԱՆԵՑՄԱՆ ՀԵՌԱՎԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ

Մշակված են հանքարդյունաբերությունում լայնորեն կիրառվող այտավոր ջարդիչի հեռակառավարման ֆունկցիոնալ և սկզբունքային սխեմաները: Ջարդիչի էլեկտրաբանեցման կառավարման համակարգի ֆունկցիոնալ մոդուլները CAN շինայի միջոցով միացված են անհատական համակարգիչին, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել ջարդիչի հեռակառավարումը:

Առանցքային բառեր. ջարդիչ, միկրոքոնթրոլեր, USB-CAN ինտերֆեյսային կերպափոխիչ, էլեկտրաբանեցում, կառավարման համակարգ:


Ներկայումս մեծ նշանակություն է տրվում հանքարդյունաբերության ոլորտի հատկապես որակական զարգացման հեռանկարին՝ շեշտը դնելով արտադրանքի մշակման որակի բարձրացման և սկզբնական սպառման շղթայի ապահովման վրա, ինչը թույլ կտա ապահովել առկա ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձր աստիճան, հետևաբար՝ լրացուցիչ եկամուտներ: Ակնհայտ է, որ հանքավայրերից շատերը հնարավոր չէ օգտագործել նույն արդյունավետությամբ, որոշներում անհրաժեշտ է իրականացնել ներդրումներ տեխնիկական վերազինման և հետազոտություններ սկսելու նպատակով: Մինևույն ժամանակ այդ զարգացումները առաջ են բերել մի շարք հիմնախնդիրներ և մարտահրավերներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես հանքաքարի արդյունահանման և վերամշակման ոլորտներում բարոյապես հնացած և ֆիզիկապես մաշված տեխնոլոգիական սարքավորումների կիրառումը, որը, որպես կանոն, պայմանավորում է խտանյութի ինքնարժեքի աճ և տեխնոլոգիական համալիրի շահագործման աշխատանքների ցածր որակական և քանակական ցուցանիշներ: Ելնելով վերոնշյալից՝ առաջ է գալիս ջարդիչների ավտոմատացված էլեկտրաբանեցումների (ԷԲ) կառավարման համակարգերի արդիականացման խնդիրը՝ ժամանակակից ապարատաճրագրային միջոցների հիման վրա:

Ներկայիս ջարդման համալիրները, ըստ տեխնոլոգիական նշանակության, ներառում են իրենց կազմում տարբեր տեսակի ջարդիչներ, փոխակրիչներ, բունկերներ, զանազան տվիչներ, օժանդակ մեխանիզմներ և կառավարվող կիսահաղորդչային կերպափոխիչներ, որոնց ընդհանուր կառավարումը իրականացվում է տեխնոլոգիական քոնթրոլերների միջոցով: Բացի այդ, հաշվի առնելով տեխնոլոգիական սարքավորման շահագործման պայմանները, ի հայտ է գալիս ջարդման համալիրի հեռավար կառավարման ապահովման անհրաժեշտությունը [1, 2]:


Հաշվի առնելով վերոնշյալը՝ մեր կողմից մշակվել է հանքարդյունաբերությունում լայնորեն օգտագործվող այտավոր ջարդիչի միկրոքոնթրոլերային կառավարման համակարգի ֆունկցիոնալ սխեման, նկ.1, որում իրենց լուծումն են ստացել կառավարման համակարգին ներկայացվող վերոհիշյալ խնդիրները:

Նկ.1-ում ընդունված են հետևյալ նշանակումները. PC ջարդիչի հեռակառավարման սերվերը՝ իրական ժամանակում աշխատող անհատական համակարգիչ է, որի միջոցով իրականացվում է կառավարման համակարգի և արտաքին սերվերի միջև կապը: Անհատական համակարգիչի USB (Universal Serial Bus) կայանին միացված է USB-CAN ինտերֆեյսային կերպափոխիչը, Շ1 և ՀԿ1-ն ջարդիչի հիմնական շարժիչն է և այն սնող հաճախականային կերպափոխիչը, ՕՇ-ն՝ ջարդիչի օժանդակ էլեկտրաշարժիչը, ՓՄ-ն փոխանցման տուփը, ԱՏ-ն՝ օժանդակ շարժիչի պտտման արագության տվիչը, ՄԶ-ն՝ ջարդիչի կուտակիչ բունկերում հանքանյութի մակարդակի չափիչը, ՏԿ-ն՝ տեխնոլոգիական կոնտրոլերը, Շ2 և ՀԿ2-ը՝ ժապավենային կոնվեյերը բանեցնող էլեկտրաշարժիչը և այն սնող հաճախականային կերպափոխիչը, ՀՏ-ն՝ հոսանքի տվիչը, որը կարգավորում է ջարդիչի արտադրողականությունը: Այտավոր ջարդիչի թողարկումը կատարվում է ՕՇ-ի օգնությամբ, քանի որ հիմնական Շ1 էլեկտրաշարժիչով թողարկումն անհնար է, պայմանավորված ջարդիչի մեխանիկական մասի մեծ զանգվածներով, որոնց պատճառով էլ շարժիչի թողարկման հոսանքները տասնյակ անգամ գերազանցում են թույլատրելի արժեքները: Երբ ՕՇ-ի պտտման հաճախությունը հասնում է 20-30պտ/ր,

ըստ ԱՏ-ից ստացված տեղեկատվության, ՏԿ-ն արձակում է ազդանշան՝ անջատելու ՕՇ-ը և թողարկել Շ1, համաձայն որի կատարվում է դրա սահման թողարկումը ՀԿ1-ի միջոցով: Այն բանից հետո, երբ ջարդիչը պատրաստ է աշխատանքի, ՀԿ2-ի օգնությամբ թողարկվում է Շ2-ը, որն էլ իր հերթին ՓՄ-ի միջոցով բանեցնում է կոնվեյերը: Կոնվեյերի վրա եղած ելանյութը ընկնում է բունկեր, որից հետո ջարդիչ: Ջարդիչի արտադրողականությունը կարգավորվում է ՀՏ-ի օգնությամբ, իսկ ՄՉ-ը, որը տեղակայված է բունկերի համապատասխան բարձրության վրա, հսկում է ելանյութի մակարդակը բունկերում և թույլ չի տալիս, որ տեղի ունենա ջարդիչի գերլցում: Եթե ելանյութի մակարդակը բունկերում սկսում է նվազել, ՄՉ-ն ազդանշան է տալիս ՏԿ-ին, որն էլ իր հերթին ՀԿ2-ին համապատասխան ազդանշան տալով՝ դանդաղեցնում է կոնվեյերի արագությունը, իսկ հակառակ դեպքում՝ արագացնում է կոնվեյերի արագությունը:



Նկ. 1. Ջարդիչի հեռակառավարման ֆունկցիոնալ սխեման



Նկ.2. USB-CAN ինտերֆեյսային կերպափոխիչի սկզբունքային էլեկտրական սխեման

CAN (Controller Area Network- քնթրոլերային տարածքային ցանց) ստանդարտների համալիր է, բաշխված արտադրական ցանցերի կառուցման համար, որն օգտագործում է տվյալների հաջորդական փոխանցում իրական ժամանակում՝ հուսալիության և պաշտպանվածության շատ բարձր աստիճանով [3]:

CAN-ը բնութագրվում է հետևյալ հիմնական հատկություններով.

- յուրաքանչյուր հաղորդագրությանը (ոչ, թե սարքավորմանը) տրվում է իր առաջնահերթությունը,
- տվյալների փոխանակման երկու ակտերի միջև երաշխավորված դադարի մեծությամբ,
- հեռաձևակալող հաղորդագրությունների ընդունում ժամանակի սինխրոնացումով,
- տվյալների ոչ իրարամերժ փոխանցում ամբողջ համակարգի մակարդակով,
- ցանցում մի քանի առաջատար (master) սարքավորումների առկայության թույլտվություն,
- սխալանքով ուղարկված հաղորդագրությունների փոխանցման ավտոմատ կրկնում, անմիջապես ցանցը ազատվելուց հետո:

Նկ. 2-ում պատկերված է USB-CAN ինտերֆեյսային կերպափոխիչի սկզբունքային էլեկտրական սխեման: Կերպափոխիչի աշխատանքի համար անհրաժեշտ է ծրագիր-դրայվեր: Դրայվերի հետ աշխատանքի համար օգտագործվում են ֆունկցիաների գրադարաններ: Ադապտերի դրայվերը թույլատրում է մինչև 10 ադապտերի միացում համակարգչի USB շինային: Գրադարանի բոլոր գործառնությունների հետ աշխատելու համար պետք է որպես առաջնային պարամետր նշել ադապտերի համարը (հաջորդիվ CAN-կանալի համար):

Ադապտերների (CAN կանալներ) համարակալումը սկսվում է 0-ից հետևյալ կարգով.

- յուրաքանչյուր նոր միացվող ադապտերին վերագրվում է ամենափոքր ազատ համարը,
- ադապտերի անջատվելուց հետո նրան վերագրված հերթական համարը ազատվում է:

Ադապտերներին վերագրվող համարները գործում են մինչև օպերացիոն համակարգի հաջորդ բեռնումը:

Յուրաքանչյուր CAN-կանալի հետ աշխատելու համար անհրաժեշտ է կանչել կանալի բացման ֆունկցիան UsbCan_Open (UINT Channel, PUSBCAN_INFO DrvInfo): Այս ֆունկցիան իրականացնում է

միացված ադապտերի սկզբնական ինիցիալավորումը աշխատաքից առաջ: Որպես մուտքային պարամետրեր ֆունկցիա է ուղարկվում CAN-կանալի համարը (0- ից 9) և կառուցվածքի հասցեն USBCAN_INFO: Ֆունկցիայի հաջող կատարման արդյունքում կառուցվածքի դաշտերը կլրացվեն հետևյալ արժեքներով.

- ադապտերի դրայվերի վերսիան,
- ադապտերի արտադրողի նույնականացուցիչը,
- ադապտերի նույնականացուցիչը,
- ադապտերի վերսիան,
- ադապտերի OZU-ի չափը բայթերով:

Այն դեպքում, երբ ադապտերը միացված չէ համակարգչին կամ CAN-կանալը արդեն բաց է, կամ այլ սխալներին դեպքում ֆունկցիան վերադարձնում է համապատասխան համակարգային սխալի կոդը: CAN-կանալի հետ աշխատանքը ավարտելուց հետո պետք է կանչել կանալը փակելու ֆունկցիան UsbCan_Close (UINT Channel): Ստորև ներկայացված է C++ ծարագրավորման լեզվով գրված CAN-կանալը բացելու և փակելու ֆունկցիայի ծրագրից հատված.

```
#include "stdafx.h"
#include <stdlib.h>
#include "..\..\include\usbcan2.h"
// դիմամիկ միացվող գրադարանների օգտագործումը
#define __USBCAN2_SHARED_LIBRARY__
#include "..\..\include\usbcanlib2.h"
int main(int argc, char* argv[])
{
    USBCAN_INFO info;
    UINT result;
    UINT channel = 0; // կանալի համարը
    // 0 կանալի բացումը
    result = UsbCan_Open(channel, &info);
    if ( result != ERROR_SUCCESS ) {
        printf("Error to open\n");
        return 1;
    }
    //
    // օգտագործվող ադապտերի և դևայսի մասին ինֆորմացիայի դուրս բերում էկրանին
    //
    printf("Ram size = %X\n", info.BoardRamSize);
    printf("Driver version = %X\n", info.DriverVersion);
    printf("Vendor ID = %X\n", info.VendorID);
    printf("Product ID = %X\n", info.ProductID);
    printf("Device version = %X\n", info.DeviceVersion);
    //...
    //
    // փակում ենք կանալը
    //
    UsbCan_Close(channel);
    return 0;
}
```

CAN կանալի բացվելուց հետո պետք է ինիցիալավորել CAN-քոնթրոլերը: Ինիցիալավորման ֆունկցիայի կանչման ժամանակ նրան են փոխանցվում՝ գլոբալ դիմակների արժեքները և փոխանակման արագության ռեգիստրների արժեքները: Գլոբալ դիմակների արժեքները օգտագործվում են, երբ կապուղու հաղորդագրությունների համար դիմակի անհատական արժեքը հավասար է -1, այսինքն նշված չէ:

CAN քոնթրոլերի ինիցիալավորումից հետո, պետք է կատարել բուֆերի չափերի ինիցիալավորում, հաղորդվող և ընդունվող հաղորդագրությունների համաձայն: Բոլոր բուֆերների

գումարային ծավալը չպետք է գերազանցի ադապտերի O2U-ի ծավալը, որի մեծությունը վերադարձվում է `UsbCan_Open` ֆունկցիան կանչելուց հետո: Ընդունվող հաղորդագրությունների համար նշվում է ընդունման համար օգտագործվող ռեգիստրների գումարային ծավալը: Հաղորդվող հաղորդագրությունների համար նշվում է յուրաքանչյուր հաղորդագրության կանալի բուֆերի ծավալի արժեքը: Եթե հաղորդագրության կապուղին չի օգտագործվում հաղորդագրությունների փոխանցման համար, ապա համապատասխան բուֆերի ծավալի արժեքը պետք է հավասար լինի զրոյի: Բուֆերի չափերի ինիցիալավորումից հետո, այսինքն հիշողությունը բուֆերների վրա բաշխելուց հետո կարելի է կատարել հաղորդագրությունների ընդունում և հաղորդում: Հաղորդագրությունների ընդունումը կարող է իրականացվել ինչպես ընդհանուր բուֆեր, այնպես էլ հաղորդագրության կապուղով նշված առանձին բուֆեր:

Հաղորդագրությունների ընդունման ֆունկցիայի կանչման հաջորդականությունը.

1. Հաղորդագրությունների ընդունման ընդհանուր բուֆերի հասցեի և չափի նշում:

Եթե ընդհանուր հաղորդագրությունների ընդունման համար օգտագործվում է ընդհանուր բուֆեր, ապա հաղորդագրությունների ընդունումը սկսելուց առաջ պետք է նշել բուֆերի հասցեն և չափը՝ կանչելով `UsbCan_SetReceiveBuf` ֆունկցիան: Եթե անհրաժեշտ է նշված կապուղով ընդունված հաղորդագրությունները պահպանել առանձին բուֆերում, ապա բուֆերի հասցեն նշվում է հաղորդագրությունների ընդունման ֆունկցիան կանչելու ժամանակ:

2. Իրական ժամանակի ժամացույցի թողարկում:

Եթե անհրաժեշտ է յուրաքանչյուր ընդունված հաղորդագրության հետ պահպանել նաև ժամանակի նշիչը պետք է կանչել `UsbCan_StartRTC` ֆունկցիան, որից հետո յուրաքանչյուր ընդունված հաղորդագրության հետ կպահպանվի նաև ժամանակի նշիչը, որը հավասար կլինի ընդունված հաղորդագրությունների միջև եղած միջակայքին: Ժամանակային ֆունկցիայի ժամանակային նշիչը 3.2 մկվ է:

3. Հաղորդագրությունների ընդունման մեկնարկ:

Հաղորդագրությունների ընդունումը սկսելու համար անհրաժեշտ է կանչել `UsbCan_StartReceive` ֆունկցիան: Այս ֆունկցիայի պարամետրերն են՝ CAN-կանալի համարը, արբիտրաժի արժեքը, յուրահատուկ դիմակը, ընդունվող հաղորդագրությունների քանակը, դրոշները, հաղորդագրությունների ընդունման ֆիլտրը, հաղորդագրությունների պահպանման բուֆերի չափը և հասցեն:

4. Հաղորդագրությունների ընդունման ավարտի սպասում:


Հաղորդագրությունների ընդունումը սկսելուց հետո հաղորդագրությունների ընդունման ընդհատման համար անհրաժեշտ է կանչել `UsbCan_StopReceive`. ֆունկցիան:

5. Նախապատրաստում հաղորդագրությունների ընդունման կրկնման համար:

Եթե հաղորդագրությունների հաջող ընդունումից հետո անհրաժեշտ է կրկնել ընդունումը այդ բուֆեր, ապա անհրաժեշտ է կանչել `UsbCan_ResetReceiveBuf` ֆունկցիան, որն իրականացնում է նախապատրաստում ընդունման կրկնման համար:

CAN հաղորդիչ-ընդունիչի տիպային կառուցվածքային սխեման բերված է նկ.3-ում: TxD մուտքին (մուտքը ինվերսիվ է) տրամաբանական զրո ազդանշանի առկայության դեպքում, հաղորդիչի ելքային կասկադների երկու տրանզիստորը բացվում են և դիմադրության միջով անցնում է հոսանք՝ գծում ստեղծելով տրամաբանական մեկի համապատասխանող վիճակ: Այնուհանդերձ, CANH ելքի պոտենցիալը միշտ բարձր կլինի, քան CANL մուտքինը: Մուտքում տրամաբանական մեկ ազդանշանի դեպքում հաղորդիչի ելքն անցնում է բարձր դիմադրության վիճակի և դիֆերենցիալ լարումը գծում հասնում է զրոյի:

CAN հաղորդիչն ունի շատ կարևոր առանձնահատկություն. եթե հաղորդիչներից մեկը ցանցում դնում է տրամաբանական զրո, իսկ մյուսը՝ տրամաբանական մեկ, այս վիճակը չի համարվում վթարային, քանի որ միջանցիկ հոսանք չի առաջանում: Այս դեպքում CAN շինայի վիճակը համապատասխանում է տրամաբանական մեկ վիճակին: Այլ կերպ ասած՝ տրամաբանական մեկը միշտ գերիշխում է տրամաբանական զրոյի նկատմամբ, ինչի համար CAN ստանդարտում օգտագործվում է դոմինանտ հակացությունը՝ գծի այն վիճակը, երբ գծում հոսանք կա, և ռեցեսիվ վիճակ՝ դոմինանտին հակառակ վիճակ:



Նկ.3. CAN հաղորդիչ ընդունիչի կառուցվածքային սխեմա

CAN-ի այս հատկությունը հնարավորություն է ընձեռում ստանալ գծին հասանելիության հնարավորություն, համեմատելով գիծ ուղարկվող տրամաբանական մակարդակները այն մակարդակի հետ, որը փաստացիորեն դրվում է նրանում. եթե հաղորդիչը գիծ է ուղարկում ռեցեսիվ վիճակ, իսկ այդ պահին գծում մնում է դոմինանտ վիճակ, ապա նշանակում է գիծը զբաղված է: Այսպիսով, հասանելիություն է ստանում ցանցի այն հանգույցը, որը կարող է ուղարկել դոմինանտ ազդանշան: Ռեցեսիվ ազդանշանով հանգույցները ազատում են ցանցը և սպասում հաջորդ հնարավորությանը:

Գրականություն

1. Вальков В.М., Вершин В.Е. Автоматизированные системы управления технологическими процессами. 3-е изд., перераб. и доп.-Л.: ПОЛИТЕХНИКА, 1991.- 270с.
2. Ключев В.И., Терехов В.М. Электропривод и автоматизация общепромышленных механизмов: Учебник для вузов.-М.: Энергия, 2006.-360с.
3. Ишматов З.Ш. Микропроцессорное управление электроприводами и технологическими объектами. Полиномиальные методы.-Екатеринбург: УГТУ-УПИ, 2007.-281с.

19.03.2018.

Т.Э. Акопян

РАЗРАБОТКА УДАЛЕННОЙ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ЭЛЕКТРОПРИВОДОМ ШЕКОВОЙ ДРОБИЛКИ

Разработаны функциональная и принципиальная схемы удаленного управления щековой дробилкой, нашедшей широкое применение в горнорудной промышленности. Функциональные модули системы управления электроприводом дробилки посредством шины CAN подключены к персональному компьютеру, который позволяет осуществлять удаленное управление дробилкой.

Ключевые слова: дробилка, микроконтроллер, USB-CAN интерфейсный преобразователь, электропривод, система управления.

T.E. Hakobyan

DEVELOPMENT OF THE REMOTE CONTROL SYSTEM OF JAW CRUSHERS' ELECTRICAL DRIVE

Functional and principal schemes of remote control of jaw crusher which have found wide application in the mining industry are developed. The functional modules of the electric drive control system of the crusher via a CAN bus are connected to a personal computer that allows remote control of the crusher.

Keywords: crusher, microcontroller, USB-CAN interface converter, electrical drive, control system.

Հակոբյան Տիգրան Էդուարդի - մագիստրանտ, Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

ОБЗОРНЫЙ АНАЛИЗ МЕТОДОВ МНОГОКРИТЕРИАЛЬНОГО ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ

Сделана попытка проанализировать методы многокритериального принятия решений, которые позволяют структурировать проблемы принятия решений и выявить наилучший вариант. В методах многокритериального принятия решений главным этапом исследования является идентификация критериев и создание таблицы эффективности, с помощью которых определяется упорядоченность альтернатив и делаются окончательные выводы. Рассмотрены различные методы многокритериального принятия решений, такие как MAUT/ MAVT (Многокритериальная теория полезности/Многокритериальная теория значений), TOPSIS (Методика выбора предпочтения по сравнению с идеальным решением) и АНР (Метод анализа иерархий).

Ключевые слова: методы многокритериального принятия решений; функция полезности; лицо, принимающее решение (ЛПР); критерии оценки; ядерные энергетические системы (ЯЭС).

Введение. Методы многокритериального принятия решений (MCDA) становятся все более популярными в процессе принятия решений в условиях устойчивого развития энергетики из-за многомерности и сложности социально-экономических и биофизических систем. Критерии энергетических систем обобщены в технической, экономической, экологической и социальной сферах. Методы взвешивания критериев классифицируются по трём категориям: субъективное взвешивание, объективное взвешивание и комбинированные методы взвешивания. Несколько методов, основанных на взвешивании, установлении и превышении приоритетов, методологии нечетких множеств и их комбинации, используются для принятия решений в области энергетики. Можно сказать, что инвестиционная стоимость энергосистемы находится на первой строчке при оценке критериев, далее следуют выбросы CO₂, поскольку защите окружающей среды уделяется особое внимание [1].

Использование MCDA для сравнения ЯЭС. Многокритериальный анализ решений (MCDA) представляет собой группу подходов к методам оценки решений, используемых для структурирования проблем, которые помогают отдельным лицам или группам лиц принимать решения при рассмотрении нескольких целей. Этот инструмент сочетает объективные измерения и субъективность лиц, принимающих решения. MCDA помогает лицам, принимающим решения, понимать и структурировать проблему, оценивать возможные альтернативы и выбирать наиболее предпочтительный вариант [2].

Задачи, которые решаются методами MCDA, могут иметь заранее известное количество альтернатив, либо альтернативы могут быть заданы частично. Каждая альтернатива представлена соответствующими показателями эффективности, оцененными по нескольким критериям. Задача может быть изложена как процесс, поддерживающий поиск наилучшей альтернативы или набора приемлемых альтернатив из всех рассматриваемых вариантов.

Процесс принятия решений начинается с выявления проблемы лицом, ответственным за принятие решений, и группой экспертов по тематике и заинтересованных сторон, который можно представить в следующей последовательности (см. рис.).




Рис. Схема последовательности операций методов MCDA

Обзор методов MCDA. Методы MCDA представляют собой средство анализа для иерархического дерева с predetermined набором альтернатив. Задачи, рассматриваемые в MCDA, в основном имеют следующий вид: дана группа из N альтернатив и M критериев для сравнения вариантов, каждый из вариантов оценивается экспертами или посредством объективных вычислений, что выводит правило из предпочтений экспертов, которое позволяет упорядочить альтернативы в соответствии с их производительностью, эффективностью и определить наилучшую альтернативу среди всех вариантов [3].

Было разработано большое количество методов MCDA для решения различных проблем. Каждый метод имеет свои преимущества и недостатки и может быть более или менее полезным в зависимости от ситуации.

Использование нескольких различных методов MCDA в рамках конкретного тематического исследования может оказать существенное влияние на процесс принятия решений, поскольку этот процесс поддерживает лицо, принимающее решение, для более глубокого понимания и анализа проблемы, достижения согласованности в суждениях и оценках и, наконец, для получения стабильных и надежных результатов упорядочения. Хотя, в общем, ряды вариантов могут отличаться для разных методов, как правило, они обеспечивают непротиворечивые результаты.

Многокритериальная теория полезности/Многокритериальная теория значений (MAUT/MAVT). MAVT представляет собой метод MCDA, в основе которого лежит функция одного атрибута, объединяющая затраты, риски, преимущества и другие критерии оценки, учитывая мнения экспертов и предпочтения участников, принимающих решения. В рамках MAVT одно атрибутное значение оценивается для каждого критерия, который преобразует различные значения критериев в единую универсальную, безразмерную шкалу, например, от 0 до 1, отражающую суждения экспертов по тематике и лиц, принимающих решения. Все критерии оцениваются по эффективности и важности. Значение каждого критерия нужно умножить на соответствующие значения весовых коэффициентов каждого критерия [4]. MAUT основана на теории полезности, расширяющей MAVT, используя вероятности и ожидания, чтобы включить неопределенности и риски в значения критериев сравнения. Такая неопределенность характеризуется в MAVT случайной величиной с заданной функцией вероятности. Общая функция полезности для каждой альтернативы также считается случайной величиной. Сортировка альтернатив в MAUT основана на сравнении ожидаемой полезности критериев: одна альтернатива более уместна, чем другая, если математическое ожидаемое значение общей функции полезности для этой альтернативы больше соответствующих ожидаемых значений других альтернатив [5].

Метод MAUT имеет следующие особенности:

1. Строится функция полезности, имеющая аксиоматическое (чисто математическое) обоснование.

2. Некоторые условия, определяющие форму этой функции, подвергаются проверке в диалоге с лицом, принимающим решение.

3. Обычно этот метод используется для решения задач с заданными альтернативами, а полученные результаты применяются для оценки заданных альтернатив.

Основные этапы подхода MAUT:

1. Разработать перечень критериев.

2. Построить функции полезности по каждому из критериев (в практических задачах в случае линейной функции полезности бывает достаточно таблицы значений функции для имеющихся значений критерия).

3. Задать веса критериев.

4. Построить зависимость между оценками альтернатив по критериям и общим качеством альтернативы (многокритериальная функция полезности).

5. Оценить все имеющиеся альтернативы и выбрать наилучшую.

В методе MAUT выдвигаются некоторые условия (аксиомы), которым должна удовлетворять функция полезности ЛПР. В MAUT эти условия можно разделить на две группы.

Первая группа — аксиомы общего характера:

1. Аксиома, утверждающая, что может быть установлено отношение между полезностями любых альтернатив: либо одна из них превосходит другую, либо они равны.

2. Аксиома транзитивности: из превосходства полезности альтернативы А над полезностью альтернативы В и превосходства полезности В над полезностью С следует превосходство полезности альтернативы А над полезностью альтернативы С.

3. Для соотношений между полезностями альтернатив А, В, С, имеющих вид $U(A) > U(B) > U(C)$, можно найти такие числа α , β меньше 1 и больше 0, что: $\alpha \cdot U(A) + (1-\alpha) \cdot U(C) = U(B)$, $U(A) \cdot (1-\beta) + \beta \cdot U(B) > U(B)$, где U - многокритериальная функция полезности альтернативы. Аксиома 3 основана на предположении, что функция полезности непрерывна и можно использовать любые малые части полезности альтернатив.

Вторая группа условий специфична для MAUT. Эти условия называются аксиомами (условиями) независимости, позволяющими утверждать, что некоторые взаимоотношения между оценками альтернатив по критериям не зависят от значений по другим критериям:

1. Независимость по разности.

Предпочтения между двумя альтернативами, отличающимися лишь оценками по порядковой шкале одного критерия C_1 , не зависят от одинаковых (фиксированных) оценок по другим критериям $C_2, \dots, C_N$.

2. Независимость по полезности.

Критерий C_1 называется независимым по полезности от критериев $C_2, \dots, C_N$, если порядок предпочтений альтернатив, в которых меняются лишь уровни критерия C_1 , не зависит от фиксированных значений по другим критериям.

3. Независимость по предпочтению.

Независимость по предпочтению является одним из наиболее важных и часто используемых условий. Два критерия C_1 и C_2 независимы по предпочтению от других критериев $C_3, \dots, C_N$, если предпочтения между альтернативами, различающимися лишь оценками по C_1 , C_2 , не зависят от фиксированных значений по другим критериям.

В тех примерах, где три и более критерия зависят от остальных, также проявляется нарушение условия независимости по предпочтению. В связи с этим особое внимание уделяется проверке условия независимости по предпочтению. Если аксиомы первой группы и некоторые из условий независимости выполнены, то из этого следует строгий вывод о существовании многокритериальной функции полезности в определённом виде. По теореме Р. Кини, если условия независимости по полезности и независимости по предпочтению выполнены, то функция полезности является аддитивной:

$$U(x) = \sum_{i=1}^n w_i U_i(x) \text{ при } \sum_{i=1}^n w_i = 1$$

либо мультипликативной:

$$1 + kU(x) = \prod_{i=1}^n [1 + kw_i U_i(x)] \text{ при } \sum_{i=1}^n w_i \neq 1,$$

где U, U_i — функции полезности, изменяющиеся от 0 до 1; w_i — коэффициенты важности (веса) критериев, причем $0 < w_i < 1$; коэффициент $k > -1$.

Таким образом, многокритериальную функцию полезности можно определить, если известны значения коэффициентов w_i, k , а также однокритериальные функции полезности $U(x)$ [3, 5].

Многокритериальная теория полезности позволяет получить значения в интервальной шкале. Подчеркнем положительные стороны подхода MAUT. Прежде всего, это стройная математическая теория, позволяющая обосновать конкретный вид общей функции полезности в зависимости от предпочтений ЛПР. Несмотря на то, что построение общей функции полезности требует достаточно много времени и усилий ЛПР, полученный результат позволяет оценить любые альтернативы [3].

Методика выбора предпочтения по сравнению с идеальным решением (TOPSIS). TOPSIS является методом многокритериального анализа решений, который первоначально был разработан Hwang и Yoon в 1981 году, с последующим развитием с Yoon в 1987 году и Hwang, Lai и Liu в 1993г. Основная идея метода заключается в том, что наиболее предпочтительная альтернатива должна иметь наибольшую близость к идеальному решению и должна быть дальше всех остальных альтернатив от неприемлемого решения [6].

Метод TOPSIS состоит из следующих шагов:

Шаг 1. Создать оценочную матрицу, состоящую из m альтернатив и n критериев, с пересечением каждой альтернативы и критериев, заданных как x_{ij} , поэтому мы имеем матрицу $(x_{ij})_{m \times n}$.

Шаг 2. Нормализовать матрицу принятия решений. В классическом подходе TOPSIS нормализованная матрица может быть получена с использованием следующей формулы:

$$n_{ij} = x_{ij} / \sqrt{\sum_{j=1}^m (x_{ij})^2}, j=1, \dots, n, i=1, \dots, m.$$

Следовательно, после такой нормализации каждый из атрибутов будет иметь одинаковую шкалу.

Шаг 3. Вычислить нормализованную матрицу принятия решений, учитывая весовые коэффициенты.

4. Абоян А.О. Исследование полей деформации в кристалле – анализаторе рентгеновского интерферометра, подвергнутого ионной имплантации // Изв. НАН РА. Физика. - 2000. - Т.4, № 4. - С. 212 - 219.
5. Пинскер З.Г. Рентгеновская кристаллооптика. - М.: Наука, 1982.-389 с.
6. Дюрелли А., Паркс В. Анализ деформации с использованием муара.- М.: Мир, 1974.-359 с.
7. Authier A., Milne A.D., Sauvage M. // Phys. Stat.Sol. - 1968. – V. 26. - P. 469-480.
8. Пинскер З.Г. Проблемы современной кристаллографии. - М.: Наука, 1975.- 350 с.
9. Абоян А.О. // Вестник НПУА: Металлургия, материаловедение, недропользование. - 2017. - № 1. - С. 46- 55.

10. Безирганян П.А., Аладжаджян Г.М. // Изв. АН АрмССР. Физика.- 1976. - Т.11, вып. 4. - С. 273 – 279.
11. James R. W. // Solid. State Phys. -1963. – V.15. - P. 53
12. Пинскер З.Г. Динамическое рассеяние рентгеновских лучей в идеальных кристаллах.- М.: Наука, 1974. - 367 с.
13. Иверонова В.И. Теория рассеяния рентгеновских лучей. - М.: Изд-во Моск. ун -та, 1978. - 276 с.

15.11.2017.

Ա.Հ. Աբոյան, Ս.Գ. Աղբալյան

ԵՐԿԲՅՈՒՐԵՂ ԻՆՏԵՐՖԵՐԱԶԱՓԵՐՈՒՄ ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՄՈՒԱՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԱՍԻՄԵՏՐԻԿ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Հետազոտվել է երկբյուրեղ ինտերֆերաչափերում մուարի պատկերների առաջացումը ասիմետրիկ անդրադարձումների դեպքում: Յույց է տրվել, որ Լաուեի անդրադարձումների դեպքում, երբ ասիմետրիկությունը մեծ է (անդրադարձնող հարթության և բյուրեղի մուտքի մակերևույթի միջև անկյունը բավականին տարբեր է $\pi/2$ -ից), նույնիսկ ինտերֆերաչափի իդեալական երկրաչափության դեպքում առաջանում են մուարի պատկերներ: OX , OY , OZ առանցքներից ցանկացածի շուրջը աստմական հարթությունների պտույտը հանգեցնում է մուարի պատկերների առաջացմանը: Ասիմետրիկ անդրադարձումների ժամանակ, երբ անդրադարձման անկյունը տարբերվում է Վուլֆ-Բրեգի ճշգրիտ անկյունից, նույնիսկ երկբյուրեղ ինտերֆերաչափի իդեալական երկրաչափության պարագայում, դիտվող ինտենսիվության մուարի բաշխումը ստացվում է նաև այն ժամանակ, երբ ինտերֆերաչափի երկրորդ բյուրեղը հարթ զուգահեռ թիթեղ է:

Առանցքային բառեր. երկբյուրեղ ինտերֆերաչափեր, միջհարթությունային հեռավորություն, ասիմետրիկ անդրադարձում, դիսպերսիոն մակերևույթներ, ալիքային վեկտորներ, ճոճանակային բաշխումներ, Լաուեի անդրադարձումներ, Վուլֆ-Բրեգի անկյուն, բեկման ցուցչի միավոր դեկրեմենտ:

A.H. Aboyan, S.G. Aghbalyan

DEVELOPMENT OF X - RAY MOIRE PATTERNS AT ASYMMETRIC REFLECTIONS IN BICRYSTAL INTERFEROMETERS

The development of X - ray moiré patterns in bicrystal interferometers at asymmetric reflections is investigated. It is shown that at Laue reflections, when asymmetry is large (the angle between the reflection plane and the crystal entry surface is significantly different from $\pi/2$), even at the ideal geometry of the interferometer, moiré patterns develop. The rotation of the atomic planes round any of the axes OX , OY , OZ also leads to the creation of moiré patterns. At asymmetric reflections, when the reflection angle differs from the Wolfe-Bragg accurate angle, even at ideal geometry of double – crystal interferometer, the observed moiré distribution of intensity is also obtained in the case, when the second crystal of the interferometer is a flat-parallel plate.

Keywords: bicrystal interferometers, interplane distance, asymmetric reflection, dispersion surfaces, wave vectors, pendulum distributions, Laue reflection, Wolfe - Bragg angle, single decrement of the refraction index.

Абоян Арсен Оганесович - д.физ-мат. наук, профессор (Национальный политехнический университет Армении)

Агбальян Сурен Геворкович – д.техн. наук, профессор (Национальный политехнический университет Армении)

ՀՏԴ 676.2.017.26

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

Ա.Ա. Մարգարյան, Ռ.Ն. Բարսեղյան, Ս.Վ. Վերլինսկի

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԼԱՐՎԱԾԱԴԵՖՈՐՄԱՑԻՈՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ


Դիտարկված է օֆսեթ տպագրական մեքենայի տպագլանների հպման գոտիներում առաջացող լարվածադեֆորմացիոն վիճակը, որտեղ միաժամանակ դեֆորմացվում են տպաձևը, բազմաշերտ օֆսեթ թաղանթը, տպաթուղթը և գլանների մետաղյա մակերևույթները: Հաշվի առնելով միաժամանակ ընթացող տարաբնույթ երևույթները՝ լարվածադեֆորմացիոն վիճակի պարամետրերի քանակական գնահատման նպատակով օգտագործված է վերջավոր տարրերի մեթոդով գործող ANSYS ծրագրային փաթեթը: $q = 45 \dots 120$ գ/մ² տեսակարար ծավալով տպաթղթերի համար ստատիկ և դինամիկ բեռնվածության ռեժիմների դեպքում որոշված են լարումների և դեֆորմացիաների արժեքները և դրանց բաշխման առանձնահատկությունները հպագոտում:

Առանցքային բառեր. օֆսեթ թաղանթ, տպաթուղթ, հպման գոտի, վերջավոր տարրերի մեթոդ, ծրագրային փաթեթ:

Պլիգրաֆիական սարքավորումների տպագլանների հպման գոտում առաջացող լարվածադեֆորմացիոն վիճակի պարամետրերը կախված են բեռնվածության բնույթից, գլանների մակերևույթային շերտերի կոշտության աստիճանից և հպման գոտով անցնող տպաթղթի մեխանիկական հատկություններից: Այդ տեսակետից տպագոտում առաջացող վիճակը բավական առանձնահատուկ է՝ կախված հպման գոտում առաջացած ճնշումից, որը կարող է տարբեր լարվածադեֆորմացիոն վիճակներ ստեղծել գլաններում և առաջացնել հարաբերական տեղաշարժեր, որոնք կազդեն տպագրական արտադրանքի որակի վրա [1,2]:


Տպաձևի և գլանի պատրաստման սկզբունքը և տպող հանգույցում առաջացող բեռնվածքը թույլ չեն տալիս թղթի վրա հպման գոտու ողջ մակերևույթում ստանալ միևնույն ճնշումն առանց միջանկյալ, համեմատաբար հեշտ դեֆորմացվող թաղանթի: Այն նպաստում է տպող հանգույցում հավոդ մակերևույթների ամբողջական կիպ հպմանը՝ լրացնելով տպող ապարատի և տպաձևի պատրաստման թերությունները, կարգավորելով հպման գոտում անհրաժեշտ ճնշումը և մարելով հպման գոտում անհամաչափ բեռնվածքից առաջացած տատանումները:

Հպման գոտում լարվածադեֆորմացիոն վիճակն ուսումնասիրելու նպատակով դիտարկված են Printmaster PM 74 մակնիշի տպագրական մեքենայի օֆսեթ գլանի ($L=750$ մմ, $D=213,4$ մմ) մակերևույթային շերտերի տեղաշարժերը, ուր կիրառված է պոլիմերային քառաշերտ ռետինե գործվածք (նկ. 1) [3]:




Նկ. 1. Օֆսեթ գլանի մակերևույթի ռետինե թաղանթը. 1-քլորոպրենային կաուչուկ ($\mu_1=0,36$ մմ), 2- գործվածքային ռետին ($\mu_2=0,30$ մմ), 3-ծակոտկեն ռետին ($\mu_3=0,49$ մմ) 4- գործվածքային ռետին ($\mu_4=0,80$ մմ)

Վերլուծված է տպամեքենայի տպող և օֆսեթ գլանների հպման գոտում (նկ.2) առաջացած լարվածադեֆորմացիոն վիճակը տպագրական թղթի անցման ընթացքում: Այդ նպատակով կիրառված է վերջավոր տարրերի մեթոդը (ՎՏՄ) [4,5]:




Նկ. 2. Թերթավոր օֆսեր մեքենաների տպող հանգույցը. 1-տպաձև, 2- ռետինե թաղանթ, 3- թուղթ, 4,5,6-տպաձևային, օֆսեր և տպող գլաններ

Կազմված են հալման գոտիներում նշված գլանների մակերևութային շերտերի երկրաչափական պարամետրերի հաշվարկային սխեմաները (նկ. 3) և ընտրված են վերջավոր տարրերի տեսքերը: Վերջիններիս տեսակի, ձևի և չափի ընտրությունը կախված է մարմնի ձևից և լարվածադեֆորմացիոն վիճակից (նկ. 4):



Նկ. 3. Տպագրական մեքենայի օֆսեր և տպող գլանների մակերևութային շերտերի պարամետրերը



Նկ. 4. Տպող հանգույցի գլանների մակերևութի տրոհումը վերջավոր տարրերի

Հանգույցի հավասարակշռության պայմանից, ինչպես նաև բոլոր վերջավոր տարրերի մոդելներում կիրառվող մեթոդների անհամապատասխանությունից կազմվում է հետագոտվող դեֆորմացվող մարմնի մոդելի բոլոր վերջավոր տարրերի հավասարակշռության հավասարումների համակարգը: Ստատիկ խնդիրների համար այն ունի հետևյալ տեսքը [4].

$$[K]\{U\} = \{P\} + \{P\}^q + \{P\}^g + \{P\}^{\epsilon_0} + \{P\}^{\sigma_0}, \quad (1)$$

$$\{U\} = \begin{Bmatrix} U_1 \\ \dots \\ U_i \\ \dots \\ U_n \end{Bmatrix}, \{P\} = \begin{Bmatrix} P_1 \\ \dots \\ P_i \\ \dots \\ P_n \end{Bmatrix}, \quad (2)$$

որտեղ $[K]$ -ն վերջավոր տարրերի մեթոդի մոդելի կոշտության ընդհանուր մատրիցն է, $\{U\}$ -ն տարրերի հանգուցային տեղաշարժերի վեկտորը, $\{P\}$ -ն հանգուցների արտաքին ուժերի ընդհանուր վեկտորը, $\{P\}^q, \{P\}^g, \{P\}^{\epsilon_0}, \{P\}^{\sigma_0}$ -ն հանգուցային ուժերի ընդհանուր վեկտորները, համապատասխանաբար համարժեք մակերևութային և զանգվածային ուժերին, սկզբնական դեֆորմացիաներին և լարումներին (նշված վեկտորների մատրիցները նույնական են (2) -ին): Ստատիկ գծային առաձգական մարմնի մոդելի համար ՎՏՄ-ով ստացված հավասարակշռության հավասարումների ընդհանուր համակարգը մաթեմատիկական տեսանկյունից համարվում է գծային հանրահաշվական հավասարումների համակարգ:

Դինամիկական խնդիրներում Դալամբերի սկզբունքի հիման վրա (1)-ում ավելացվում են իներցիայի ուժերը, որոնք արտահայտվում են արագացումներով, իսկ վերջիններս տեղաշարժերի

երկրորդ կարգի ածանցյալներ են: Արդյունքում (1) –ը ձևավորվում է որպես շարժման դիֆերենցիալ հավասարում [4,5], ուր արտաքին ուժերը կարող են փոփոխական լինել՝

$$[m] \frac{d^2}{dt^2} \{U\} + [C] \frac{d}{dt} \{U\} + [K] \{U\} = \{p(t)\} + \{P^q(t)\} + \{P^g\}, \quad (3)$$

որտեղ $[m]$ և $[C]$ -ն մոդելի զանգվածի և դեֆորմացիայի ընդհանուր մատրիցներն են, որոնք ստացվում են համապատասխան տարրական մատրիցների բաղադրիչներից: (3)-ով կարելի է կատարել դինամիկական գործընթացի ամբողջական վերլուծություն՝ շարժման դիֆերենցիալ հավասարումների ինտեգրման միջոցով, որն իրականացվում է տարբեր թվային մեթոդներով [4,5]: Արդյունքում որոշվում են ցանցային տարրական հանգույցների տեղաշարժերը (դեֆորմացիաները), իսկ դրանց միջոցով՝ մնացած բոլոր անհրաժեշտ պարամետրերը որպես ժամանակային ֆունկցիաներ: Հարթ և ծավալային տարրերի համար, դիֆերենցելով տարրերի ներսում տեղաշարժման ֆունկցիայի մոտարկումը, գտնում են դեֆորմացիան և Հուկի օրենքով հաշվարկում են լարումները:

ANSYS փաթեթում վերջավոր տարրերի մեթոդի իրականացումը: ANSYS համակարգչային փաթեթը ՎՏՄ-ով լուծում է անշարժ և շարժական, գծային և ոչ գծային խնդիրներ ֆիզիկայի տարբեր ոլորտներից, այդ թվում՝ կոշտ դեֆորմացվող մարմինների մեխանիկայից: Կառուցվածքի դեֆորմացիաները որոշելու համար ՎՏՄ-ում կիրառվում է տեղափոխությունների եղանակը: Հիմնարար պարամետրերը, որոնք հաշվարկվում են ANSYS-ի կիրառման դեպքում, հանգուցային կետերի տեղաշարժերն են, որոնց միջոցով էլ որոշվում են կոնստրուկցիոն տարրերի հակազդումները, տեղաշարժերը, լարումները և դեֆորմացիաները: ՎՏՄ եղանակով խնդրի լուծումը ANSYS ծրագրում իրականացվում է երեք փուլով [4]:

1.Առաջին փուլ- հետազոտվող մարմնի հիմնական մոդելի կառուցում:

2.Երկրորդ փուլ- մոդելի վրա անհրաժեշտ ֆիզիկական պայմանների առաջադրում:

3.Երրորդ փուլ- հաշվարկների արդյունքների վերլուծություն:

ՎՏՄ –ով հաշվարկված ֆիզիկական մեծությունները (տեղափոխություններ, դեֆորմացիաներ, լարումներ և այլն) ներկայացվում են ANSYS գրաֆիկական պատուհանում նկարի, աղյուսակի, գրաֆիկի կամ անիմացիայի տեսքով:


Տպագոտում լարվածադեֆորմացիոն վիճակի մոդելավորումը: Խնդրի լուծման վերը նշված փուլերի իրականացումը համակարգչում ստեղծում է տվյալների բազա, որը պարունակում է մոդելի վերաբերյալ ամբողջական ինֆորմացիա: Մակերևութային շերտի տարրերի ցանցային սխեման (նկ. 4) ունի 1830141 հանգույցներ և 861145 տարր, որոնք բաշխված են տպագլանների մակերևութային շերտերում և տպաթղթի վրա: Վիրտուալ գիտափորձի ընթացքում հպման գոտում գտնվող տպագլանների վրա կիրառված է 0,8 ՄՊա ճնշում: Որպես տպաթուղթ վերցված են ոչ կավճապատ օֆսեթ մակնիշի 3 տարբեր տեսակներ $h = 0,07 \dots 0,15$ մմ հաստությամբ և $\rho = 0,642 \dots 0,800$ գ/սմ³ տեսակարար կշռով: Տպագոտում կիրառված նյութերի մեխանիկական հատկությունները տրված են աղ.1-ում:

Աղյուսակ 1


Տպագոտու նյութերի մեխանիկական ցուցանիշները				
N	Տեսակարար ծավալ, q, q/սմ ³	Տեսակարար կշիռ, ρ, ρ/սմ ³	Հաստություն, h, մմ	Ցունգի մոդուլ, E, Պա
1	Տպագլանի նյութը (պողպատ 45X)			
1.1	-	7,85	-	2,1· 10 ⁵
2	Տպագրական թուղթ			
2.1	45	0,642	0,07	1014,6
2.2	60	0,750	0,08	1091,5
2.3	120	0,800	0,15	1113,6
3	Ռետինի շերտերը (նկ. 1)			
3.1	-	1,2	0,36	5102
3.2		1,1	0,30	3231
3.3		1,0	0,49	2516
3.4		1,1	0,80	3231

Ստատիկ և դինամիկ բեռնվածության պայմաններում ANSYS ծրագրով կատարված է <<օֆսեթ գլան-թաղանթ-տպաթուղթ-տպագլան>> համակարգի հպման գոտու լարվածադեֆորմացիոն վիճակի մոդելավորումը նշված երեք տեսակի (N1, N2, N3) տպագրական թղթերի կիրառման դեպքերում:


Որպես օրինակ ներկայացված են լարվածադեֆորմացիոն վիճակի պարամետրերը $N2$ տպագրական թղթի համար հպման դեպքում վերջավոր տարրերի ցանցային սխեման (նկ. 5), ինչպես նաև լարումների, ճնշումների, և դեֆորմացիաների բաշխման տվյալները ստատիկ և դինամիկ բեռնվածության դեպքերում (նկ. 6-8):




Նկ. 5. Հպման գոտում վերջավոր տարրերի ցանցային սխեման



Նկ. 6. Լարումների բաշխման տվյալները ստատիկ (ա) և դինամիկ (բ) բեռնվածության դեպքում



Նկ. 7. Առավելագույն ճնշման կետերը ստատիկ (ա) և դինամիկ (բ) բեռնվածության դեպքում



Նկ. 8. Դեֆորմացիաների բաշխման տվյալները ստատիկ (ա) և դինամիկ (բ) բեռնվածության դեպքում

Ստացված տվյալները վկայում են հետևյալ առանձնահատկությունների մասին (նկ. 6-8, աղ. 2): Ակնհայտ են ստատիկ և դինամիկ բեռնվածության ռեժիմների դեպքում լարվածադեֆորմացիոն վիճակի պարամետրերի փոփոխությունները և ազդման կետերի տեղաշարժերը, որոնք հաստատվում են նաև տեսական դրույթներով: Զգալի են առավելագույն դեֆորմացիաների փոփոխությունները, որոնք կարող են ազդել տպագրման որակի վրա և որը որպես պարտադիր պայման՝ առաջադրում է վերականգնվող բազմաշերտ և ծակոտկոն պլաստոմերների օգտագործումը օֆսեթ թաղանթների համար:

Փորձարկումների արդյունքում $N2$ թղթի կիրառման դեպքում քլորոպրենային կաուչուկի հպման գոտու առավելագույն լարումը ստատիկ և դինամիկ բեռնվածությունների դեպքերում համապատասխանաբար կազմում են $0,180$ և $0,206$ ՄՊա, իսկ օֆսեթ թաղանթի սեղմման դեֆորմացիաները՝ $5,09 \cdot 10^{-2}$ և $6,23 \cdot 10^{-2}$ մմ:

Հարումների և դեֆորմացիաների բաշխումը

<i>N</i>	Բեռնվածությունը	Տպագր. թղթի տեսակը	Հսկման գոտու առավելագույն լարումները, ՄՊա	Առավելագույն դեֆորմացիաներ, δ , մմ
1	Ստատիկ	<i>N1</i>	0,120	0,11
2		<i>N2</i>	0,122	0,16
3		<i>N3</i>	0,126	0,19
4	Դինամիկ	<i>N1</i>	0,197	0,70
5		<i>N2</i>	0,200	0,76
6		<i>N3</i>	0,210	0,78

Վերջին տասնամյակում տպագրության արտադրողականության կտրուկ աճին զուգընթաց անհրաժեշտություն է առաջանում կատարել հավելյալ տեսական և փորձարարական հետազոտություններ՝ տպվածքի որակի վրա տպագրման շրջանային տեղաշարժի և հարաբերական սահմանի ազդեցությունը գնահատելու համար: Դա ենթադրում է գլանների հսկման գոտիներում իրականացնել առաձգական շերտերի հարաբերական տեղաշարժերի գնահատում և որոշել աշխատանքային մակերևույթների լարվածադեֆորմացիոն վիճակի ազդեցությունը տպագրման որակի վրա:

Գրականություն

1. Деджидас Л., Дистри Т. Листовая офсетная печатная машина: механизмы, эксплуатация, обслуживание. — М.: Принт-Медиа центр, 2007. -488 с.
2. Киппхан Г. Энциклопедия по печатным средствам информации. Технологии и способы производства / Пер. с нем. - М.: МГУП, 2003. - 1280 с.
3. Солонец В.И. Исследование жесткостных свойств многослойных упругих покрышек офсетных цилиндров//Вестник МГУП.-2008.- №1.-С.207-214.
4. Лукьянова А.Н. Моделирование контактной задачи с помощью программы ANSYS.-Самара: Самар.гос.техн. ун.-т, 2010.-52с.
5. Инженерный анализ в ANSYS Workbench / В.А. Бруйка, В.Г. Фокин, Е.А. Солдусова и др.- Самара: СамГТУ, 2010.-271 с.

01.02.2018.

Ա.Ա. Մարգարյան, Ր.Ն. Բարսեգյան, Ս.Վ. Վերլինսկի ИССЛЕДОВАНИЕ НАПРЯЖЕННО-ДЕФОРМИРОВАННОГО СОСТОЯНИЯ В РАБОЧИХ ЗОНАХ ПОЛИГРАФИЧЕСКИХ МАШИН

Рассмотрено напряженно-деформированное состояние, возникающее в контактных зонах печатных цилиндров офсетной типографской машины, где одновременно деформируются печатная форма, многослойная пленка офсетного цилиндра, типографская бумага и металлические поверхности цилиндров. Учитывая одновременно текущие разнохарактерные явления в контактной зоне, использован программный пакет ANSYS для количественной оценки параметров напряженно-деформированного состояния, работающий методом конечных элементов. Для бумаги с удельным объемом $q = 45 \dots 120 \text{ г/м}^2$ при статическом и динамическом режимах нагружения определены значения напряжений и деформаций, а также особенности их расположения в контактной зоне.

Ключевые слова: офсетная пленка, типографская бумага, контактная зона, метод конечных элементов, программный пакет.

Ա.Ա. Margaryan, Ր.Ն. Barseghyan, Ս.Վ. Verlinski STUDYING THE STRAIN-STRESS STATE IN THE WORKING ZONES OF PRINTING MACHINES

The stress-strain state occurring in the contact zones of the printing cylinders of offset printing machine, where printing plate, multilayer blanket, printing paper and metal surface of cylinders are simultaneously deforming, is discussed. Taking into account simultaneously occurring different events for quantitative assessment of the stress-strain state's parameters the ANSYS program of finite element method was used. For printing papers with $q = 45 \dots 120 \text{ g/m}^2$ unit volume in static and dynamic loading regimes the values of stress and deformations are defined, as well as their distribution features in contact zone.

Keywords: blanket, printing paper, contact zone, finite elements method, program package.

Մարգարյան Արմինե Աշոտի - ՀԱՊՀ Մեքենագիտության ամբիոնի ասպիրանտ

Բարսեղյան Ռազմիկ Նահապետի - ՀԱՊՀ Մեքենագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Վերլինսկի Սերգեյ Վիտալիի - ՀԱՊՀ Մեքենագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.-մ.գ.թ.

ՀՏԴ 622.143

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

Ռ.Զ. Հակոբյան Վ.Ս. Հովհաննիսյան

ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԸՍՏ ԱՌԱՋԱՆՑՄԱՆ ՕԴՏԻՄԱԼ ՄԵԾՈՒԹՅԱՆ

Դիտարկվել է առաջանցման օպտիմալ մեծության հաշվարկը ըստ T -չափանիշի, ինչը հնարավորություն կտա կրճատել հորատանցքի կառուցման ժամկետը:

Առանցքային բառեր. *հորատանցք, հորատգործիք, հանուկ, երթ, առանցքային բեռնվածություն, շրջագծային արագություն:*

Ներածություն: Հորատման գործընթացի վերջնական նպատակն է հորատարկը հասցնել մինչև նախագծային նիշ (H_0) նվազագույն ժամանակում և 1 մ առաջանցման նվազագույն ծախսով: Տվյալ նիշի արժեքին (H_0) կարելի է հասնել համակարգային տարբեր եղանակներով, որոնք անվանվում են հորատանցման ծրագրեր կամ ռազմավարություն: Պրակտիկայից և կատարված հետազոտությունից հայտնի է, որ մի ծրագրով դժվար է ապահովել երկու՝ հորատանցքի առաջանցման և արժեքի բացարձակ մինիմումներ:

Ինչպես հայտնի է, հորատանցքի հորատման գործընթացը կրում է ընդհատուն (դիսկրետ) բնույթ, քանի որ բուն հորատումից բացի, անհրաժեշտ է կատարել նաև այլ գործողություններ. հորատգործիքի փոխում, հորատահանուկի դուրս հանում այունակային խողովակից, հորատանցքի լվացում, ինչի հետևանքով առաջ են գալիս որոշակի դժվարություններ հորատանցքի հորատման ժամանակի նվազեցման խնդրի լուծման ժամանակ: Ուստի խնդիր է ծագում որոնել լավագույն ծրագիր, որը t_{Σ} ֆունկցիոնալը կբերի նվազագույնի՝

$$t_{\Sigma} = f[\vec{h}(u(t), f(H), t)],$$

որտեղ t_{Σ} -ն հորատանցքի հորատման արտադրողական ժամանակն է (մաքուր հորատում, իջեցում - բարձրացում և օժանդակ աշխատանքներ) ժ-ով, $\vec{h}$ -ը $h_1, h_2, \dots, h_k, \dots, h_m$, բաղադրիչներով վեկտորն է, որտեղ h_k -ն առաջանցումն է k -րդ երթի ընթացքում, մ-ով, $u(t)$ -ն ղեկավարվող պարամետրերն են (առանցքային բեռնվածություն և պտտման շրջագծային արագություն, ինչպես նաև կարելի է վերագրել լվացող լուծույթի քանակը և որակը, ապարքայքայիչ գործիքի տեսակը և կառուցվածքային պարամետրերը), $f(H)$ -ը հորատվող հատվածի ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններն են, որտեղ H -ը հորատանցքի ընթացիկ խորությունն է, մ-ով, t -ն ընթացիկ ժամանակն է՝ հաշված յուրաքանչյուր երթի սկզբից, ժ-ով:

Ֆունկցիոնալի մինիմումի գտնելը բարդ խնդիր է նույնիսկ այն դեպքում, երբ հայտնի է հանքավայրի երկրաբանական կտրվածքը: Այդ իսկ առումով տվյալ խնդիրը հետազոտողների կողմից լուծելիս կատարվում են որոշակի պարզեցումներ և ենթադրություններ:


Համաձայն առավելագույն երթային արագության չափանիշի, ամբողջ հորատանցքի հորատման ընդհանուր տևողությունը՝

$$T_{\Sigma} = \sum_{i=1}^{m_v} t_{hi}^* + \sum_{i=1}^{m_v} t_{hpi}:$$

Սահմանափակող հարաբերակցության դեպքում

$$H_{\delta} = \sum_{i=1}^{m_v} h_i^*,$$

որտեղ H_{δ} -ը հորատանցքի նախագծային խորությունն է մ-ով, m_{δ} -երթերի թիվը:



Նկ.1. Հորատանցքի փողի ընթացիկ դիտարկվող հատված

Ապացուցենք, որ T_L տևողությունը նվազագույնը չի համարվում, այլ գոյություն ունի մոտեցում, որը թույլ է տալիս նվազեցնել այդ ժամանակը: Դիտարկենք առաջանցման ռազմավարությունը ըստ T - չափանիշի: Վերցնելով երկու հարևան երթեր, ու ենթադրեք, որ հորատանցքի առաջանցման օպտիմալ ռազմավարությունն արդեն հայտնի է: Այսինքն h_i և h_{i+1} հայտնի արժեքներին համապատասխանաբար համապատասխանում են H_{i-1} , H_i , H_{i+1} խորությունները (նկ.1), որտեղ $h_i = H_i - H_{i-1}$ և $h_{i+1} = H_{i+1} - H_j$:

Ենթադրենք, որ հորատանցքի H_{i-1} կետից մինչև H_{i+1} կետը հորատվում է փոփոխված ռազմավարությամբ: Դրա համար h_i առաջանցման մեծությանը H_i կետում տանք աճ ΔH չափով, իսկ h_{i+1} առաջանցումը փոքրացնենք նույն չափով: Օգտվելով

$$h^* = \frac{v_0}{k}(1 - e^{-kt_{hi}^*})$$

հարաբերակցությունից որոշենք t_{i-1} տևողությունը, երբ գործիքը $i - 1$ կետից հասնում է j կետ համապատասխան փոփոխված ռազմավարության`

$$t_{i-1,j} = \tau \ln(1 - \frac{H_i - H_{i-1} + \Delta H}{v_0 \tau}),$$

որտեղ τ - ն ժամանակի հաստատունն է, $\tau = 1/k$:

Իջեցման-բարձրացման աշխատանքների տևողությունը

$$t_{i-1,j} = t_0 + \alpha \frac{H_{i-1} + H_i + \Delta H}{2} + \beta(H_i + \Delta H - H_{i-1}):$$

Ամբողջ տեղամասի ($i-1 \div i+1$) անցման տևողությունը

$$t_{\Sigma} = 2t_0 + \frac{\alpha}{2}[H_{i-1} + 2H_i + 2\Delta H + H_{j+1}] + \beta[H_{i+1} - H_{i-1}] + \left[-\tau \ln\left(1 - \frac{H_i + \Delta H - H_{i-1}}{v_0 \tau}\right)\right] + \left[-\tau \ln\left(1 - \frac{H_{i+1} - H_i - \Delta H}{v_0 \tau}\right)\right]:$$

Ենթադրվում է, որ H_{i-1}, H_i, H_{i+1} կետերը ֆիքսված են և բավարարում են հորատանցքի անցման օպտիմալ ռազմավարությանը: Հետևաբար $t_{\Sigma} = \varphi(\Delta H)$ կախվածությունը իր նվազագույն արժեքին կհասնի, երբ $\Delta H = 0$:

Համաձայն Ֆերմայի տեսության

$$\frac{dt_{\Sigma}}{d(\Delta H)_{\Delta H=0}} = \alpha + \frac{\tau}{v_0 \tau - H_i + H_{i-1}} + \frac{\tau}{v_0 \tau - H_{i+1} + H_i} = 0:$$

Որոշակի ձևափոխությունների ենթարկելով արտահայտությունը` կստանանք հետևյալ կախվածությունը, որը բնութագրում է կախվածությունը i -րդ և $i+1$ -րդ երթերի միջև:

$$h_{i+1} = \frac{\tau}{\alpha}(\alpha v_0 - 1) + \frac{\tau^2/\alpha^2}{\tau(\alpha v_0 + 1)/\alpha - h_i} :$$

Համաձայն T-չափանիշի հաշվարկվել է առաջին երթում առաջանցման օպտիմալ մեծությունը (h_{1opt}), ինչպես նաև հորատման արտադրողական ժամանակի նվազագույն տևողությունը ըստ այդ ցուցանիշի և ըստ առավելագույն երթային արագության ցուցանիշի: Հաշվարկների համար հիմք են հանդիսացել Կաշենի պղնձամոլիբդենային հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ օգտագործված P-4, P-6 և U-6 հորատման կայանքների տվյալները` համաձայն որի $t_0 = 0,11$, $\alpha = 0,0017$ ժ/մ, $\beta = 0,035$ ժ/մ:

Հորատանցքի անցման տևողությունը մինչև նախագծային խորություն H_L ըստ T - չափանիշի

$$T_T = \left[\sum_{i=1}^{m_T} -\tau \ln(1 - h_i/v_0 \tau) m_T t_0 + \beta H_L \right] + \alpha \left[\sum_{i=1}^{m_T-1} (m_T - i) h_i + \frac{H_L}{2} \right],$$

որտեղ m_T -ն երթերի թիվն է T-չափանիշի օգտագործման դեպքում:


h_{1opt} և T_T արժեքները հաշվարկվել են v_0, k և H_b մեծությունների համար: Քանի որ h_{1opt} պարզ անալիտիկ որոշումը չի ստացվում, ապա այդ մեծությունը որոշվել է կոնկրետ թվային տվյալներով խնդրի լուծմամբ:

Աղյուսակ

Հորատանցքի անցման հաշվարկային տևողությունը T_T և T_b ($H_b=300$ մ, $v_0=7,4$ մ/ժ)

$K, 1/\text{ժ}$	0,05	0,10	0,15	0,20	0,25	0,30	0,35	0,40	0,45	0,50
$T_T, \text{ժ}$	112,1	126,5	138,2	148,5	157,6	166,4	175,1	183,2	191,3	199,0
$T_b, \text{ժ}$	121,5	134,1	144,5	154,2	161,0	169,4	177,8	185,4	193,4	200,8
$\Delta t, \text{ժ}$	9,4	7,6	6,3	5,7	3,4	3,0	2,7	2,2	2,1	1,8

Աղյուսակում բերված են հորատանցքի անցման տևողության գումարային հաշվարկային մեծությունները T_T համաձայն T-չափանիշի և գումարային տևողությունը համաձայն T_b առավելագույն երթային արագության ցուցանիշի (մինչև 300 մ/ժ խորության հորատանցքերի և սկզբնական արագության):



Նկ.2. T-չափանիշի օգտագործմամբ ժամանակի շահման կախվածությունը v_{tmax}

Նկ. 2-ում պատկերված են $\delta_t = \varphi(v_0)$ կախվածությունները v_0 և k մեծություններից 300 մ խորության հորատանցքերի հորատման դեպքում, որտեղ

$$\delta_t = \frac{\Delta t}{t_{\Sigma T}} 100\%:$$

Կատարված հաշվարկներով ստացված արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

Եզրակացություն

1. K տարբեր արժեքների դեպքում ժամանակի շահումը կազմում է հորատանցքի անցման նվազագույն տևողության 0,6-ից մինչև 6,1% (երբ $v_0 = 7,4$ մ/ժ):
2. Ժամանակի բացարձակ և հատկապես հարաբերական շահումը ըստ $\Delta t = t_{\Sigma v} - t_{\Sigma T}$ ավելանում է սկզբնական v_0 արագության մեծացման և K նվազման հետ:
3. v_{T} և T-չափանիշի համեմատությունը ցույց է տալիս, որ այդ երկու ցուցանիշները մոտենում են միմյանց ապարաքայքայիչ գործիքի ինտենսիվ մաշման ու հորատման սկզբնական ցածր

արագությունների դեպքում և հեռանում են սկզբնական արագության մեծացման և գործիքի մաշման ինտենսիվության փոքրացման դեպքերում:

Գրականություն

1. Соловьев Н.В., Чихоткин В.Ф., Богданов Р.К., Закора А.П. Ресурсосберегающая технология алмазного бурения в сложных геологотехнических условиях. – М.: ОАО «ВНИИОЭНТ», 1997. – 332 с.
2. Козловский Е.А., Гафиятуллин Р.Х. Автоматизация процесса геологоразведочного бурения.-М.: Недра, 1977.-210 с
3. Выгодский М. Я. Справочник по высшей математике.- М.: Недра, 1972.- 870 с.

13.12.2017.

Р.З. Акопян, В.С. Оганнисян

МЕТОДИКА РАСЧЁТА МИНИМАЛЬНОГО ВРЕМЕНИ СТРОИТЕЛЬСТВА СКВАЖИНЫ ПО ОПТИМАЛЬНОЙ ВЕЛИЧИНЕ ПРОХОДКИ

Рассматривается расчёт оптимальной величины проходки по T-критерию, что позволит сократить время строительства скважины.

Ключевые слова: скважина, буровой инструмент, керн, рейс, осевая нагрузка, окружная скорость.

R.Z. Hakobyan, V.S. Hovhannisyan

A METHODOLOGY OF CALCULATION OF THE MINIMUM TIME OF WELL CONSTRUCTION FOR THE OPTIMUM VALUE OF PASSAGE

The calculation of the optimum value of the penetration according to the T-criterion, which will allow to shorten the construction time of the well is considered.

Keywords: well, drilling tool, core, voyage, axial load, circumferential speed. .

Հակոբյան Ռաֆիկ Զինավորի – տ.գ.թ., պրոֆեսոր ՀՊՀՀ "Ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանություն" ամբիոն +374-93-92-95-48

Հովհաննիսյան Վանուշ Սենեքերիմի – տ.գ.թ., “Վեոն” ՓԲԸ, ավագ ճարտարագետ

ՀՏԴ 621.785.5

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

Գ.Ա. Կարապետյան

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԽՈՐԴՈՒԲՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Մշակվել է տեխնոլոգիա՝ արտադրության տարբեր ոլորտներում մեծ մաքրություն և ճշտություն պահանջվող մեքենամասերի մակերևույթների խորդուբորդությունները հարթեցնելու համար: Ցույց է տրված, որ մակերևույթների խորդուբորդությունների հարթեցման համար կարծր համաձուլվածքե հոլովակներ և ծայրակալների՝ ռենիումով և մետաղական այլ գերկարծր նյութերով ջերմադիֆուզիոն մետաղապատմամբ և ծածկութապատմամբ մաշակայուն շերտերի ստացումն օժանդակում է մակերևույթների հարթեցման, գործիքների մաշակայունության բարձրացմանը և մշակված մեքենամասերի որակական հատկանիշների բարձրացմանը:

Առանցքային բառեր. ռենիում, մաշակայուն շերտ, կառուցվածք, գործընթաց, ջերմաստիճան:

Ներածություն: Արտադրական ձեռնարկությունների սարքերի ու սարքավորումների արդիականացման ծրագրերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև արագամաշ և պատասխանատու մեքենամասերի մակերևույթների մաքրության, կարծրության, ամրության, մաշակայունության, երկարակեցության բարձրացման համալիր հարցերի լուծմանը, մեքենամասերի մակերևույթների որակական հատկանիշների բարձրացման ժամանակակից պահանջներին բավարարող տարբեր տեսակի գործիքների ստեղծմանն ու կատարելագործմանը:

Ներկայում տեխնիկայի մի շարք ոլորտներում ուսումնասիրվում են կարծր դժվարահալ համաձուլվածքներ, որոշվում և բացահայտվում՝ տարբեր պրոֆիլի մեքենամասերի մակերևույթների խորդուբորդությունների հարթեցման (նվազեցման) հոլովակների, ծայրակալների և բազմաբնույթ գործիքների ֆիզիկամեխանիկական հատկությունների բարձրացման նոր ուղիներ, ստանում նոր մաշակայուն շերտեր: Մակերևույթների խորդուբորդությունների հարթեցման հոլովակների և ծայրակալների վրա կարելի է ստանալ նիտրիդներից, կարբիդներից, կարբոնիտրիդներից, ռենիումից և այլ միացություններից բաղկացած դժվարահալ մաշակայուն շերտեր: Վերոհիշյալ հարցերով է պայմանավորված աշխատանքի արդիականությունը:


Գլանական, ճակատային և ներքին մակերևույթների խորդուբորդությունների հարթեցման ռենիումապատված հոլովակները և ծայրակալները սովորականների համեմատ օժտված են ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական լավագույն բնութագրերով, այդ թվում՝ բարձր ամրությամբ, կարծրությամբ, մաշակայունությամբ, ջերմահաղորդականությամբ, ունեն շփման փոքր գործակից, որոնք նպաստում են պատասխանատու մեքենամասերի մակերևույթների որակի լավացմանը:

Հետազոտության նպատակն է. ա) գիտականորեն հիմնավորված մեթոդներով, մեքենաշինության մեջ, մետալուրգիայում, արտադրության տարբեր ոլորտներում մեծ մաքրություն, կարծրություն մաշակայունություն, կոռոզիակայունություն և ճշտություն պահանջվող մեքենամասերի, մակերևույթների խորդուբորդությունների հարթեցումը,


բ) մակերևույթների խորդուբորդությունների հարթեցման համար կարծր համաձուլվածքե հոլովակների և ծայրակալների ռենիումով և մետաղական այլ նյութերով ջերմադիֆուզիոն մետաղապատմամբ մաշակայուն շերտերով ծածկութապատման և մաշակայուն շերտերի ստացման տեխնոլոգիայի մշակումը:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Մակերևութային խորդուբորդությունների նվազեցման սարքի՝ Ճնշման եղանակով աշխատող կարծր համաձուլվածքե հոլովակներն ու ծայրակալներն աշխատում են քսութափոխակցող և մի շարք այլ քիմիական լուծույթների առկայության ներքո և աշխատանքի ընթացքում կարող են ենթարկվել քայքայման: Այս առումով անհրաժեշտություն է զգացվում վերոհիշյալ հարթեցուցիչ տարրերը ենթարկել ջերմաքիմիական մշակման, բարձրացնել դրանց մաշակայունությունը, կոռոզիակայունությունը, երկարակեցությունը: Ուսումնասիրություններից պարզվել է, որ լավագույն արդյունքներ կարելի է ստանալ Re-ով մետաղապատմամբ, որն օժտված է բարձր կոռոզիակայունությամբ, մաշակայունությամբ և մի շարք այլ դրական հատկանիշներով:

Գրտնակման սարքերի կարծրահամաձուլվածքե հոլովակները ենթարկվել են Re-ով ջերմաքիմիական մշակման, որն իրականացվել է Re-ի աղի՝ ամոնիուի պերենատի ջրային լուծույթներով և փոշիներով: Տեխնոլոգիական գործընթացը կատարվել է 1000°C ջերմաստիճանում, ջրածնի միջավայրում, հետևյալ օրինաչափությամբ՝




Նկ. 1-ում ցույց է տրված գրտնակման գործիքն իր հիմնական մասերով, իսկ նկ. 2-ում ցույց տրված սխեմայով կատարվում է մշակվող մեքենամասի (լիսեռի) մակերևութային խորդուբորդությունների հարթեցում, որի արդյունքում նվազում են լիսեռի խորդուբորդությունները:



Նկ. 1. Գրտնակման գործիք.

1 - իրան, 2 - հոլովակային հանգույց,
3 - հոլովակ,
4 - զսպանակ, 5 - պտտուտակ,
6 - ցուցանակ, 7 - ինդիկատոր




Նկ. 2. Գրտնակման սխեմա.


1 - հոլովակային հանգույց,
2 - կտրիչակալ, 3 - մշակվող դետալ,
4 - կարծրահամաձուլվածքե հոլովակ,
5 - կապիչ

Մակերևութային խորդուբորդությունների հարթեցման սարքը բաղկացած է 1 իրանային մասից, հոլովակային 2 հանգույցից, որի մեջ տեղակայված է մետաղակե-րամիկական կարծր համաձուլվածքից պատրաստված 3 հոլովակը (այն կարող է լինել ծայրակալ), որն աշխատանքի ընթացքում հպվելով մշակվող մակերևութին, ճնշման ուժի հետևանքով հարթեցնում է խորդուբորդությունները: Կոնտակտային մակերևութին կարելի է լրացուցիչ ուժ գործադրել 4 զսպանակի օգնությամբ: 5 պտտուտակով հնարավոր է նախօրոք ձգել 4 զսպանակը: Սարքի վրա տեղակայված են 6 ցուցանակը և 7 ինդիկատորը: Կարծր համաձուլվածքե հոլովակի վրա ազդող ճիգի մեծությունը կարելի է որոշել ցուցանակի վրա բերված թվերով և ինդիկատորի ցուցմունքով:


Հետազոտության արդյունքները: Մակերևութային խորդուբորդությունների մեծությունները ճնշման տարբեր ուժերի և տարբեր կրկնակի ընթացքների դեպքում ցույց են տրված նկ. 3-5-ում:



Նկ. 3. Մակերևութային խորդուբորդությունները $P=10$ կգ ուժի ազդեցության դեպքում $Rz=16$ մկմ (կրկնակի ընթացքների թիվը - 2)



Նկ. 4. Մակերևութային խորդուբորդությունները $P=25$ կգ ուժի ազդեցության դեպքում $Rz = 13$ մկմ (կրկնակի ընթացքների թիվը - 4)



Նկ. 5. Մակերևութային խորդուբորդությունները $P=25$ կգ ուժի ազդեցության դեպքում $Rz = 10$ մկմ (կրկնակի ընթացքների թիվը - 4)

Մակերևութային խորդուբորդությունները կարելի է նվազեցնել, եթե գրտնակումն իրականացվում է հպման մեծ ուժերի առկայության դեպքում: Որքան փոքր է մատուցումը, այնքան մեծ է մակերևութային խորդուբորդությունների նվազման աստիճանը: Մշակված մակերևույթի որակը կապված է նաև հոլովակի անցումների քանակի հետ:

Հարթեցնող (հարթեցուցիչ) գործիքին տրվում են տարբեր մատուցման շարժումներ, մշակվող լիսեռի տարբեր պտուտավերի դեպքում: Փորձերի արդյունքները բերված են նկ.3, 4, 5-ում: Հարթեցնող գործիքի և մշակվող մեքենամասի հպման ուժի առկայության դեպքում մակերևութային խորդուբորդությունները կարելի է նվազեցնել, որի ցուցանիշները կախված են ընտրված գործիքից, ազդող ուժի մեծությունից և մշակման ռեժիմներից: Մաքուր մակերևույթներ ստացվում են փոքր մատուցումների դեպքում: Մշակված մակերևույթի որակը կախված է նաև հոլովակի երկայնական անցումներից: Դա նշանակում է, որ տեխնոլոգիական գործընթացը կարելի է իրականացնել երկայնական ընթացքներով, որի մեծությունը փորձարկումների ընթացքում ընտրվել է 2...4:

Գիտափորձական տվյալները ցույց են տվել, որ մակերևութների խորդուբորդությունների ինտենսիվ նվազումը կատարվում է առաջին ընթացքների ժամանակ (1...3), հետագայում այն նվազում է փոքր ինտենսիվությամբ:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ լավագույն արդյունքներ կարելի է ստանալ հարթեցնող հոլովակի Re-ով մետաղապատմամբ, որն օժտված է բարձր կոռոզիակայունությամբ, մաշակայունությամբ, պլաստիկությամբ և մի շարք այլ դրական հատկանիշներով:


Գործիքների հոլովակների և ծայրակալների վրա մաշակայուն շերտերի ծածկութապատումն առավելապես մեծացնում է գործիքի մաշակայունությունը և երկարակեցությունը՝ միաժամանակ խնայելով թանկ հղկանյութերը և կրճատելով պատրաստվող նոր գործիքների քանակը: Այս առումով, փորձ է արվել հարթեցուցիչ գործիքի մետաղակերամիկական կարծրամածուկվածքե հոլովակի վրա ստանալ մաշակայուն շերտեր դժվարահալ մետաղներից, ինչպես օրինակ, ռենիումից, կալիումի երկաթացիանիդի, կարբոնատի և փայտածխի պինդ միջավայրում ստացվող նիտրիդներից, կարբոնիտրիդներից:

Հարթեցման ռեժիմի հիմնական բնութագրերի՝ ճնշում (P), մատուցում (s), անցումների քանակ (n) և խորդուբորդություններ, մեծությունների կախվածությունը բերված են նկ. 3...5-ում: Պողպատների մշակման համար լավագույն արժեքներն են $P=40...45$ կգ, $s=0.1$ մմ/պտ, $n=3...4$ և հարթեցման արագությունը $V=80-120$ մ/ր և մակերևութի խորդուբորդությունը $Rz=10-16$ մկմ (քսուքը արտադրական յուղով 20 կամ էմուլսիայով): Հարթեցման նման պայմաններում առաջնային մակերևութի խորդուբորդությունը լավանում է 2...4 դասով: Դրանք համարվում են օպտիմալ նաև մակերևութների ամրության և մաշակայունության բարձրացման գործընթացում:

Փորձեր են կատարվել խառատային հաստոցի վրա, մշակվել են տարբեր մակնիշի պողպատներ: Մշակելուց հետո, որոշվել են մշակված մակերևութի խորդուբորդությունների մեծությունները և պարզ է դարձել, որ մակերևութային խորդուբորդությունների մեծությունների վրա էական ազդեցություն ունեն գործիքի մատուցման մեծությունը, ճնշման ուժը, պտտման արագությունը:

Հետազոտությունների արդյունքում պինդ և գազային միջավայրերում ջերմադիֆուզիոն մշակմամբ ստացված են մաշակայուն շերտեր (կարբիդներ, նիտրիդներ, կարբոնիտրիդներ, դժվարահալ մետաղներ՝ տիտան, վոլֆրամ, ռենիում և այլն) կարծրամածուկվածքե հոլովակների, գնդերի, ծայրակալների վրա:

Մեխանիկական փորձարկումների (նկ.6) մեծ շրջանակը հնարավորություն է տալիս մանրամասն փորձերի արդյունքում բացահայտել կարծրամածուկվածքե ռենիումապատված հոլովակների և ծայրակալների համալիր համեմատական բնութագրերը:



*Նկ.6. Մակերևութների
խորդուբորդությունների հարթեցումը
մետաղակերամիկական
կարծրամածուկվածքե ռենիումով
մետաղապատված հոլովակներով*

Եզրակացություն. Կատարած գիտափորձական տվյալներից պարզ է դարձել, որ ճնշման եղանակով մակերևութային շերտի խորդուբորդությունների հարթեցումը և նվազեցումը կարևոր նշանակություն ունի մեքենամասերի մակերևութային շերտի որակի լավացման և կարծրության բարձրացման գործընթացում:

Կարծրամածուկվածքե հոլովակների և ծայրակալների մակերևութային մաշակայուն շերտերի (նիտրիդներ, կարբիդներ, կարբոնիտրիդներ և այլն) ստացումը, ինչպես նաև ռենիումով մետաղապատումը գիտատեխնիկական նոր նվաճում է: Այն հնարավորություն է տալիս բացահայտելու նոր ոլորտներ, առավել բարձրացնելու պատասխանատու մեքենամասերի և գործիքների մաշակայունությունը և երկարակեցությունը:

Գրականություն

1. The analysis of mechanism of rhenium-coated tools' wear-resistance rising / **D. Petrosyan, G. Poghosyan, G. Hovsepyan, et al** // Annals of Agrarian Science. - June 2017.- Vol.15, issue 2.- P.184-186.
2. Durability and performance increase method of carbide drilling tools / **D. Petrosyan, G. Poghosyan, A. Altunyan, et al** // Bulletin of National Agrarian University of Armenia. - 2016.-N3. -P.47-50.
3. Способ повышения качества твердосплавных буровых инструментов / **Г. Овсепян, Г. Карапетян, Г. Погосян и др.** // Вестник НПУА: Сборник научных трудов. - 2017.-Часть 2.-С. 876-880.
4. **Азаревич Г.М., Берштейн Г.Ш.** Инструмент для чистовой обработки цилиндрических поверхностей давлением. Размерно-чистовая обработка деталей машин пластическим деформированием взамен обработки резанием. - М.: НИИмаш, 1965.

20.12.2017.

Г.А. Карапетян

УВЕЛИЧЕНИЕ КАЧЕСТВЕННЫХ ХАРАКТЕРИСТИК ИЗДЕЛИЙ, СНИЖАЮЩИХ ПОВЕРХНОСТНЫЕ НЕРОВНОСТИ

Выработана технология для разглаживания неровностей поверхностей машинных частей, требующих высокой чистоты и точности в разных сферах производства. Показано, что для разглаживания неровностей поверхностей получение износостойких слоев термодиффузионной металлизацией и покрытием рением и другими металлическими сверхтвердыми материалами прочных сплавов роликов позволит повысить износостойкость разглаживающих поверхностей инструментов и улучшить качественные характеристики обработанных машинных частей.

Ключевые слова: рений, износостойкий слой, структура, процесс, температура.

G.A. Karapetyan

IMPROVEMENT OF QUALITATIVE CHARACTERISTICS OF INSTRUMENTS REDUCING SURFACE ROUGHNESS

A technology has been processed to smooth the surface roughness of auto-parts requiring perfect cleanliness and accuracy in different spheres of production. It is shown, that for the surface roughness smoothing the production of durability layers by thermal diffusion metal coating and covering with rhenium and other supersolid metallic materials will support to increase the durability of surface smoothing devices and to improve the qualitative characteristics of the processed auto-parts.

Keywords: rhenium, durability layer, structure, process, temperature.

Կարապետյան Գոռ Արաի – մագիստրանտ, Ընդերքաբանության և մետալուրգիայի ֆակուլտետ (ՀԱՊՀ)

ՀՏԴ 663.223

ՄՆՆԴԻ ԵՎ ԹԵԹԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Կ.Ն. Կազումյան, Վ.Վ. Մկրտչյան

ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԽԱՂՈՒՆ ԳԻՆՈՒ ԷՔՍՊԵԴԻՑԻՈՆ ԼԻԿՅՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Ներկայացված է վարդագույն խաղուն գինու արտադրության համար չորս տարբեր տեսակի էքսպեդիցիոն լիկյորների արտադրության տեխնոլոգիա, որոնց մեջ համապատասխանաբար օգտագործվել են խաղողի, ծիրանի, սև սալորի և խնձորի բրենդիններ: Այդ տեսակի էքսպեդիցիոն լիկյորների արտադրությունը համարվում է նորույթ Հայաստանի Հանրապետությունում:

Առանցքային բառեր. խաղուն գինի, էքսպեդիցիոն լիկյոր, սախարոզա, բրենդի:

Ներածություն. Էքսպեդիցիոն լիկյորը համարվում է խաղուն գինու հիմնական բաղադրիչ մասերից մեկը և կարևոր դեր է խաղում խաղուն գինու որակի ձևավորման մեջ:

Էքսպեդիցիոն լիկյորը պատրաստվում է խաղուն գինու գինենյութի մեջ սախարոզայի լուծման միջոցով: Սախարոզայի հետ միասին ավելացվում է կոնյակի սպիրտ՝ թնդության կարգավորման համար, ինչպես նաև ծծմբի երկօքսիդ, կիտրոնաթթու և ասկորբինաթթու՝ էքսպեդիցիոն լիկյորը օքսիդացումից զերծ պահելու և հետագայում հնեցման ժամանակ թթվածնի ասիմիլյացիան արագացնելու նպատակով [1]:

Բոլոր բաղադրիչ մասերի միախառնումից հետո էքսպեդիցիոն լիկյորը ենթարկվում է ֆիլտրացիայի և ուղարկվում հնեցման, որը տևում է առնվազն 100 օր:

Ըստ ԳՕՍՍ 33311-2015-ի, էքսպեդիցիոն լիկյորը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- շաքարի պարունակություն՝ 700...800 գ/դմ³,
- սպիրտի պարունակություն՝ ոչ ավել քան 11,5% ծավ.,
- տիտրվող թթուների պարունակություն՝ 6...8 գ/դմ³ [2]:

Հետազոտության արդյունքը. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող «Գետնատուն» գինու գործարանում պատրաստվել է չորս տեսակի էքսպեդիցիոն լիկյոր՝ վարդագույն խաղուն գինու արտադրության համար:

Էքսպեդիցիոն լիկյորների արտադրության համար օգտագործվել է Վայոց Ձորի տարածաշրջանի՝ ծովի մակերևույթից 1450մ բարձրության վրա գտնվող խաղողի այգիներում աճեցվող Արենի տեսակի խաղողից պատրաստված վարդագույն խաղուն գինու գինենյութ, նույն տարածաշրջանում աճեցվող խաղողի, ծիրանի, սև սալորի և խնձորի բերքից պատրաստված բրենդիններ՝ յուրաքանչյուրը 5 տարվա հնեցմամբ, սախարոզա, կիտրոնաթթու և ծծմբի երկօքսիդ:

Վարդագույն խաղուն գինու գինենյութի պատրաստման համար օգտագործվող խաղողի բերքահավաքը իրականացվել է հոկտեմբերի 20-ին՝ կատարելով մանրակրկիտ ընտրություն և հավաքելով միայն բարձր որակի խաղող՝ բացառելով տերևների, չհասունացած կամ վնասված ողկույթների և հողի մասնիկների առկայությունը:

Խաղողը գործարանում վերամշակվել է հատուկ իտալական արտադրության գրտնակային ջարդիչ-չանչազատիչի միջոցով, որի աշխատանքի շնորհիվ խաղողը ենթարկվել է հնարավորինս նուրբ ջարդման: Փլուշապոմպի միջոցով փուշը հավաքվել է չժանգոտվող պողպատից պատրաստված պահամանի մեջ և հատուկ խաղուն գինու գինենյութի պատրաստման համար առանձնացվել է ինքնահոս քաղցուն, որն էլ ենթարկվել է պարզեցման ֆլոտացիայի եղանակով: Պարզեցման այս եղանակը նորույթ է Հայաստանի գինեգործության համար, որի առանձնահատկությունն այն է, որ պարզեցման ողջ ընթացքը տևում է 1...1,5 ժ:

Վերջնականապես պարզված քաղցուն հավաքվել է խմորման համար նախատեսված չժանգոտվող պողպատից պատրաստված հատուկ խմորման պահամանում, որտեղ ենթարկվել է խմորման:

Սպիրտային խմորման տևողությունը կազմել է 14 օր և ստացվել է 11% ծավ. թնդությամբ և 2 գ/դմ³ մնացորդային շաքարի պարունակությամբ խաղուն գինու գինենյութ:

Սպիրտային խմորման ավարտից հետո վարդագույն խաղուն գինու գինենյութը մեկ ամսվա ընթացքում պահվել է խմորասնկային նստվածքի հետ միասին, որի հետ մեկտեղ ընթացել է գինենյութի խնձորակաթնաթթվային խմորումը: Մեկ ամիս անց կատարվել է փակ փոխլցում, որից հետո վարդագույն խաղուն գինու գինենյութը պահվել է չժանգոտվող պողպատից պատրաստված պահամանում 15 °C ջերմաստիճանային պայմաններում առանց օդի ներթափանցման՝ հանգստացնելու նպատակով:

Էքսպեդիցիոն լիկյորի արտադրության համար օգտագործվող վարդագույն խաղուն գինու գինենյութը ենթարկվել է ֆիզիկաքիմիական հետազոտության, որի արդյունքները ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Վարդագույն խաղուն գինու գինենյութի ֆիզիկաքիմիական հետազոտության արդյունքները

№	Ցուցանիշ	Չափի միավոր	Ցուցանիշի արժեքը
1	Մնացորդային շաքար	գ/դմ ³	2
2	Էթիլ սպիրտ	% ծավ.	11
3	Տիտրվող թթուներ ըստ գինեթթվի	գ/դմ ³	5.85
4	Ցնդող թթուներ ըստ քացախաթթվի	գ/դմ ³	0.592
5	pH		3.2
6	Ազատ SO ₂	մգ/դմ ³	20.0
7	Ընդհանուր SO ₂	մգ/դմ ³	80.6

Օգտագործվող գինենյութի վերլուծական ստուգումից հետո նրա մեջ լուծվել է սախարոզա այնպիսի քանակությամբ, որ ստացված խառնուրդի մեջ շաքարի պարունակությունը կազմի 800 գ/դմ³: Սախարոզայի լուծումից հետո ստացված խառնուրդը բաժանվել է չորս մասի և ավելացվել համապատասխանաբար չորս տարբեր տեսակի բրենդին՝ խաղողի բրենդի՝ 65% ծավ. թնդությամբ, ծիրանի բրենդի՝ 47% ծավ. թնդությամբ, սև սալորի բրենդի՝ 47% ծավ. թնդությամբ և խնձորի բրենդի՝ 47% ծավ. թնդությամբ՝ յուրաքանչյուրը 5 տարվա հնեցմամբ: Օգտագործվող բրենդիները ավելացվել են այնպիսի քանակությամբ, որ ստացվել է 11,4% ծավ. թնդությամբ չորս տարբեր տեսակի էքսպեդիցիոն լիկյոր [3-5]:

Հնեցման ժամանակ էքսպեդիցիոն լիկյորները օքսիդացումից զերծ պահելու, ինչպես նաև պատրաստման ժամանակ լիկյորների մեջ առաջացած թթվածնի մեծ քանակության ասիմիլյացիան արագացնելու նպատակով լիկյորներին ավելացվել է կիտրոնաթթու 1 գ/դմ³ չափաքանակով և ծծմբի երկօքսիդ 60 մգ/դմ³ չափաքանակով [3]:

Ստացված էքսպեդիցիոն լիկյորները ֆիլտրվել և ենթարկվել են ֆիզիկաքիմիական հետազոտության, որի արդյունքները ամփոփված են աղյուսակ 2-ում:

Էքսպեդիցիոն լիկյորների ֆիզիկաքիմիական հետազոտության արդյունքները

Հետազոտվող նյութը	Էթիլ սպիրտ, % ծավ.	Շաքար, գ/դմ ³	Ընդհանուր SO ₂ , մգ/դմ ³	Ազատ SO ₂ , մգ/դմ ³	Տիտրվող թթուներ, գ/դմ ³
Էքսպեդիցիոն լիկյոր (խաղողի բրենդիի հավելմամբ)	11,4	800	75	28	6.1
Էքսպեդիցիոն լիկյոր (ծիրանի բրենդիի հավելմամբ)	11,4	800	75	28	6.0
Էքսպեդիցիոն լիկյոր (սև սալորի բրենդիի հավելմամբ)	11,4	800	75	25	6.0
Էքսպեդիցիոն լիկյոր (խնձորի բրենդիի հավելմամբ)	11,4	800	75	28	6.0

Բացի վերլուծական ստուգումից, իրականացվել է ստացված էքսպեդիցիոն լիկյորների զգայորոշման ստուգում, ինչի արդյունքում նկատվել է, որ յուրաքանչյուր լիկյոր ունի իր մեջ ավելացված համապատասխան տեսակի բրենդիի դուրեկան համ և բույր:

Վերլուծական և զգայորոշման ստուգումից հետո էքսպեդիցիոն լիկյորները ուղարկվել են հնեցման ապակե տարաների մեջ հատուկ ստորգետնյա մառան, որտեղ օդի ջերմաստիճանը կազմում է 15...18 °C [4,5]:

Այսպիսով, հետազոտության արդյունքում ստացվել է չորս նոր տեսակի էքսպեդիցիոն լիկյորներ, որոնք համապատասխանում են վարդագույն խաղուն գինու արտադրության համար էքսպեդիցիոն լիկյորներին առաջադրվող պահանջներին:

Գրականություն

1. **Boulton, R.B., Singelton, V.L., Bisson, L.F., Kunkee, R.E.** Principles and practices of winemaking. – Nova York: International Thomson Publishing, 1995. – 603p.
2. Межгосударственный стандарт ГОСТ 33336-2015. Вина игристые. Общие технические условия. – М., 2016.
3. **Авакянц С.П.** Игристые вина. – М.: Агропромиздат, 1986. – 272с.
4. **Авакянц С.П.** Биохимические основы технологии шампанского.–М.: Пищевая промышленность, 1980. – 352с.
5. **Zoecklein, B.W., Fugelsang, K.C., Gump, B.H., Nury, F.S.** Wine analyses and production. – Maryland: Aspen Publishers, 2000. – 613p.

21.11.2017.

К.Н. Казумян, В.В. Мкртчян

ТЕХНОЛОГИЯ ПРИГОТОВЛЕНИЯ ЭКСПЕДИЦИОННОГО ЛИКЕРА ДЛЯ РОЗОВОГО ИГРИСТОГО ВИНА

Дано описание технологии приготовления четырех различных типов экспедиционного ликера для производства розового игристого вина, в которых были использованы соответственно виноградные, абрикосовые, черносливовые и яблочные бренди. Производство таких типов экспедиционного ликера считается новинкой в Республике Армения.

Ключевые слова: игристое вино, экспедиционный ликер, сахароза, бренди.

K.N. Kazumyan, V.V. Mkrtchyan

EXPEDITION LIQUEUR PRODUCTION TECHNOLOGY FOR ROSE SPARKLING WINE

The description of four different types of expedition liqueur production technologies for rose sparkling wine is given, where grapes, apricot, black plum and apple brandies were used respectively. Production of such types of expedition liqueur is considered a novelty in the Republic of Armenia.

Keywords: sparkling wine, expedition liqueur, sugar, brandy.

Կազումյան Կարեն Նորիկի – տեխնիկական գիտությունների դոկտոր, Մերձավանի գիտահետազոտական ինստիտուտ,

Մկրտչյան Վահե Վազգենի – ՀԱԱՀ-ի ասպիրանտ

ՀՏԴ 663.542

ՄՆՆԴԻ ԵՎ ԹԵԹԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Վ.Մ. Ավետիսյան Ա.Հ.Ներսիսյան

ԳԵՏՆԱԽՆԱԶՈՐԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՆՈՒ ՄԵՋ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐԻ,
ՀԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՒՐԱՎԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Ուսումնասիրվել են գետնախնձորի բնական գինու մեջ օրգանական թթուների, հանքային և բուրավետ նյութերի որակական և քանակական ցուցանիշները: Ցույց է տրված, որ գինու զգայորոշման ցուցանիշների ձևավորման գործընթացում օրգանական թթուները հատուկ դեր են կատարում: Հանքային տարրերի պարունակությունը կախված է գետնախնձորի տեսակից, բնակլիմայական պայմաններից, հիդրոտեխնիկայից և գինու պատրաստման տեխնոլոգիայից: Սպիրտային խմորման ընթացքում գինու համի և փնջի ստեղծման համար կարևոր դեր ունեն բուրավետ նյութերը:

Առանցքային բառեր. օրգանական թթուներ, հանքային տարրեր, բուրավետ նյութեր, գինենյութ, քաղցու:

Գինու օրգանական թթուները ներկայացված են ալիֆատիկ (միահիմն և բազմահիմն) և բուրավետ թթուներով: Դրանք ակտիվ մասնակցում են գինու պատրաստման ընթացքում տեղի ունեցող տարբեր կենսաքիմիական գործընթացներին: Քաղցուի և գինու մեջ դրանք գտնվում են ազատ կամ կապված վիճակում [1]:

Օրգանական թթուները և դրանց փոխազդեցության նյութերը կարևոր դեր են կատարում գինիների զգայորոշման ցուցանիշների ձևավորման գործընթացներում:

Գինիների մեջ խնձորաթթվի բարձր պարունակությունը գինիներին կարող է հաղորդել ոչ դուրեկան սրություն: Այդպիսի թթվությունը կոչվում է «կանաչ»: Թթուների անբավարար պարունակության դեպքում գինին ստացվում է «հարթ»: Խնձորաթթուն բավականին ինտենսիվ ծախսվում է շնչառական գործընթացների ժամանակ: Շոգ կլիմայով շրջաններում, որտեղ բույսերի մեջ շնչառական գործընթացները ընթանում են ավելի ինտենսիվ, հասունացման վերջում խնձորաթթվի ծախսը գերազանցում է գինեթթվի ծախսին, իսկ այդպիսի հումքից պատրաստված գինիները ունենում են ավելի ցածր թթվություն: Հյուսիսային շրջանների գինիների մեջ խնձորաթթվի պարունակությունը գերազանցում է գինեթթվի պարունակությանը:

Քաղցուի կամ գինու մեջ խնձորաթթվի բարձր պարունակությունը նվազեցնում են կենսաբանական եղանակով, որը հիմնված է այն հանգամանքի վրա, որ որոշ միկրոօրգանիզմներ ընդունակ են խմորել խնձորաթթուն: Գինեգործության մեջ լայն կիրառություն են գտել կաթնաթթվային բակտերիաները և *Schizosaccharomyces* (շիզոսախարոմիցես) ցեղի խմորասնկերը: Կաթնաթթվային բակտերիաները խնձորաթթուն վերածում են կաթնաթթվի և ածխաթթու գազի, իսկ *Schizosaccharomyces* ցեղի խմորասնկերը՝ էթիլ սպիրտի և ածխաթթու գազի, որի արդյունքում տիտրվող թթվության ցուցանիշը նվազում է խմորված խնձորաթթվի չափով [2, 3]:

Գինիների մեջ հանքային տարրերի պարունակությունը կախված է գետնախնձորի սորտից, բնակլիմայական պայմաններից, ագրոտեխնիկայից և գինու պատրաստման տեխնոլոգիայից:

Հանքային տարրերից գինիների մեջ առավել մեծ քանակներով հայտնաբերվել է կալիում [3]:

Բուրավետ նյութերը (սպիրտներ, ալդեհիդներ, բարդ էթերներ, թթուներ և այլն) սպիրտային խմորման ընթացքում մեծ քանակություններով սինթեզվելով խմորասնկերի բջիջների կողմից և գինենյութի տեխնոլոգիական մշակումների և պահպանման ընթացքում, որոշիչ դեր են խաղում գինիների բույրի և փնջի ստեղծման ժամանակ:

Տարբերում են առաջնային և երկրորդային բուրավետ նյութեր: Առաջնային բուրավետ նյութերը պարունակվում են գետնախնձորի պալարներում: Առաջնային բուրավետ նյութերի որակական և քանակական կազմը կախված է գետնախնձորի սորտից, հասունացման աստիճանից և այլն:

Երկրորդային բուրավետ նյութերն առաջանում են սպիրտային խմորման և պահպանման ընթացքում՝ ածխաջրերից, ամինաթթուներից և այլն: Խմորման ընթացքում, խմորասնկերի ֆերմենտային համակարգի շնորհիվ տեղի են ունենում բարդ կենսաքիմիական գործընթացներ,

որոնց արդյունքում առաջանում են ըստ բնույթի բավականին տարբեր նոր նյութեր: Մպիրտային խմորման երկրորդային նյութերի որակական և քանակական կազմը կախված է խմորասնկերի ռասսայից, աերացիայից, խմորման ջերմաստիճանից, քաղցուի կազմից, խմորման մեթոդից և այլն:

Գինու բուրավետ նյութերից են բարձր սպիրտները, որոնք առաջանում են նաև ամինաթթուների օքսիդացիոն դեգամինացման և հետագա դեկարբօքսիդացման արդյունքում: Ընդ որում, յուրաքանչյուր ամինաթթվից առաջանում է համապատասխան սպիրտ:

Գետնախնձորի գինենյութի մեջ խնձորաթթվի պարունակությունը մեծ է, ինչը պայմանավորված է ՀՀ Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու բնակլիմայական պայմաններով և գինիների պատրաստման տեխնոլոգիայով: Չնայած այդ հանգամանքին՝ խնձորաթթվի բարձր պարունակությունը չի վատացնում գինենյութի զգայորոշման ցուցանիշները և գինենյութին հաղորդում է թարմություն:

Գետնախնձորի գինենյութի մեջ այդ ցուցանիշը կազմում է 232 մգ/100գ:

Կիտրոնաթթվի պարունակությունը գետնախնձորի գինենյութում կազմել է 38,3 մգ/100 գ:

Կիտրոնաթթուն գինու մեջ առաջանում է սպիրտային խմորման ժամանակ, խնձորակաթնաթթվային խմորման արդյունքում՝ որպես երկրորդային նյութ: Գինու մեջ կաթնաթթվի շատ բարձր պարունակությունը կարող է վկայել գինու հիվանդության մասին:

Կաթնաթթուն գինիներին հաղորդում է փափկություն: Հիվանդ գինիների մեջ կաթնաթթվի պարունակությունը կարող է հասնել մինչև 12 գ/դմ³: Կաթնաթթվի պարունակությունը մշակված տեխնոլոգիայով պատրաստված գետնախնձորի գինենյութի մեջ կազմել է 162 մգ/100գ քանակի, որի տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Գետնախնձորի գինենյութի մեջ օրգանական թթուների պարունակությունը			
Գինենյութի անվանումը	Օրգանական թթուների պարունակությունը, մգ/100գ		
	Խնձորաթթու	Կիտրոնաթթու	Կաթնաթթու
Գետնախնձորի գինենյութ	232	38,3	162

Հետագոտված գինենյութի մեջ կալիումի պարունակությունը կազմում է 2820 մգ/կգ:

Գինենյութերի մեջ կալցիումի ավելցուկային պարունակությունը մեծացնում է բյուրեղային պղտորումների հավանականությունը: Թույլատրելի սահմաններից բարձր Ca - ի կոնցենտրացիաները նպաստում են բիոպոլիմերների առաջացմանը և դրանց կոագուլացմանը՝ հետագա բյուրեղառաջացմամբ:

Մշակված տեխնոլոգիայով պատրաստված գետնախնձորի գինենյութում հայտնաբերվել է կալցիում 370 մգ/կգ քանակությամբ:

Ըստ մի շարք հեղինակների էլեկտրադիալիզի միջոցով կարելի է ապահովել գինիների կայունությունը պղտորումների նկատմամբ, որոնք պայմանավորված են մետաղի կատիոնների ավելցուկներով (մետաղական կասսեր, բյուրեղային պղտորումներ և այլն): Սեղանի գինիների պահպանման ընթացքում կալցիումի պարունակությունը զգալի նվազում է:

Հետագոտված գինենյութում նատրիում չի պարունակվել:

Հետագոտված գետնախնձորի գինենյութում մագնեզիումի պարունակությունը հայտնաբերվել է 100 մգ/կգ քանակությամբ:

Գինենյութերի անվտանգության ցուցանիշների հետազոտման ընթացքում որոշվել է նաև կապարի (0,06 մգ/կգ), սնդիկի (0,001 մգ/ կգ), կադմիումի (0,01 մգ/կգ), պղնձի (0,005 մգ/կգ), ցինկի (0,01 մգ/կգ) պարունակությունները, որոնք չեն գերազանցում թույլատրելի սահմանները:

Գետնախնձորի գինենյութի մեջ հանքային նյութերի կազմը ցուցադրված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Գետնախնձորի գինենյութի մեջ հանքային նյութերի կազմը	
Տարրը	Պարունակությունը, մգ/կգ
Ca	0,43
Zn	14,8
Mn	38,4
Ce	0,01
Ni	0,24
Ca	370
Mg	10,0
P	440,0
K	2820,0

Գետնախնձորի գինու մեջ ալդեհիդները և կետոններն առաջանում են ածխաջրերից, ամինաթթուներից: Սպիրտների օքսիդացման արդյունքում դրանց զգալի մասը կազմում է քացախալդեհիդը: Այն մեծ քանակներով առաջանում է սպիրտային խմորման ժամանակ:

Ալդեհիդները օժտված են մեծ ռեակցիոն ունակությամբ: Դրանք փոխազդում են ամինաթթուների, սպիրտների, անտոցիանների, ծծմբային թթվի և այլ միացությունների հետ: Դրանք մի շարք նյութերի (թթուներ, սպիրտներ, ալդեհիդներ) սկզբնաղբյուրներն են, որոնք մասնակցում են գինիների զգայորոշման հատկությունների ձևավորմանը:

Պատրաստված գետնախնձորի գինում հետազոտվել են ցնդող և բուրավետ նյութերը: Արդյունքները ամփոփված են աղյուսակ 3 - ում: Աղյուսակի տվյալներից երևում է, որ քացախալդեհիդի պարունակությունը կազմել է 5,83 մգ/դմ³:

Ֆուրֆուրոլի քանակությունը, որը կազմել է 0,42 մգ/դմ³, առաջացել է պենտոզ -ների դեհիդրատացման արդյունքում, ինչպես նաև պեկտինային նյութերից:

Աղյուսակ 3

Բուրավետ նյութերի որակական և քանակական կազմը	
Բուրավետ նյութեր (մգ/դմ ³)	Գինենյութի անվանումը
	Գետնախնձորի
Քացախալդեհիդ	5,83
Դիացետիլ	-
Ացետոն	1,83
Ֆուրֆուրոլ	0,42
1.3 - պրոպիլենգլիկոլ	0,37
Ընդհանուր	8,45
Բարդ եթերներ	
Էթիլֆորմիատ	0,11
Մեթիլացետատ	1,51
Էթիլացետատ	10,3
Իզոբուտիլացետատ	-
Էթիլվալերիատ	0,36
Մեթիլկապրիլատ	0,41
Էթիլկապրիլատ	0,32
Էթիլլալատ	-
Ընդհանուր	12,01
Էթիլացետալ	0,03
Մեթանոլ	30,21
Բարձր սպիրտներ	
2 – պրոպանոլ	-
1 – պրոպանոլ	320,21
Իզոբութանոլ	34,56
1 – բութանոլ	0,81
Իզոամիլ սպիրտ	272,6
1 - ամիլոլ	0,18
1 – հեքսանոլ	3,21
Ընդհանուր	343,57
Ալիֆատիկ թթուներ	
Պրոպիանաթթու	0,03
Իզոկարագաթթու	0,72
Իզո – վալերիանաթթու	0,43
Վալերիանաթթու	-
Կարագաթթու	0,38
Ընդհանուր	1,56
Կապրինային ալդեհիդ	11,36
Ֆենիլէթանոլ	25,8
Բուրավետ նյութերի ընդհանուր պարունակությունը	402,75

Մենթոլի պարունակությունը, որն առաջացել է պեկտինային նյութերից և կազմել է 30,21 մգ/դմ³, անցանկալի է, քանի որ այն բավականին թունավոր է:

Գետնախնձորի բույրի կարևոր բաղկացուցիչներից են եթերները, որոնք կենսաբանական եթերացման գործընթացի ժամանակ առաջացել են սպիրտների և օրգանական թթուների փոխազդեցության արդյունքում: Գետնախնձորի գինու մեջ բարդ եթերներից հայտնաբերվել է էթիլացետատ, $10,3 \text{ մգ/դմ}^3$ քանակությամբ:

Գինու մեջ պարունակվող բուրավետ նյութերը խիստ բազմազան են և տարբերվում են իրենց կոնցենտրացիաներով: Ածխածնի երեք և ավելի ատոմ ունեցող ալիֆատիկ սպիրտները կոչվում են բարձր սպիրտներ:

Բարձր սպիրտներին են դասվում պրոպիլ, բութիլ, ամիլային, հեպտիլ և մյուս սպիրտները և դրենց իզոմերները՝ իզոամիլ, իզոբութիլ և այլն: Տարբեր կոնցենտրացիաների դեպքում բարձր սպիրտներն ունեն ծաղկային, մրգային կամ սիվուխային երանգներ:

Գետնախնձորի գինու մեջ բարձր սպիրտների հիմնական քանակությունը առաջացել է խմորման ընթացքում: Դրանցից մեծ քանակություն կազմողը իզոմիլ սպիրտն է՝ $272,6 \text{ մգ/դմ}^3$: Հայտնաբերվել են նաև իզոբութանոլ և 1 - պրոպանոլ սպիրտները՝ համապատասխանաբար $34,56$ և $32,21 \text{ մգ/դմ}^3$ քանակություններով:

Բուրավետ նյութերից գետնախնձորի գինենյութի մեջ հայտնաբերվել է β -ֆենիլէթանոլ, որը կազմել է $25,8 \text{ մգ/դմ}^3$: Ֆենիլէթանոլը տերպենային սպիրտ է՝ օժտված վարդի բույրով, որը փոքր կոնցենտրացիաներով գինուն հաղորդում է հաճելի երանգներ: Գինենյութերում ֆենիլէթանոլը առաջանում է հիմնականում էֆենիլալանինից և թիրոզինից:

Գրականություն

1. Кишковский З.Н. и др. Химия вина. - М.: Пищевая промышленность, 1976.-254с.
2. Герасимов М.А. Технология вина. - М.: Пищевая промышленность, 1959.-642с.
3. Кишковский З.Н., Скурихин И.М. Химия вина. - М.: Агропромиздат, 1988.-254с.

11.01.2018.

В.М. Аветисян, А.А. Нерсисян

ИССЛЕДОВАНИЕ КАЧЕСТВЕННЫХ И КОЛИЧЕСТВЕННЫХ ПОКАЗАТЕЛЕЙ ОРГАНИЧЕСКИХ КИСЛОТ, МИНЕРАЛЬНЫХ ЭЛЕМЕНТОВ И ДУШИСТЫХ ВЕЩЕСТВ В ТОПИНАМБУРОВОМ НАТУРАЛЬНОМ ВИНЕ

Изучены качественные и количественные показатели органических кислот, минеральных элементов и душистых веществ в топинамбуровом натуральном вине. Показано, что органические кислоты в процессе формирования органолептических показателей вина имеют важную роль. Содержание минеральных элементов зависит от сорта топинамбура, метеорологических условий, гидротехники и технологии приготовления вина. В процессе спиртового брожения душистые вещества имеют важную роль при создании вкуса и букета вина.

Ключевые слова: органические кислоты, минеральные элементы, душистые вещества, виноматериал, сусло.

V.M. Avetisyan, A.H. Nersisyan

INVESTIGATION OF QUALITATIVE AND QUANTITATIVE INDICES OF ORGANIC ACIDS, MINERAL ELEMENTS AND FRAGRANT SUBSTANCES IN NATURAL WINE OF JERUSALEM ARTICHOKE

The qualitative and quantitative characteristics of organic acids, mineral elements and fragrant substances in natural wine of Jerusalem artichoke are studied. It is shown that organic acids in the process of forming organoleptic indicators of wine have an important role. The content of the mineral elements depends on the variety of Jerusalem artichoke, meteorological conditions, hydraulic engineering and technology of wine production. In the process of alcohol fermentation, fragrant substances have an important role in creating the taste and the bouquet of wine.

Keywords: organic acids, mineral elements, fragrant substances, wine material, stum.

Ավետիսյան Վարսենիկ Մարիկի – տ.գ.թ., Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ԲՄՎՏ ամբիոն, ՀՀԱ իսկական անդամ

Ներսիսյան Ալբերտ Հարությունի – Պռոշյանի կոնյակի գործարան ՓԲԸ, տեխնոլոգ

Ա.Հ. Գաբրիելյան

ԽԱՂՈՂԻ «ԿԱՐՄՐԱՀՅՈՒԹ» ԵՎ «ԽՆԴՈՂՆԻ» ՍՈՐՏԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ
ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՒՆԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Գինու որակական հատկանիշների գնահատման և գինու բնութագրման համար կարևոր ցուցանիշ է գինու գույնը: Գինու գույնը տեղեկություն է տալիս ինչպես գինու որակի և տեսակի, այնպես էլ քիմիական կազմի մասին: Ուղղորդվելով վերոնշյալով՝ մեր նպատակն է եղել խաղողի «Խնդողնի» և «Կարմրահյուլ» սորտերից վարդագույն և կարմիր չոր գինիների պատրաստումը, և դրանցում գունաչափական ցուցանիշների հետազոտումը և համեմատումը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս գինիների գունաչափական ցուցանիշների՝ ինտենսիվության, պարզության, գունավորման, երանգի, տարբերությունների՝ արտահայտված թվերով, ինչպես նաև գինիների գույների փոփոխության դինամիկան հնեցման և պահպանման ժամանակ:

Առանցքային բառեր. վարդագույն գինի, կարմիր գինի, «Կարմրահյուլ», «Խնդողնի», գունաչափական ցուցանիշներ:

Ներածություն. Գույնը այն զգացողությունն է, որը մարդը զգում է տեսողական զգայարանների շնորհիվ, երբ լույսի ճառագայթը, ընկնելով որևէ օբյեկտի վրա, կլանվում և/կամ անդրադարձվում է այս կամ այն չափով: Գույնը անմիջականորեն կապված է լույսի ճառագայթի տեսակից, ուստի, կախված լույսի աղբյուրի տեսակից, մարդն ընկալում է գույնի տարբեր դրսևորումներ [1]: Գինին միևնույն ժամանակ և՛ կլանում, և՛ անդրադարձնում է իր վրա ընկած լույսի ճառագայթները: Անդրադարձված լույսի ճառագայթները կլանվելով աչքի կողմից՝ հնարավորություն են տալիս պատկերացում կազմել գինու գույնի մասին: Կարմիր գինիների մուգ գույնը պայմանավորված է նրանով, որ գինու վրա ընկած լույսի ճառագայթը համեմատաբար ավելի մեծ չափով է կլանվում: Վերջինս պայմանավորված է կարմիր և վարդագույն գինիների բնորոշ մի շարք քիմիական նյութերով, օրինակ, ֆենոլային նյութերով [2, 3]: Գինու իրական գույնը կարելի է բնորոշել (նկարագրել)՝ օգտագործելով այսպես կոչված 3 հիմնական հատկանիշներով կամ տեսողական զգացողության հատուկ բնորոշիչներով՝ տոնայնություն (tonality), պայծառություն (luminosity), քրոմատիզմ (chromatism):

Տոնայնությունը բնութագրվում է չորս՝ կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, գույների հարաբերակցությամբ: Պայծառության միջոցով բնութագրվում են գինու այս կամ այն չափով պայծառությունը և փայլը: Քրոմատիզմը կամ գունավորվածության աստիճանը անմիջականորեն կապված է գինու գույնի ինտենսիվության, հագեցվածության, խտության բարձր կամ ցածր լինելու հետ:

Օգտագործելով վերոնշյալ երեք գույնի հատկանիշները՝ կարելի է բացատրել և նկարագրել տարբեր գինիների բազմատեսակ գունային երանգները: Գինու քրոմատիկ հատկանիշները ներկայացվում են գունաչափական կոորդինատներով՝ պարզություն (L^* , $L^*=0$ սև, $L^*=100$ ՝ անգույն), կարմիր/կանաչ գունային բաղադրիչ (a^* , $a^*>0$ կարմիր, $a^*<0$ կանաչ), կապույտ/դեղին գունային բաղադրիչ (b^* , $b^*>0$ դեղին, $b^*<0$ կապույտ), և սրանցից բխող ցուցանիշներով՝ գունավորում (C^*), երանգ (H^* , $0-360^\circ$) [4-6]:

Վերոնշյալ ցուցանիշների որոշման հիմքում ընկած է գինու՝ լույսի տարբեր երկարության ճառագայթների (420 նմ, 520 նմ, 620 նմ) դեպքում կլանման աստիճանը [1]:

Նյութը և մեթոդը. Հետազոտության նպատակն է եղել ՀՀ Արագածոտնի մարզում աճող «Կարմրահյուլ» և Արցախի Հանրության շրջանում աճող «Խնդողնի» խաղողի սորտերից վարդագույն և կարմիր չոր գինիների, ինչպես նաև վերջիններիս հնեցված և պահպանված տարբերակների պատրաստումը և դրանցում գունաչափական ցուցանիշների ուսումնասիրումը և համեմատումը: Ելնելով վերը նշվածից՝ խնդիր է առաջադրվել կատարել նորարարություն, պատրաստելով վարդագույն և կարմիր միասորտ չոր գինիներ խաղողի «Կարմրահյուլ» սորտից, որը սելեկցիոն սորտ է, ստացված «Հադիսի», «Ամուրական» և «Չորնի սլադկի» սերմնաբույսերի խաչաձևումից (հեղինակ՝ Ս.Հ. Պողոսյան), ինչպես նաև ուսումնասիրել և համեմատել վերջիններիս գունաչափական ցուցանիշները և դրանց դինամիկան ժամանակի ընթացքում: «Խնդողնի» խաղողի սորտից պատրաստված կարմիր չոր գինին ծառայել է որպես համեմատական նմուշ:

Հարկ է նշել, որ գինիները պատրաստվել են Հայաստանում՝ մեր կողմից նախօրոք առաջարկված տեխնոլոգիայով [7, 8], իսկ որոշակի ցուցանիշների հետազոտությունը կատարվել է Գերմանիայի Գայգենհայմի համալսարանում՝ համաձայն Խաղողի և գինու միջազգային կազմակերպության (OIV) կողմից սահմանված մեթոդների (OIV-MA-AS2-07B, OIV-MA-AS2-11)՝ սպեկտրոֆոտոմետրի կիրառմամբ [9, 10]:

Արդյունքները. Հետազոտության շրջանակներում կատարվել է ուսումնասիրվող փորձանմուշների մի շարք քրոմատիկ (գունաչափական) հատկանիշների հետազոտում և հաշվարկ: Հետազոտման արդյունքներն ու վերոնշյալ ցուցանիշների փոփոխման դինամիկան ներկայացված են աղյուսակում:

Համաձայն կատարված հետազոտությունների գույնի ինդեքսի (ինտենսիվության) առավելագույն արժեքը գրանցվել է «Կարմրահյույթ» երիտասարդ կարմիր չոր գինու նմուշում՝ 30,59: Հարկ է նշել, որ միևնույն հումքից, որի գույնի ինդեքսը 6,57 է, կարմիր և վարդագույն գինիների գույնի ինդեքսը խիստ տարբերվում է: «Կարմրահյույթ» վարդագույն չոր գինու գույնի ինդեքսը 2,05 է: Ակնառու է, որ վերջինս վարդագույն գինիներին բնորոշ արժեքից մի փոքր բարձր է: Այս փաստը բացատրվում է վերոնշյալ գինիների հումքի և պատրաստման տեխնոլոգիայի առանձնահատկությամբ: «Խնդողնի» կարմիր չոր գինու նմուշում գույնի ինդեքսի արժեքը 6,29 է, որը մոտ հինգ անգամ քիչ է, քան «Կարմրահյույթ» կարմիր չոր գինու նմուշում: Հարկ է նշել, որ «Կարմրահյույթ» կարմիր չոր գինու պահորակման և հնեցման դեպքում գույնի ինդեքսը նվազել է մոտ 60...65 %-ով, հասնելով համապատասխանաբար 11,86 և 13,74, իսկ «Կարմրահյույթ» վարդագույն չոր գինու պահորակման ընթացքում գույնի ինդեքսը փոփոխվել է նվազագույն չափով: Վերջինս վկայում է վարդագույն գինու ապրանքային տեսքի ավելի երկար պահպանման մասին:

Պարզության և/կամ պայծառության տեսանկյունից աչքի է ընկել «Կարմրահյույթ» վարդագույն չոր գինին ($L^*=57,6$), ինչը վկայում է, որ տվյալ նմուշը համեմատաբար ամենագունագուրկն է եղել: Վերջինիս պահորակված փորձանմուշում տեղի ունեցած փոփոխությունները շատ քիչ են (L^* -ը 57,6-ից դարձել է 55,6): Հարկ է նշել, որ «Կարմրահյույթ» կարմիր չոր գինու գույնն այնքան մուգ է եղել (շատ մոտ սևին), որ հնարավոր չի եղել որոշակի արժեք որոշել: Սակայն վերջինիս պահորակված և հնեցված նմուշներում նկատվել է գույնի անկում, համապատասխանաբար դառնալով 10,4 և 8,9, և հետևաբար՝ պարզության մեծացում: Ակնառու է, որ միևնույն հումքից պատրաստված կարմիր և վարդագույն գինիների պարզության ցուցանիշները խիստ տարբերվում են: Բացի դրանից, վարդագույն գինին ավելի կայուն է գույնի պարզության տեսանկյունից, քան կարմիր չոր գինին: «Խնդողնի» կարմիր չոր գինու նմուշում գրանցվել է պարզության (պայծառության) համեմատաբար միջին արժեք՝ 21,0:

Քանի որ բոլոր հետազոտված փորձանմուշներում կարմիր/կանաչ գույնի բաղադրիչը (a^*) և դեղին/կապույտ գույնի բաղադրիչը (b^*) ունեն դրական արժեքներ, ուստի կարելի է եզրակացնել, որ բոլոր նմուշների գույնը և երանգը ձևավորվել է հիմնականում կարմիր և դեղին գույների հարաբերակցությամբ: Ունենալով գունավորման (C^*) և երանգի (H^*) թվաբանական արժեքները՝ կարելի է պատկերացնել և սահմանել հետազոտված փորձանմուշների գույնը: Վերջինս բոլոր հետազոտված փորձանմուշների համար գտնվում է կոորդինատային $[+a^*(\text{կարմիր}); +b^*(\text{դեղին})]$ միջակայքում: «Կարմրահյույթ» կարմիր չոր գինու գունավորման ցուցանիշից ($C^*=6,15$) երևում է, որ այն ունի շատ մուգ կարմիր գույն, որը հնեցման և պահորակման արդյունքում բացվել է, ինչը վկայում է կարմիր և դեղին գույների բաղադրիչների հարաբերության փոփոխության մասին: Կարելի է ենթադրել, որ վերջինս հիմնականում տեղի է ունեցել ֆենոլային նյութերի պոլիմերիզացման և նստեցման հետևանքով, քանի որ սրանք համարվում են կարմիր գույնի հիմնական ցուցիչները: «Խնդողնի» կարմիր չոր գինու գունավորման ցուցանիշի արժեքը ($C^*=57,4$) շատ մոտ է «Կարմրահյույթ» կարմիր չոր գինու հնեցված և պահորակված տարբերակների գունավորման ցուցանիշին:

Անալոգային ձևով կարելի է սահմանել հետազոտված նմուշների բնութագրերը ըստ գույնի երանգի և համեմատել միմյանց հետ: «Կարմրահյույթ» վարդագույն չոր գինու ցուցանիշը կոորդինատական հարթության վրա գտնվում է $92,5^\circ$ դիրքում, ինչը վկայում է, որ վերջինս ավելի մոտիկ է տեղակայված դեղին գույնի բաղադրիչի կոորդինատական առանցքին, ուստի ունի ամենաբաց գունավորումը: Վերոնշյալ նմուշի պահորակված տարբերակը $65,01^\circ$ դիրքում է, ինչը վկայում է պահորակման ընթացքում գույնի փոփոխության և ավելի նարնջագույն երանգի ձևավորման մասին, որն էլ կարող է հետևանք լինել ինչպես միկրոօքսիդացման, լույսի ազդեցության, այնպես էլ ֆենոլային նյութերի պոլիմերիզացման: Կարմիր գույնի բաղադրիչի կոորդինատական առանցքին ամենամոտը գրանցվել է «Կարմրահյույթ» կարմիր չոր գինու երանգային ցուցանիշը ($H^*=56$), ինչը վկայում է վերջինիս վառ արտահայտված կարմիր երանգի մասին: Վերոնշյալ նմուշի հնեցման և պահորակման ընթացքում գրանցվել է գույնի երանգի չնչին փոփոխություն:

Հետագա ավելի խորը հետազոտությունների դեպքում, օգտվելով նաև աղյուսակում բերված գունաչափական պարամետրերից, հնարավոր կլինի որոշակի փորձանմուշի համար ֆիքսել և սահմանել անվանական գույն:

«Կարմրահյույթ» խաղողի սորտից պատրաստված կարմիր և վարդագույն գինիները նաև կարմիր գույնով ներկվածության տեսանկյունից համեմատելու նպատակով, կարելի է հաշվել յուրաքանչյուր նմուշի համար $dA(\%)$ ցուցիչը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$dA(\%) = (1 - (A_{420} + A_{620}) \div 2A_{520}) \times 100, \quad (1)$$

որտեղ՝ $dA(\%)$ – կարմիր գույնով ներկվածության ցուցիչ, A_{420} – լույսի ճառագայթի կլանման գործակիցը 420 նմ-ի դեպքում, A_{520} – լույսի ճառագայթի կլանման գործակիցը 520 նմ-ի դեպքում, A_{620} – լույսի ճառագայթի կլանման գործակիցը 620 նմ-ի դեպքում:

Աղյուսակ

Գունաչափական հատկանիշները հետազոտվող նմուշների մեջ

ՔՐՈՄՍՏԻԿ ՀԱՏԳԱՆԻՇՆԵՐ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՆՄՈՒՇՆԵՐ						
		Քաղցու (Կարմրահյուս)	«Կարմրահյուս» կարմիր չոր գինի	«Կարմրահյուս» վարդագույն չոր գինի	«Կարմրահյուս» կարմիր չոր գինի (շալցումից 3 տարի հետո)	«Կարմրահյուս» կարմիր չոր գինի (հնեցված տակառում)	«Կարմրահյուս» վարդագույն չոր գինի (շալցումից 3 տարի հետո)	«Խնորդին» կարմիր չոր գինի
Կլանման գործակից (420 նմ) (A_{420})	Կլ/սմ	2,055	8,700	0,900	4,565	4,990	1,140	2,440
Կլանման գործակից (520 նմ) (A_{520})	Կլ/սմ	4,030	17,065	0,940	5,775	7,010	1,040	3,075
Կլանման գործակից (620 նմ) (A_{620})	Կլ/սմ	0,485	4,820	0,205	1,520	1,735	0,200	0,770
Գույնի ինդեքս (ինտենսիվություն) (I)	-	6,570	30,59	2,05	11,86	13,74	2,38	6,29
Պարզություն (պայծառություն) (I^*)	-	29,0	-	57,6	10,4	8,9	55,6	21,0
Կարմիր/կանաչ գույնի բաղադրիչ (a^*)	-	58,1	4,3	39,1	41,5	39,8	42,2	48,3
Դեղին/կապույտ գույնի բաղադրիչ (b^*)	-	44,8	4,4	24,2	40,3	39,7	37,2	31,1
Գունավորում (C^*)	-	73,4	6,15	45,98	57,8	56,2	56,3	57,4
Երանգ (H^*)	°	74,3	56	92,5	58,9	57,4	65,01	89,04

«Կարմրահյուս» կարմիր չոր գինու և «Կարմրահյուս» վարդագույն չոր գինու $dA(\%)$ ցուցիչները համապատասխանաբար կլինեն.

$$dA(\%)_{կ.կ.չ.գ} = (1 - (8.7 + 4.82) \div 2 \times 17.065) \times 100 = 60.38\%, \quad (2)$$

$$dA(\%)_{կ.վ.չ.գ} = (1 - (0.9 + 0.205) \div 2 \times 0.94) \times 100 = 41.22\%: \quad (3)$$

Համաձայն գրականության տվյալների [1], կարմիր գինիների համար $dA(\%)$ ցուցիչը գտնվում է 40...60 միջակայքում: Որքան մեծ է $dA(\%)$ ցուցիչի արժեքը, այնքան ավելի մուգ կարմիր գունավորում ունի գինին: Ակնառու է, որ «Կարմրահյուս» կարմիր չոր գինին ունի շատ մուգ կարմիր գունավորում ($dA(\%)_{կ.կ.չ.գ}=60,38 \%$), որը գերազանցում է նաև կարմիր գինիների համար գրականությունում նշված առավելագույն արժեքը: Այս փաստը մարքեթինգի և վաճառքի տեսանկյունից կարող է բացասական ազդեցություն ունենալ, քանի որ արդի շուկայական պայմաններում ավելի նախընտրելի են համեմատաբար թեթև, հեշտ խմվող կարմիր գինիները: Հարկ է նշել, որ «Կարմրահյուս» վարդագույն չոր գինու $dA(\%)_{կ.վ.չ.գ}$ ցուցիչը գտնվում է կարմիր գինիներին բնորոշ ստորին սահմանում՝ $dA(\%)=41,22 \%$, ինչը բնորոշ չէ շուկայում առկա վարդագույն գինիներին: Նշված

համեմատաբար մուգ գույնը և տարբերությունը շուկայում առկա գինիներից կարող է դրական ազդեցություն ունենալ մարքեթինգային տեսանկյունից, բավարարել և՛ վարդագույն, և՛ կարմիր գինիներ սպառողներին:

Եզրակացություն. Հետազոտության արդյունքներով բացահայտվում են ուսումնասիրված նմուշների գունային ցուցանիշների թվային արժեքները, որոնց միջոցով հնարավոր է դառնում ճշգրիտ համեմատականներ անցկացնել: Այսպիսով, «Կարմրահյույթ» կարմիր չոր երիտասարդ գինին ունի առավելագույն գունավորումը, սակայն վերջինիս գույնը բավականին անկայուն է հնեցման և պահորակման ժամանակ: «Կարմրահյույթ» վարդագույն չոր գինին իր տեսակի համար ունի համեմատաբար մուգ գունավորում, սակայն բավականին կայուն է պահորակման ժամանակ: «Խնդոցնի» կարմիր չոր գինու դեպքում գրանցվել են միջին ցուցանիշներ:

Գրականություն

1. **Ribereau-Gayon, P., Gloires Y., Maujean A., Dubourdieu D.** Handbook of Enology, Volume 2: The Chemistry of Wine and Stabilization and Treatments. - John Wiley & Sons, 2000.
2. **Billmeyer, F.W., Saltzman M.** Principles of Color. Technology, 2. Auflage. - New York, J. Wiley and Sons, 1981.
3. **Cagnaso E.** Metodi Oggettivi per la definizione del colore del vino. Quaderni della Scuoladi Specializzazione in Scienze Viticole ed Enologiche. - Universidad di Torino, 1997.
4. Colorimetry : 2nd Ed.- Publication CIE 15.2. - Vienna, 1986.
5. **Wiszecki G., Stiles W.S.** Color Science, Concepts and Methods, Quantitative Data and Formulae. - 2nd Ed. - Wiley, New York, 1982.
6. **Juan Moreno, Rafael Peinado.** Enological Chemistry.- USA, 2012, Elsevier Inc.- 429 p.
7. **Գաբրիելյան Ա.Հ., Մուրադյան Զ.Է.** Խաղողի «Կարմրահյույթ» սորտից սեղանի կարմիր չոր գինու պատրաստման տեխնոլոգիայի կատարելագործում // Ազրոգիտություն. - 2015.- Հ. 7-8.- էջ 324-328:
8. **Գաբրիելյան Ա.Հ.** Խաղողի «Կարմրահյույթ» սորտից վարդագույն չոր գինու պատրաստման տեխնոլոգիայի կատարելագործում // Ազրոգիտություն. - 2015.- Հ. 9-10.- էջ 398-401:
9. **International Organisation of Vine and Wine**, Compendium of International Methods of Wine and Must Analysis // OIV-18 RUE D'AGUESSEAU – 75008.- PARIS, 2016.- V. 2.- 762 p.
10. **Jacobson Jean L.** Introduction to Wine Laboratory Practices and Procedures. - United States of America, Springer Science + Business Media, Inc., 2006.- 375 p.

12.12.2017.

А.Г. Габриелян

ИССЛЕДОВАНИЕ ЦВЕТОВЫХ ХАРАКТЕРИСТИК ВИН, ПРИГОТОВЛЕННЫХ ИЗ СОРТОВ ВИНОГРАДА "КАРМРАЮТ" И "ХНДОХНИ"

Цвет вина считается важным фактором для оценки его качества и характеристики. Он может дать некоторые важные сведения о типе и качестве вина, а также его химическом составе. Целью исследования является изготовление розовых и красных сухих вин из сортов винограда "Кармрают" и "Хндохни", а также анализ и сравнение колориметрических показателей в них. Результаты исследований свидетельствуют о различиях в колориметрических показателях вин (интенсивность, прозрачность, окраска, оттенки), выраженных в цифрах, а также о динамическом изменении цвета вина при выдержке и хранении.

Ключевые слова: розовое вино, красное вино, сорт винограда "Кармрают", сорт винограда "Хндохни", цветовые характеристики.

A.H. Gabrielyan

THE INVESTIGATION OF CHROMATIC CHARACTERISTICS OF WINES MADE OF THE GRAPE VARIETIES "KARMRAHYUT" AND "KHNDOGHNI"

The color of wine is considered to be an important factor for the wine quality estimation and wine characterization. It can give some important insights about wine type and quality, as well as its chemical composition. The goal of the investigation was the production of rose and red dry wines from "Khndoghni" and "Karmrahyut" grape varieties, and also analysis and comparison of the colorimetric indicators in them. The results of the research findings demonstrate the differences in the colorimetric indicators of the wines (intensity, clarity, chroma, tone) expressed in numbers, as well as the dynamic change of the wine color during aging and storing processes.

Keywords: rose wine, red wine, grape variety "Karmrahyut", grape variety "Khndoghni", colorimetric characteristics.

Գաբրիելյան Արտակ Հենրիկի – ասպիրանտ, ՀԱԱՀ

ՀՏԴ 685.34.03

ՍՆՆԴԻ ԵՎ ԹԵԹԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Ա.Գ. Աթոյան

ԿՈՇԻԿԻ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՄԻԱՑՔՆԵՐԻ ԱՄՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ
ՏԵՂԱԿԱՅԱՆՔ

Կատարվել է գրականության վերլուծություն կոշիկի մասնիկների միացքների ամրության հետազոտման բնագավառում: Առաջարկվել է կոշիկի մասնիկների սոսնձային, թելային, սոսնձաթելային և եռակցովի միացքների ամրության որոշման տեղակայանք, որը թույլ է տալիս կատարել միացքների ամրության հետազոտություն շրջապատող միջավայրի միկրոկլիմայի պայմաններում՝ հաշվի առնելով կոշիկի տարբեր դիրքերը գետնի մակերևույթի նկատմամբ:

Առանցքային բառեր. տեղակայանք, կոշիկ, մասնիկ, միացքներ, ամրություն, ուժաչափ, խոնավաչափ, տեղամաս:

Ներածություն. Կոշիկի մասնիկների սոսնձային, թելային, սոսնձաթելային և եռակցովի միացքների ամրությամբ են պայմանավորված դրա որակական ցուցանիշները: Գրականության վերլուծությունից պարզվել է [1-4], որ ներկայացված սոսնձային միացքների ամրության որոշման համար տեղակայանքները և սարքերը թույլ չեն տալիս կատարել միացքների փորձարկում դրանց տարբեր պոկման անկյունների դեպքում: Բացի դրանից, բոլոր աշխատանքներում բացակայում է սոսնձամիացքների ամրության փորձարկումը ճառագայթային ջերմափոխանա-կության հաշվառմամբ, բացակայում են տվյալները թելային, սոսնձաթելային և եռակցովի միացքների ամրության որոշման վերաբերյալ: Այդ պատճառով սոսնձային, թելային, սոսնձաթելային, եռակցովի և համակցված միացքների ամրության փորձարկումը ջերմաստիճանի, խոնավության, ճառագայթման և պոկման անկյան հաշվառմամբ խիստ արդիական խնդիր է:

Մշակվել է նշված միացքների ամրության փորձարկման տեղակայանք, որը հաշվի կառնի խոնավության, ջերմաստիճանի, ճառագայթման, միջավայրի շարժման արագության և պոկման անկյան ազդեցությունը միացքների ամրության վրա:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Միացքների ամրության որոշման համար գոյություն ունեն մի շարք տեղակայանքներ և սարքեր: Աշխատանք [1]-ում ներկայացված է սոսնձային միացքների ամրության ստուգման տեղակայանք, որում սոսնձավաճմիացքները կամ կոշիկը մի կողմից տեղակայվում և ամրացվում է հարմարանքի մեջ, իսկ ազատ կողմից իրականացվում է դրա ձգումը: Թերությունն այն է, որ տվյալ տեղակայանքի շահագործման ժամանակ հաշվի չեն առնվում բնակլիմայական պայմանները: Այդ պատճառով միացքների ամրության որոշման արդյունքում ստացված արժեքները լիովին չեն արտացոլում իրական պատկերը:

PT-250 մակնիշի խզող մեքենայի վրա (ГОСТ 9290-76) սոսնձային միացքների ամրության փորձարկման համար դրանք ամրացվում են մեքենայի սեղմիչներում [2,3]: Սեղմիչներից մեկն անշարժ է, իսկ մյուսը պտուտակային գույգի միջոցով կարող է կատարել համընթաց շարժում՝ ձգելով փորձարկվող միացքը: Մեքենայի սանդղակի վրա գրանցվում է խզման ճիգի մեծությունը: Ամրության փորձարկման ընթացքում նույնպես հաշվի չեն առնվում շահագործման պայմանները:


Աշխատանք [4]-ում առաջարկվում է PT-250 մակնիշի խզող մեքենայի աշխատանքային տիրույթում տեղադրել ուղղանկյուն պրիզմայաձև ջերմաստիճանաչափային խցիկ և սոսնձային միացքների ամրության փորձարկումը կատարելայն խցիկի շրջանակներում: Սարքի թերությունն այն է, որ փորձարկման ընթացքում հնարավոր չէ հաշվի առնել խոնավային ռեժիմը և ապահովել խոնավության և ջերմաստիճանի համատեղ ազդեցությամբ սոսնձային միացքների ամրության փորձարկում:

Աշխատանք [5]-ում առաջարկված է կոշիկի սոսնձամիացքների ամրության որոշման սարք, որի աշխատանքն իրականացվում է պտտվող սկավառակով և որի վրա անշարժ ամրացված կաղապարի վրա տեղադրված է կոշիկը ներբանով: Պտտվող սկավառակը հնարավորություն է տալիս կոշիկի ներբանը տեղակայել պոկման տարբեր անկյուններով: Այս դեպքում սնեղվում է ներբանի ծայրի ձգման ուղղության և կաղապարի վրա տեղակայված կոշիկի ներբանի միջև կազմված անկյունը: Սոսնձային

միացքների փորձարկումների արդյունքները ցույց են տվել, որ դրանց պոկումը և դիմադրությունը պոկման ժամանակ կախված է ոչ միայն պոկման արագությունից, այլ նաև պոկման անկյունից: Մարքի թերությունը այն է, որ սարքը հնարավորություն չի տալիս կատարել փորձարկումները ջերմության և խոնավության համատեղ ազդեցության պայմաններում:

Հետազոտության արդյունքները: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի «Տեքստիլ ճարտարագիտություն» ամբիոնում մշակվել է կոշիկի սոսնձային, թելային, սոսնձաթելային, եռակցովին համակցված միացքների ամրության որոշման տեղակայանք, որը թույլ է տալիս հաշվի առնել կոշիկի դիրքի, շրջապատող միջավայրի, ջերմաստիճանի, խոնավության, ճառագայթման և շարժման արագության համատեղ ազդեցությունը նշված միացքների ամրության վրա:

Առաջարկվող տեղակայանքը կազմված է երկու տեղամասից՝ շարժաբեռային և փորձարարական: Միացքը տեղակայվում է փորձարարական տեղամասում գտնվող կաղապարի վրա, որի ազատ ծայրերը սկսվում են բռնող հարմարանքում: Բռնող հարմարանքն իրականացնում է միացքների պոկումը: Փորձարարական տեղամասում են գտնվում նաև միջավայրի տարբեր ջերմաստիճանների, խոնավությունների, շարժման արագությունների ապահովման համակարգերը և ջերմության ճառագայթիչները: Տեղակայնքի բռնող հարմարանքը շարժում է ստանում որդնակային ռեդուկտորի և երկաստիճան շղթայական փոխանցման միջոցով հաստատուն հոսանքի էլեկտրաշարժիչից:



Նկ. Կոշիկի մասնիկների միացքների ամրության որոշման տեղակայանք.
1-կաղապար, 2-բռնող, 3, 5-բռնող հարմարանքներ, 4-ջերմության ճառագայթիչ, 6-խոնավացուցիչ հարմարանք,
7-միջավայրի շարժման արագացուցիչ

Միջավայրի խոնավությունը չափվում է խոնավաչափի, ջերմաստիճանը՝ ջերմաչափի օգնությամբ, իսկ շարժման արագությունը որոշվում է ըստ օդի ծախսի գազային հաշվիչով: Պոկման ճիգի ամրությունը սնեովում է էլեկտրական ուժաչափի ցուցանակին: Միացքների վրա ազդող պոկման ճիգի դիրքը հորիզոնի նկատմամբ կարգավորված է պտտվող սկավառակի օգնությամբ:

Միացքների ամրության փորձարկումները կարելի է կատարել վերը նշված գործոնների ինչպես համատեղ, այնպես էլ առանձին ազդեցության դեպքում:

Տեղակայանքի արտաքին տեսքը բերված է նկ.- ում:

Եզրակացություն. Կոշիկի մասնիկների միացքների ամրության որոշման համար առաջարկվող տեղակայանքը հնարավորություն է տալիս կատարել փորձարկումները շահագործման տարբեր բնակլիմայական պայմաններում (խոնավություն, ջերմաստիճան, ջերմային ճառագայթում) և հաշվի առնել պոկման ճիգի ուղղությունը, և դրանով իսկ ապահովել միացքների ամրության որոշման ճշգրտությունը:

Գրականություն

1. Технология изделий из кожи: Учебник для студентов вузов легкой промышленности / Ю.П.Зыбин и др.- М.: Легкая индустрия, 1975.-С. 266-267.
2. Материаловедение изделий из кожи / Ю.П. Зыбин и др. - М.: Легкая индустрия.- 1968.- С. 37.
3. ГОСТ 9290-76. Обувь. Метод определения прочности ниточных швов соединения деталей верха. - М.: ИПК Издательство стандартов, 2002.
4. ՀՀ օգտակար մոդել № 200, AM20090160U //Կաշեգործական պատրաստվածքների ամրության ստուգման սարք / **Զ. Ա. Մինասյան** // Արդյունաբերական սեփականություն, 2010.-№1. - էջ 2-3:
5. **Акулова Т.Е.** Основы теории клеения. - М., 1969.- С.10.

26.01.2018.

Ա.Գ. Ատոյան

УСТАНОВКА ДЛЯ ОПРЕДЕЛЕНИЯ ПРОЧНОСТИ СОЕДИНЕНИЙ ДЕТАЛЕЙ ОБУВИ

Проведен анализ в области исследования прочности соединений деталей обуви. Предложена установка для определения прочности клеевых, ниточных, клеениточных и сварных соединений деталей обуви, что дает возможность выполнять исследования прочности соединений в условиях микроклимата окружающей среды с учетом различных положений обуви относительно поверхности земли.

Ключевые слова: установка, обувь, деталь, соединения, прочность, динамометр, влагомер, участок.

A.G. Atoyan

A SETTING TO DEFINE THE CONNECTION STRENGTH OF THE PARTS OF THE SHOES

Analysis in the study of the connection strength of the parts of the shoes is conducted. A setting to determine the strength of the adhesive, thread, glue-thread and welded joints of the shoes parts is proposed that gives you the opportunity to investigate the connection strength in the microclimate of the environment subject to the various provisions of the footwear relative to the surface of the earth.

Keywords: setting, shoes, detail, connections, strength, dynamometer, hygrometer, station.

Աթոյան Արուսյակ Գրիգորի - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 3-րդ կուրսի
հայցորդ

ՀՏԴ 697.9

ՍՆՆԴԻ ԵՎ ԹԵԹԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Զ.Ա. Մինասյան, Ա.Ռ. Հովհաննիսյան

ԽԱՌՆՈՒՐԴԱՅԻՆ ՏԵՔՍՏԻԼ ՆՅՈՒԹԵՐԻ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Հետազոտվել է խառնուրդային տեքստիլ նյութերի խոնավությունը: Փորձնական ճանապարհով որոշվել է գործվածքների և տրիկոտաժե պաստառների բացարձակ ու հարաբերական խոնավությունները և խոնավապարունակությունը: Այդ նպատակով գործվածքների և տրիկոտաժե պաստառների նմուշները ընկղմվել են ջրային միջավայրի մեջ և պահվել այնտեղ 1ժ 15ր:

Առանցքային բառեր. տեքստիլ, գործվածք, տրիկոտաժ, պաստառ, զանգված, խոնավություն, խոնավապարունակություն:

Ներածություն. Տեքստիլ նյութերի ֆիզիկական հատկությունները մեծ ազդեցություն են գործում համապատասխան նշանակության հագուստի նյութերի ընտրության վրա:

Դրանք ոչ միայն բնորոշում են տարբեր նյութերից պատրաստված հագուստում մարդու ինքնազգացողությունը, այլև ազդում են կարի արտադրության որոշ տեխնոլոգիական գործընթացների վրա:

Տեքստիլ նյութերի ֆիզիկական հատկություններից են՝ խոնավությունը, հիգրոսկոպիկությունը, մազանոթությունը, ջրակլանելիությունը, ջրային առաձգականությունը, օդային, գոլորշային և փոշեթափանցելիությունը ինչպես նաև ջերմային, օպտիկական, էլեկտրական և այլ հատկությունները:

Գործվածքները, տրիկոտաժե և չգործված պաստառները ունակ են կլանել տարբեր գազեր, գոլորշիներ կամ հեղուկներ: Կախված շրջապատող պայմաններից՝ տեքստիլ նյութերը կարող են պահել կլանված գազերը, գոլորշիները կամ հեղուկները իրենց մեջ կամ փոխանցել դրանք շրջապատող միջավայրին: Որպես կանոն, կլանումը ուղեկցվում է մի շարք մեխանիկական (ամրություն, կոշտություն, դեֆորմացիա և այլն) և ֆիզիկական (ջերմապաշտպան, օպտիկական, էլեկտրական և այլն) հատկությունների, գծային չափերի և նյութերի զանգվածի փոփոխությամբ [2, 4, 5]:

Տվյալ աշխատանքի նպատակն է՝ փորձնական ճանապարհով որոշել խառնուրդային տեքստիլ նյութերի բացարձակ ու հարաբերական խոնավությունները և խոնավապարունակությունը, բացահայտել նյութերի բաղադրության ազդեցությունը այդ ցուցանիշների վրա:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Խառնուրդային տեքստիլ նյութերի բաղադրության ազդեցությունը խոնավակլանելիության ցուցանիշների վրա պարզելու նպատակով որպես փորձարկվող նմուշներ վերցվել են՝ 100% բամբակ, 70% բամբակ և 30% վիսկոզ, 50% բամբակ և 50% վիսկոզ, 100% վիսկոզ պարունակող գործվածքները, ինչպես նաև 100% բուրդ, 30% բուրդ և 70% ակռիլ, 50% բուրդ և 50% ակռիլ, 100% ակռիլ պարունակող տրիկոտաժե պաստառները:

Խառնուրդային տեքստիլ նյութերի բացարձակ և հարաբերական խոնավությունները և խոնավապարունակությունը հետազոտելու համար (8×18)սմ չափերով գործվածքներից և պաստառներից պատրաստված նմուշները չորացվել են 105°C ջերմաստիճանում չորացման խցում և որոշվել են դրանց $M_{\text{չոր}}$ զանգվածները PT-100 մակնիշի կշեռքով: Այնուհետև դրանք ընկղմվել են ջրով լի տաշտակի մեջ և ենթարկվել խոնավացման 4500վ-ի ընթացքում: Խոնավացումից հետո նմուշները կշռվել են նույն մակնիշի կշեռքով և որոշվել են դրանց M զանգվածները: 4500վ (1ժ 15ր) ժամանակահատվածը նմուշների խոնավացման դեպքում ընտրվել է ոչ խառնուրդային տեքստիլ նյութերի համար գոյություն ունեցող փորձնական հետազոտությունների արդյունքների համաձայն, հաշվի առնելով, որ դրանք լիովին հագեցել են 2700...3600t ժամանակահատվածում [3, 4]:

Խառնուրդային տեքստիլ նյութերի $M_{\Sigma np}$ և M զանգվածների որոշումից հետո հաշվարկվել են նմուշների հարաբերական, բացարձակ խոնավությունները և խոնավապարունակությունը՝ համապատասխանաբար հետևյալ բանաձևերի օգնությամբ [1, 2]՝

$$\omega_{hwp} = \frac{W}{M} \cdot 100\%, \quad (1)$$

$$\omega_{pug} = \frac{W}{M_{\Sigma np}} \cdot 100\%, \quad (2)$$

$$u = \frac{W}{M_{\Sigma np}} : \quad (3)$$

որտեղ W –ն նմուշների խոնավության զանգվածն է, W , $M_{\Sigma np}$ –ը՝ բացարձակ չոր նմուշների զանգվածն է, W , $M = M_{\Sigma np} + W$, խոնավ նմուշների զանգվածն է, W :

Փորձերը կատարվել են օդի հետևյալ պարամետրերի պայմաններում՝ ջերմաստիճանը $t=20.7^\circ\text{C}$, մթնոլորտային ճնշումը 630մմ սնդ. սյուն և հարաբերական խոնավությունը՝ $\varphi=82\%$:

Հետազոտության արդյունքները: Կատարված փորձնական հետազոտությունների արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ

Խառնուրդային տեքստիլ նյութերի խոնավության ցուցանիշները

N	Խառնուրդային տեքստիլ նյութեր	$M_{\Sigma np}$, $\times 10^{-3} \text{ կգ}$	M , $\times 10^{-3} \text{ կգ}$	W , $\times 10^{-3} \text{ կգ}$	ω_{hwp} , %	ω_{pug} , %	U , կգ/կգ
Գործվածքներ							
1	100%բամբակ	1,45	4,11	2,66	64,720	183,448	1,834
2	70% բամբակ 30% վիսկոզ	1,35	4,94	3,59	72,672	265,925	2,659
3	50% բամբակ 50% վիսկոզ	1,26	6,52	5,26	80,674	417,460	4,174
4	100% վիսկոզ	1,32	5,02	3,7	73,705	280,303	2,803
Տրիկոտաժե պաստառներ							
1	100% բուրդ	6,19	34,73	28,54	82,176	461,066	4,610
2	30% բուրդ 70% ակրիլ	6.69	27,63	20,94	75,787	313,004	3,130
3	50% բուրդ 50% ակրիլ	6,26	27,41	21,15	77,161	337,859	3,378
4	100% ակրիլ	6.40	32,60	26,2	80,368	409,375	4,093

Աղյուսակային տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ խառնուրդային գործվածքներից 4500վ-ի ընթացքում ամենաշատ խոնավություն է կլանում 50% բամբակ և 50% վիսկոզ պարունակող գործվածքի նմուշը (5,26գ), իսկ ամենաքիչը՝ 100% բամբակ պարունակող գործվածքից նմուշը (2,66գ): Այդ պատճառով 50% բամբակ ու 50% վիսկոզ պարունակող նմուշի հարաբերական խոնավությունը 1,247 անգամ մեծ է, քան 100% բամբակ պարունակող խառնուրդային գործվածքի նմուշի հարաբերական խոնավությունը, ինչը վկայում է, որ նույն ժամանակահատվածում 50% բամբակ ու 50% վիսկոզ պարունակող գործվածքի նմուշը դառնում է ավելի ծանր, քան միայն բամբակ պարունակող գործվածքի նմուշը: 100% վիսկոզ և 70% բամբակ ու 30% վիսկոզ պարունակող խառնուրդային գործվածքների նմուշները միջանկյալ դիրք են զբաղեցնում 100% բամբակ և 50% բամբակ ու 50% վիսկոզ պարունակող գործվածքների նմուշների միջև և դրսևորում են հարաբերական խոնավության գրեթե նույն ցուցանիշները (72,672% և 73,705%):

100% բուրդ, 30% բուրդ ու 70% ակրիլ, 50% բուրդ ու 50% ակրիլ և 100% ակրիլ պարունակող տրիկոտաժե պաստառների նմուշների համեմատությունը վկայում է, որ նույն ժամանակահատվածում (4500վ) ամենաշատը խոնավանում է 100% բուրդ բաղադրությամբ տրիկոտաժե պաստառի նմուշը իսկ

ամենաքիչը՝ 30% բուրդ ու 70% ակոիլ պարունակող տրիկոտաժե պաստառի նմուշը (28,54գ և 20,94գ): Նշված նմուշների հարաբերական խոնավությունների հարաբերությունը կազմում է՝ 1,084 ինչը վկայում է, որ 100% բուրդ պարունակող տրիկոտաժե պաստառի նմուշը ստացվում է ավելի ծանր քան 30% բուրդ ու 70% ակոիլ պարունակող նմուշը: 100% բուրդ պարունակող նմուշը 1,363 անգամ ավելի շատ հեղուկ է կլանում, քան 30% բուրդ ու 70% ակոիլ պարունակող նմուշը: 50% բուրդ ու 50% ակոիլ և 100% ակոիլ պարունակող տրիկոտաժե պաստառների նմուշները դրսևորում են իրար մոտ արժեքներ (77,161% և 80,368%):

Եզրակացություն. Տարբեր բնակլիմայական պայմաններին համապատասխան հագուստի համար խառնուրդային տեքստիլ նյութերի ընտրության դեպքում խիստ կարևոր ուշադրություն պետք է դարձնել նյութերի բաղադրությանը:

Գրականություն

1. **Суметов В. А.** Сушка и увлажнение лубоволокнистых материалов. - М.: Легкая индустрия, 1980. - 336 с.
2. **Панин Б.Г.** Основы теплотехники, отопление, вентиляция, сушка и охлаждение.- М.: Легкая индустрия, 1980. - 384 с.
3. **Савостицкий Н.А., Амирова Э.К.** Материаловедение швейного производства.- М.: Академия, 2013. - 272 с.
4. **Бодрова А.Ш.** Материаловедение в технологии швейного производства.- Томск: ТГПУ, 2014. - 276 с.
5. **Бузов Б.А., Алыменкова Н.Д.** Материаловедение в производстве изделий легкой промышленности (швейное производство) .- М.:Академия, 2004. – 448с.

12.02.2018.

З.А. Минасян, А.Р. Оганнисян

ИССЛЕДОВАНИЕ ВЛАЖНОСТИ СМЕШАННЫХ ТЕКСТИЛЬНЫХ МАТЕРИАЛОВ

Исследована влажность смешанных текстильных материалов. Экспериментальным путем определены абсолютная и относительная влажности тканей и трикотажных полотен и их влагосодержание. С этой целью образцы тканей и трикотажных полотен были погружены в водную среду и выдержаны в течение 1ч 15 мин.

Ключевые слова: текстиль, ткань, трикотаж, полотно, вес, влажность, влагосодержание.

Z.A. Minasyan, A.R. Hovhannisyan

INVESTIGATION OF THE MOISTURE CONTENT OF MIXED TEXTILE MATERIALS

The moisture content of mixed textile materials was studied. The absolute and relative humidity of fabrics and knitted fabrics and their moisture content were determined experimentally. For this purpose, samples of fabrics and knitted fabrics were immersed in an aqueous medium for 1 h 15 min.

Keywords: textile, fabric, knitwear, cloth, weight, humidity, moisture content.

Մինասյան Ջոհրաբ Ալեքսանդրի - Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարանի, Գյումրու մասնաճյուղ, «Տեքստիլ ճարտարագիտություն» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ

Հովհաննիսյան Անժելա Ռաֆայելի - Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարանի, Գյումրու մասնաճյուղ, «Տեքստիլ ճարտարագիտություն» ամբիոնի հայցորդ

УДК 621.372.061

ИНФОРМАТИКА, ЭЛЕКТРОНИКА И
НАУЧНОЕ ПРИБОРОСТРОЕНИЕ

С.О. Симонян, Г.В. Адамян, А.В. Меликян, А.С. Симонян

**МЕТОДЫ РЕШЕНИЯ ОДНОПАРАМЕТРИЧЕСКИХ МАТРИЧНЫХ
УРАВНЕНИЙ ЧЕТВЕРТОЙ СТЕПЕНИ (II)
(Прямой подход)**

Рассмотрены однопараметрические матричные уравнения четвертой степени, для решения которых предложены аналитический, а также последовательный и параллельный численно-аналитические методы. Последние основаны на аналитическом методе и дифференциальных преобразованиях Г.Е. Пухова. Для всех методов получены соответствующие условия разрешимости задачи.

Ключевые слова: однопараметрические матричные уравнения четвертой степени, аналитический и численно-аналитические методы решения, условия разрешимости задачи, современные средства информационных технологий.

Введение. В [1] рассмотрены методы решения однопараметрических матричных уравнений четвертой степени

$$A_0(t) \cdot X^4(t) + A_1(t) \cdot X^3(t) + A_2(t) \cdot X^2(t) + A_3(t) \cdot X(t) + A_4(t) = [0], \quad (1)$$

где $A_i(t)$, $i = \overline{0,4}$ - однопараметрические (функциональные) квадратные матрицы порядка m , а $X(t)$ - неизвестная однопараметрическая квадратная матрица того же порядка, подлежащая определению.

Известно [2], что если степенное матричное уравнение имеет конечное число решений, то это число не превосходит значение C_{mn}^n , где n - степень матричного уравнения, m - порядок матричных коэффициентов, а C - комбинации.

В настоящей работе рассматриваются другие прямые методы решения матричных уравнений вида (1), аналогичные методам, предложенным в [1].

Математический аппарат

1. Аналитический метод решения. Однопараметрическое матричное уравнение (1) представим в виде следующей эквивалентной матричной системы второго порядка:

$$\begin{cases} A_0(t) \cdot Y^2(t) + A_1(t) \cdot X(t) \cdot Y(t) + A_2(t) \cdot Y(t) + A_3(t) \cdot X(t) + A_4(t) = [0], \\ X^2(t) - Y(t) = 0 \end{cases} \quad (2)$$

или в виде эквивалентной гиперматрично-гипервекторно-блочной системы

$$\begin{bmatrix} A_3(t) & A_0(t) \cdot Y(t) + A_1(t) \cdot X(t) + A_2(t) \\ X(t) & -E \end{bmatrix} \cdot \begin{bmatrix} X(t) \\ Y(t) \end{bmatrix} + \begin{bmatrix} A_4(t) \\ 0 \end{bmatrix} = D(t) \cdot \begin{bmatrix} X(t) \\ Y(t) \end{bmatrix} + \begin{bmatrix} A_4(t) \\ 0 \end{bmatrix} = \begin{bmatrix} 0 \\ 0 \end{bmatrix} \quad (3)$$

с дополнительной неизвестной матрицей $Y(t)$ и единичной матрицей E порядка m .

При выполнении условия регулярности (условия разрешимости задачи)

$$\text{rang} D(t) = 2m, \quad \forall t \quad (4)$$

из представления (3) получим итерационную вычислительную схему

$$\begin{bmatrix} X(t) \\ Y(t) \end{bmatrix}_{(q+1)} = -D^{-1}(t)_{(q)} \cdot \begin{bmatrix} A_4(t) \\ 0 \end{bmatrix}, \quad (5)$$

где q - номер итерации.

2. Численно-аналитические методы решения. Допустим, что для всех матричных элементов гиперматрично-гипервекторно-блочной системы (3) имеют место следующие дифференциальные преобразования [3]:

$$A_0(K) = \frac{H^K}{K!} \cdot \frac{d^K A_0(t)}{dt^K} \Big|_{t=t_v} \quad \overline{\cdot} \quad A_0(t) = \mathfrak{a}_0(t, t_v, H, A_0(K)), \quad K = \overline{0, \infty}, \quad (6)$$

$$A_1(K) = \frac{H^K}{K!} \cdot \frac{d^K A_1(t)}{dt^K} \Big|_{t=t_v} \quad \overline{\cdot} \quad A_1(t) = \mathfrak{a}_1(t, t_v, H, A_1(K)), \quad K = \overline{0, \infty}, \quad (7)$$

$$A_2(K) = \frac{H^K}{K!} \cdot \frac{d^K A_2(t)}{dt^K} \Big|_{t=t_v} \quad \overline{\cdot} \quad A_2(t) = \mathfrak{a}_2(t, t_v, H, A_2(K)), \quad K = \overline{0, \infty}, \quad (8)$$

$$A_3(K) = \frac{H^K}{K!} \cdot \frac{d^K A_3(t)}{dt^K} \Big|_{t=t_v} \quad \overline{\cdot} \quad A_3(t) = \mathfrak{a}_3(t, t_v, H, A_3(K)), \quad K = \overline{0, \infty}, \quad (9)$$

$$A_4(K) = \frac{H^K}{K!} \cdot \frac{d^K A_4(t)}{dt^K} \Big|_{t=t_v} \quad \overline{\cdot} \quad A_4(t) = \mathfrak{a}_4(t, t_v, H, A_4(K)), \quad K = \overline{0, \infty}, \quad (10)$$

$$X(K) = \frac{H^K}{K!} \cdot \frac{d^K X(t)}{dt^K} \Big|_{t=t_v} \quad \overline{\cdot} \quad X(t) = \mathfrak{a}_5(t, t_v, H, X(K)), \quad K = \overline{0, \infty}, \quad (11)$$

$$Y(K) = \frac{H^K}{K!} \cdot \frac{d^K Y(t)}{dt^K} \Big|_{t=t_v} \quad \overline{\cdot} \quad Y(t) = \mathfrak{a}_6(t, t_v, H, Y(K)), \quad K = \overline{0, \infty}, \quad (12)$$

где $A_0(K)$, $A_1(K)$, $A_2(K)$, $A_3(K)$, $A_4(K)$, $X(K)$, $Y(K)$ - матричные дискреты однопараметрических матриц $A_0(t)$, $A_1(t)$, $A_2(t)$, $A_3(t)$, $A_4(t)$, $X(t)$, $Y(t)$ соответственно; H - масштабный коэффициент; $K = \overline{0, \infty}$ - целочисленный аргумент; t_v - центр аппроксимации; $\mathfrak{a}_0(\bullet) \div \mathfrak{a}_{11}(\bullet)$ - аппроксимирующие функции, восстанавливающие матрицы-оригиналы $A_0(t)$, $A_1(t)$, $A_2(t)$, $A_3(t)$, $A_4(t)$, $X(t)$, $Y(t)$ соответственно.

Последовательный численно-аналитический метод решения

Используя дифференциальные преобразования (6)-(12), нелинейную гиперматрично-гипервекторно-блочную систему (3) из области оригиналов переведем в область дифференциальных изображений. Тогда будем иметь:

при $K=0$:

$$\left[\begin{array}{c|c} A_3(0) & A_0(0) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(0) + A_2(0) \\ \hline X(0) & -E \end{array} \right] \cdot \begin{bmatrix} X(0) \\ Y(0) \end{bmatrix} = D(0,0) \cdot \begin{bmatrix} X(0) \\ Y(0) \end{bmatrix} = - \begin{bmatrix} A_4(0) \\ 0 \end{bmatrix}, \quad (13)$$

откуда

$$\begin{bmatrix} X(0) \\ Y(0) \end{bmatrix}_{(q+1)} = - \left[\begin{array}{c|c} A_3(0) & A_0(0) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(0) + A_2(0) \\ \hline X(0) & -E \end{array} \right]^{-1} \cdot \begin{bmatrix} A_4(0) \\ 0 \end{bmatrix}_{(q)} = -D^{-1}(0,0)_{(q)} \cdot \begin{bmatrix} A_4(0) \\ 0 \end{bmatrix}, \quad (14)$$

если, конечно, имеют место условия гиперрегулярности

$$\text{rang} D(0,0)_{(q)} = 2m, \quad \forall q; \quad (15)$$

при $K=1$:

$$\begin{aligned} & \left[\begin{array}{c|c} A_3(0) & A_0(0) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(0) + A_2(0) \\ \hline X(0) & -E \end{array} \right] \cdot \begin{bmatrix} X(1) \\ Y(1) \end{bmatrix} + \\ & + \left[\begin{array}{c|c} A_3(1) & A_0(0) \cdot Y(1) + A_0(1) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(1) + A_1(1) \cdot X(0) + A_2(1) \\ \hline X(1) & 0 \end{array} \right] \cdot \begin{bmatrix} X(0) \\ Y(0) \end{bmatrix} = \\ & = D(0,0) \cdot \begin{bmatrix} X(1) \\ Y(1) \end{bmatrix} + D(1,0;0,1) \cdot \begin{bmatrix} X(0) \\ Y(0) \end{bmatrix} = - \begin{bmatrix} A_4(1) \\ 0 \end{bmatrix}, \quad (16) \end{aligned}$$

откуда при выполнении условия (15) получим

$$\left[\begin{array}{c} X(1) \\ Y(1) \end{array} \right]_{(q+1)} = -D^{-1}(0,0) \cdot \left[\begin{array}{c} A_4(1) \\ 0 \end{array} \right] + D(1,0;0,1)_{(q)} \cdot \left[\begin{array}{c} X(0) \\ Y(0) \end{array} \right]; \quad (17)$$

при $K=2$:

$$\begin{aligned} & \left[\begin{array}{c} A_3(0) \\ X(0) \end{array} \middle| \begin{array}{c} A_0(0) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(0) + A_2(0) \\ -E \end{array} \right] \cdot \left[\begin{array}{c} X(2) \\ Y(2) \end{array} \right] + \\ & + \left[\begin{array}{c} A_3(1) \\ X(1) \end{array} \middle| \begin{array}{c} A_0(0) \cdot Y(1) + A_0(1) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(1) + A_1(1) \cdot X(0) + A_2(1) \\ 0 \end{array} \right] \cdot \left[\begin{array}{c} X(1) \\ Y(1) \end{array} \right] + \\ & + \left[\begin{array}{c} A_3(2) \\ X(2) \end{array} \middle| \begin{array}{c} A_0(0) \cdot Y(2) + A_0(1) \cdot Y(1) + A_0(2) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(2) + A_1(1) \cdot X(1) + A_1(2) \cdot X(0) + A_2(2) \\ 0 \end{array} \right] \times \\ & \times \left[\begin{array}{c} X(0) \\ Y(0) \end{array} \right] = D(0,0) \cdot \left[\begin{array}{c} X(2) \\ Y(2) \end{array} \right] + D(1,0;0,1) \cdot \left[\begin{array}{c} X(1) \\ Y(1) \end{array} \right] + D(2,0;1,1;0,2) \cdot \left[\begin{array}{c} X(0) \\ Y(0) \end{array} \right] = - \left[\begin{array}{c} A_4(2) \\ 0 \end{array} \right], \quad (18) \end{aligned}$$

откуда при выполнении условия (15) получим

$$\left[\begin{array}{c} X(2) \\ Y(2) \end{array} \right]_{(q+1)} = -D^{-1}(0,0) \cdot \left[\begin{array}{c} A_4(2) \\ 0 \end{array} \right] + D(1,0;0,1) \cdot \left[\begin{array}{c} X(1) \\ Y(1) \end{array} \right] + D(2,0;1,1;0,2)_{(q)} \cdot \left[\begin{array}{c} X(0) \\ Y(0) \end{array} \right]; \quad (19)$$

⋮

при $K=K$:

$$\begin{aligned} & \left[\begin{array}{c} A_3(0) \\ X(0) \end{array} \middle| \begin{array}{c} A_0(0) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(0) + A_2(0) \\ -E \end{array} \right] \cdot \left[\begin{array}{c} X(K) \\ Y(K) \end{array} \right] + \\ & + \left[\begin{array}{c} A_3(1) \\ X(1) \end{array} \middle| \begin{array}{c} A_0(0) \cdot Y(1) + A_0(1) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(1) + A_1(1) \cdot X(0) + A_2(1) \\ 0 \end{array} \right] \cdot \left[\begin{array}{c} X(K-1) \\ Y(K-1) \end{array} \right] + \dots + \\ & + \left[\begin{array}{c} A_3(K-1) \\ X(K-1) \end{array} \middle| \begin{array}{c} A_0(0) \cdot Y(K-1) + \dots + A_0(K-1) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(K-1) + \dots + A_1(K-1) \cdot X(0) + A_2(K-1) \\ 0 \end{array} \right] \times \\ & \times \left[\begin{array}{c} X(1) \\ Y(1) \end{array} \right] + \left[\begin{array}{c} A_3(K) \\ X(K) \end{array} \middle| \begin{array}{c} A_0(0) \cdot Y(K) + \dots + A_0(K) \cdot Y(0) + A_1(0) \cdot X(K) + \dots + A_1(K) \cdot X(0) + A_2(K) \\ 0 \end{array} \right] \cdot \left[\begin{array}{c} X(0) \\ Y(0) \end{array} \right] = \\ & = D(0,0) \cdot \left[\begin{array}{c} X(K) \\ Y(K) \end{array} \right] + D(1,0;0,1) \cdot \left[\begin{array}{c} X(K-1) \\ Y(K-1) \end{array} \right] + \dots + D(K,0;\dots;0,K) \cdot \left[\begin{array}{c} X(0) \\ Y(0) \end{array} \right] = - \left[\begin{array}{c} A_4(K) \\ 0 \end{array} \right], \quad (20) \end{aligned}$$

откуда при выполнении условия (15) получим

$$\begin{aligned} \left[\begin{array}{c} X(K) \\ Y(K) \end{array} \right]_{(q+1)} &= -D^{-1}(0,0) \cdot \left[\begin{array}{c} A_4(K) \\ 0 \end{array} \right] + D(1,0;0,1) \cdot \left[\begin{array}{c} X(K-1) \\ Y(K-1) \end{array} \right] + D(2,0;1,1;0,2) \cdot \left[\begin{array}{c} X(K-2) \\ Y(K-2) \end{array} \right] + \dots + \\ & + D(K-1,0;\dots;0,K-1) \cdot \left[\begin{array}{c} X(1) \\ Y(1) \end{array} \right] + D(K,0;\dots;0,K)_{(q)} \cdot \left[\begin{array}{c} X(0) \\ Y(0) \end{array} \right]. \quad (21) \end{aligned}$$

Гиперматричная нелинейная вычислительная схема ньютоновского типа (14) приводит к определению множества начальных матричных дискретов $X(0)_i$ и $Y(0)_i$, $i \in C_{mn}^n$. Последующие матричные дискреты $X(K)_i$ и $Y(K)_i$, $K = \overline{1, \infty}$ будут определены в результате использования гиперматричных вычислительных схем (17), (19)...(21), а восстановление решений $X(t)_i$ и $Y(t)_i$ – в соответствии с соотношениями (11) и (12).

Параллельный численно-аналитический метод решения. Объединив гиперматрично-гипервекторно-блочные уравнения (13), (16), (18)...(20) в единое целое, получим суперматрично-супервекторно-блочную нижнетреугольную систему уравнений, полностью идентичную системе (22) из работы [1], однако различную по содержанию матричных блоков $D(0,0)$, $D(1,0;0,1)$, $D(2,0;1,1;0,2)$, ..., $D(K,0;\dots;0,K)$. Последующая операция по определению матричных дискретов $\begin{bmatrix} X(0) \\ Y(0) \end{bmatrix}$, $\begin{bmatrix} X(1) \\ Y(1) \end{bmatrix}$, ..., $\begin{bmatrix} X(K) \\ Y(K) \end{bmatrix}$ будет выполнена с точностью до соответствующей обратной суперматрицы, а восстановление решений $X(t)_i$ и $Y(t)_i$ – в соответствии с соотношениями (11) и (12).

Заключение. Предложенные численно-аналитические методы по решению рассмотренной задачи, очевидно, могут быть эффективно реализованы только лишь применением средств современных информационных технологий [4,5].

Литература

1. **Симонян С.О., Адамян Г.В., Меликян А.В., Симонян А.С.** Методы решения однопараметрических матричных уравнений четвертой степени (I) (Прямой подход) // Вестник ИАА. –2017. - Т. 14, №4. – С. 622-625.
2. **Гельфанд С.И.** О числе решений квадратного уравнения // Журнал “Глобус-1”. – 2000. – С. 124-134.
3. **Пухов Г.Е.** Дифференциальные преобразования функций и уравнений. - Киев: Наукова думка, 1984.- 420 с.
4. **Strastrup B.** The C++ Programming Language. - 4th Edition. - Boston: Addison – Wesleg professional, 2013. – 1368 p.
5. **Moore H.** MATLAB for Engineers. 5th Edition. – London: Pearson, 2017. - 688 p.

24.03.2018.

Ս.Հ. Սիմոնյան, Գ.Վ. Ադամյան, Ա.Վ. Մելիքյան, Ա.Ս. Սիմոնյան

**ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԻԱՊԱՐԱՄԵՏՐԱԿԱՆ ՄԱՏՐԻՑԱՅԻՆ
ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ (II)
(Ուղղակի մոտեցում)**

Ներկայացված խնդրի լուծման համար անհրաժեշտ են հետևյալ քայլերը.

- վերլուծել ապահովագրական ընկերությունների քոմպյութերային ցանցի բոլոր օղակները՝ անվտանգության տեսակետից,
- հետազոտել ապահովագրական ընկերությունների քոմպյութերային ցանցի անվտանգության ապահովման առկա գործիքամիջոցները,
- իրականացնել ապահովագրական ընկերությունների քոմպյութերային ցանցի անվտանգության գործիքամիջոցների համեմատական գնահատումը,
- առաջարկել ապահովագրական ընկերության մասնագիտացված քոմպյութերային ցանցի անվտանգության բարձրացման համար արդյունավետ գործիքամիջոց:

Ապահովագրական ընկերությունների քոմպյութերային ցանցի բոլոր օղակները ուսումնասիրելու համար նախ դիտարկենք մասնագիտացված գործող քոմպյութերային ցանցի օրինակ, որը բերված է նկ. 1-ում:


Բերված քոմպյութերային ցանցում ներկայացված են երթուղավորիչներ, սերվերներ (ո հատ), համակարգիչներ (ո հատ) և այլ սարքավորումներ:

Անվտանգության ապահովման տեսակետից առկա է պաշտպանելու երկու հատված՝ պաշտպանություն արտաքին աշխարհից և ներքին պաշտպանություն: Ներքին պաշտպանության ապահովման համար պետք է հստակ իմանալ տեղեկատվական անվտանգության առաջին կանոնը. «Չի կարելի պաշտպանել այն, ինչի առկայության մասին հայտնի չէ»[4]: Հիմնական ներքին պաշտպանության օղակներն են.

- պաշտպանություն վիրուսներից,
- պաշտպանություն տեղեկատվության գաղտնագրումից,

- պաշտպանություն տեղեկատվության արտահոսքից:

Արտաքին աշխարհից պաշտպանության համար պետք է օգտագործել համապատասխան սարքավորումները, որոնք հնարավորություն են տալիս բարձրացնել անվտանգությունը և հայտնաբերել բոլոր կատարվող փորձերը: Վիրուսներից պաշտպանվելու համար նվազագույն պահանջն այն է, որ պետք է օգտագործել հակավիրուսային ծրագրային միջոցներ: Միննույն ժամանակ, այդ ծրագրային միջոցներից բացի, պետք է օգտագործել ավագաման (Песочница) [5] ծրագրային միջավայրը, որը հնարավորություն է տալիս փորձարկել ստացվող տեղեկատվությունն այդ միջավայրում և անվտանգ լինելու պարագայում ուղարկել ստացողին:



Նկ. 1. Ապահովագրական ընկերության գործող բուհերի միջև գանգի ընդհանուր կառուցվածքը

Գաղտնագրման հիմնական պաշտպանությունը ամբողջական պահուստային կրկնօրինակներ ունենալն է, որոնք պարտադիր որոշ պարբերականությամբ պետք է ստուգվեն: Տեղեկատվության արտահոսքից պաշտպանվելու համար ծրագրային միջոցների օգնությամբ փակվում են բոլոր տեսակի արտաքին կրիչներ օգտագործելու հնարավորությունները, բոլոր չպաշտպանված կապուլիններով անցնող տեղեկատվությունը գաղտնագրվում է, արտաքին աշխարհ ուղարկվող ամբողջ տեղեկատվությունը ստուգվում է հատուկ ծրագրային միջոցների օգնությամբ: Միննույն ժամանակ մեծ ռիսկ են ներկայացնում արտոնյալ հաշվեգրեր ունեցող օգտատերերը, որոնց ցանկը պետք է կազմված լինի, նրանց համար պետք է ապահովել բարդ և հաճախ փոփոխվող գաղտնաբառեր, տեղեկատվությանը միանձնյա իրավասություն չտրամադրել, այսինքն՝ կիրառել չորս աչքի գաղափարը [6]:

Արտաքին աշխարհից պաշտպանվելու համար կան մի շարք լուծումներ, որոնք կոչվում են ֆայրվոլներ կամ ավելի նոր մոդելներ՝ հաջորդ սերնդի ֆայրվոլներ (Next generation Application firewall): Դրանց հիմնական ֆունկցիան է.

- ինտերնետի պարագծի պաշտպանությունը:

Գործառնությունները՝ լոկալ ցանցի, DMZ (demilitarized zone)-ի բաժանումը ինտերնետից, հանրային ծառայությունների ցանցային շերտի պաշտպանությունը,

- Zero-day vulnerabilities protection:

Գործառնությունները՝ պաշտպանություն «գրոյական օր» սպառնալիքներից, այսինքն՝ վիրուսներից և վնասակար ծրագրերից, որոնք դեռ հայտնի չեն հակավիրուսային ծրագրերին, կամ պատվերով հարձակումներից: Տիպիկ խնդիր է՝ գաղտնի դարակը crypto locker: Այն հայտնվում է աշխատակցի համակարգչում կորպորատիվ փոստի միջոցով, գաղտնագրում է բոլոր ֆայլերը լոկալ և ցանցային կրիչների վրա և պահանջում է գումար փոխանցել հաշվին՝ գաղտնագրման բանալին ստանալու համար.

- ինտերնետում օգտվողների գործողությունների վերահսկում: Գործառնությունները՝ սահմանափակել օգտագործողների մուտքը դեպի արտաքին աշխարհ, վերահսկել բոլոր հնարավոր միացումներն արտաքին աշխարհի հետ, գտել օգտագործվող URL հասցեները, օգտագործել հակավիրուսային

ծրագրի միջոցով ստուգում՝ մինչև տեղեկատվությունը աշխատակցի համակարգիչում հայտնվելը, հակահամաճարակային լրտեսող ծրագրերի հայտնաբերումը Anti-Spyware:

Վերը թվարկված գործառնությունները իրականացնելու համար կան մի շարք լուծումներ, որոնցից են՝ Palo Alto, Check Point, Fortinet, Cisco և այլն: Նկ. 2-ում ցույց է տրված 2016 թվականի բոլոր այդպիսի սարքավորումների դիրքը միջազգային շուկայում: Այս քառակուսին կոչվում է՝ magic quadrant [7].




Նկ. 2. Magic quadrant for Enterprise Network firewall

Ըստ նկ. 2-ի, շուկայում որպես առաջատար առկա է երկու սարքավորում՝ Palo Alto և Check Point: Օգտագործելով առկա փորձը [8] և ունենալով համապատասխան պահանջները [9]՝ վերլուծել ապահովագրական ընկերությունների քումփյութերային ցանցի կառուցվածքը, ուսումնասիրելով առկա գործիքամիջոցները, ստեղծվել է արդյունավետ գործիքամիջոց, որը հնարավորություն է տալիս.

- ուսումնասիրել ցանցում անցնող թրաֆիկի բնույթը [10],
- թրաֆիկի ծավալը,
- արտաքին աշխարհի ուղարկվող և ստացվող թրաֆիկի ծավալը,
- օգտվողների հարցադրումները ինտերնետ ռեսուրսից,
- հայտնաբերել այն բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, որոնք պետք է հասանելի լինեն արտաքին աշխարհից:

Տվյալ գործիքամիջոցի կիրառմամբ կատարվել է համապատասխան հավաքագրված տվյալների հիման վրա ցանցի կառուցվածքի ընտրություն, անհրաժեշտ քանակությամբ ենթացանցերի բաժանում, համապատասխան պարամետրերով հաջորդ սերնդի ֆայրվոլի ընտրություն: Հուսալիության նկատառումներից ելնելով՝ որոշվել է օգտագործել տվյալ սարքավորումը կլաստեր համակարգում:

Այսպիսով, ունենալով վերը թվարկված պարամետրերը, վերակառուցվեց ապահովագրական ընկերության քումփյութերային մասնագիտացված ցանցը, որը բերված է նկ. 3-ում:



Նկ. 3. Ապահովագրական ընկերության վերակառուցված քումփյութերային ցանցը

k1, k2-ը կոմուտացիոն սարքավորումներն են,
n1, n2 – ը Next generation firewall սարքավորումներն են,
m1, m2, m3 – ը ֆայրվոլ և VPN սարքավորումներ են, որոնք ապահովում են կապը գլխամասային գրասենյակի և մասնաձյուղերի միջև, ինչպես նաև՝ 2 տարբեր ենթացանցերի անվտանգ աշխատանքը:

Եզրակացություն.

1. Հետազոտվել և վերլուծվել են ապահովագրական ընկերության քոմպյութերային ցանցի բոլոր օղակները՝ անվտանգության տեսակետից:
2. Հետազոտվել են ապահովագրական ընկերությունների քոմպյութերային ցանցի անվտանգության ապահովման առկա գործիքամիջոցները:
3. Իրականացվել է ապահովագրական ընկերությունների քոմպյութերային ցանցի անվտանգության գործիքամիջոցների համեմատական գնահատումը:
4. Վերլուծելով ուսումնասիրությունները՝ առաջարկվել և ներդրվել է «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության քոմպյութերային ցանցի անվտանգության բարձրացման նպատակով արդյունավետ գործիքամիջոց, որի հիման վրա վերակառուցվել է ընկերության քոմպյութերային ցանցը:

Գրականություն

1. **Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ** - խորհրդի թիվ 173-ն որոշում, 09.07.2016:
2. <http://www.ombuds.am/>
3. https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/Regulation/law_on_insurance_extract_arm.pdf –Հայաստանի Հանրապետության օրենքը ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին
4. <https://thycotic.com/company/blog/2017/06/16/top-5-pam-tasks-teams-automate-part-1-privileged-account-discovery/>
5. <https://habrahabr.ru/post/105581/>
6. https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D1%80%D0%B8%D0%BD%D1%86%D0%B8%D0%BF_%D1%87%D0%B5%D1%82%D1%8B%D1%80%D1%91%D1%85_%D0%B3%D0%BB%D0%B0%D0%B7
7. https://get.info.paloaltonetworks.com/webApp/gartner-mq-for-enterprise-network-firewalls-2017-en?gclid=Cj0KCQjw6NjNBRDKARIsAFn3NMrbqUg_gRRYY5hx9Gr7GZij61rbTDVwUkD0WvtU5DyHujOqgF37IaAprEALw_wcB&utm_source=google-search&utm_medium=cpc&utm_term=palo%20alto%20com&utm_campaign=Brand-EMEA-EN-Search&utm_content=211278486143&custom2=&CampaignId=7010g000001Lh2x&s_kwid=AL!4461!3!211278486143!b!!g!!palo%20alto%20com&ef_id=WaQaNwAAAV9ew-Wy:20170911143321:s
8. <http://www.itsec.ru/articles2/pravo/standartizaciya-v-oblasty-ib-zarubezhn-opyt-chast-1-> Ստանդարտացումը SS բնագավառում արտասահմանյան փորձը:
9. <https://www.iso.org/isoiec-27001-information-security.html>
10. Handbook of Computer Networks: Distributed Networks, Network Planning, Control, Management, and New Trends and Applications.-Vol. 3.
01.03.2018.

Т.А. Флджян

ИНСТРУМЕНТАЛЬНОЕ СРЕДСТВО ДЛЯ ОЦЕНКИ И ПОВЫШЕНИЯ БЕЗОПАСНОСТИ КОМПЬЮТЕРНОЙ СЕТИ СТРАХОВОЙ КОМПАНИИ

Исследованы все звенья компьютерной сети страховой компании с точки зрения безопасности. Рассмотрены и сравнены имеющиеся инструментальные средства для повышения безопасности специализированной компьютерной сети. Проведена их сравнительная оценка. Предложено и реализовано эффективное инструментальное средство для оценки и повышения специализированной сетевой безопасности.

Ключевые слова: компьютерная сеть, сетевая безопасность, инструментальное средство, Next Generation firewall.

T. A. Fljyan

INSTRUMENTAL MEANS FOR EVALUATION AND SAFETY OF COMPUTER NETWORK INSURANCE COMPANY

All parts of the computer network of the insurance company, in terms of security are investigated. Tools to enhance the security of a specialized computer network are considered and compared. A comparative evaluation of these tools was carried out. An effective tool was proposed and implemented as a means of assessing and enhancing professional network security.

Keywords: computer network, network security, tool, Next Generation firewall.

Ֆյույան Տիգրան Աշոտի - հայցորդ, ՀԱՊՀ

УДК 004:681.2:616

ИНФОРМАТИКА, ЭЛЕКТРОНИКА И
НАУЧНОЕ ПРИБОРОСТРОЕНИЕ

Л.К. Андреасян

**ОБЗОР МОДЕЛЕЙ И ПОДХОДОВ МАШИННОГО ОБУЧЕНИЯ ДЛЯ
ПРОФИЛАКТИКИ И ДИАГНОСТИКИ САХАРНОГО ДИАБЕТА 2-ГО ТИПА**

Целью исследования является изучение моделей машинного обучения для оценки риска, профилактики и диагностики болезни сахарного диабета 2-го типа. На основе анализа огромных наборов медицинских данных и результатов непрерывного мониторинга состояния здоровья в реальном времени экспертные системы помогают поставить правильный диагноз, разработать оптимальную методику предотвращения и лечения.

Ключевые слова: интеллектуальный анализ данных, модели машинного обучения, сахарный диабет, метрики классификации.

Введение. Использование методов машинного обучения обеспечивает высокую точность обнаружения, выявления и профилактики широкого спектра распространенных заболеваний (сердечно-сосудистых, онкологических, диабетических, радиологических и т.д.), в результате чего, по мнению экспертов, в 2...3 раза сокращается стоимость лечения этих заболеваний, а также значительно улучшается качество лечения. Факторами риска развития сахарного диабета 2-го типа (Type 2 Diabetes Mellitus -T2DM) являются наследственность, возраст, высокий уровень холестерина в крови, высокое кровяное давление, избыточный вес, ожирение, малоподвижный образ жизни, нездоровое питание [1-3]. Для профилактики и обнаружения сахарного диабета используются различные методы машинного обучения [4].

Целью работы является изучение точности классификации болезни сахарного диабета 2-го типа с помощью алгоритмов машинного обучения в публикациях последних лет.

Оценка качества алгоритмов классификации. Для оценки качества алгоритмов классификации выбраны следующие численные метрики: **Accuracy** - доля правильных ответов, **Precision** – из положительных ответов доля правильных, **Recall** – доля положительных ответов из ожидаемых, **Sensitivity** (positive in disease) - вероятность того, что тест будет положительным при наличии заболевания, **Specificity** (negative in health) – вероятность того, что тест будет отрицательным при отсутствии заболевания [4].

Обзор применения моделей машинного обучения для профилактики и диагностики сахарного диабета 2-го типа. Основными источниками данного обзора являются доступные электронные архивы IEEE, Elsevier, Springer Publishing и PubMed Central.

В статье Кумари и др. [5] обсуждается применение методов машинного обучения для классификации сахарного диабета 2-го типа с использованием байесовских сетей. Классификация с байесовской сетью показывает значение точности Accuracy = 99,51% и ошибку классификации 0.48%.

Для диагностики сахарного диабета 2-го типа в статье Баракат и др. [6] описано применение метода опорных векторов (SVM) на наборе данных реальных пациентов с результатом работы Accuracy = 94%, Sensitivity = 93%, Specificity = 94%.

В статье Хан и др. [7] описано применение SVM для скрининга диабета. Результаты исследований в области здравоохранения и питания Китая показали, что предлагаемый метод группового обучения генерирует наборы правил со средневзвешенной точностью Precision = 94.2% и Recall = 93,9% для всех классов.

В статье Зенг и др. [8] исследованы различные ассоциации генотипа и фенотипа по EHR (Electronic Health Records), представлена разработанная среда для идентификации 300 субъектов (случайным образом выбранных из 23281 субъекта регионального распределенного репозитория EHR) с и без T2DM. Используются методы KNNs, NBs, деревья решений (DTs), RF, SVM и LR. Результаты показали высокие показатели идентификации (AUC ~ 0,98).

В статье Гири и др. [9] представлена объединенная система с искусственной нейронной сетью, функции Fuzzy logic и Gaussian Kernel (GKF). В предлагаемой системе GKF использует стандартное отклонение (standard deviation) для точной классификации данных, искусственные нейронные сети (ANN) для кластеризации данных. Показано, что после завершения реализации с использованием объединения этих методов улучшается точность прогнозирования Precision = 99,2% и Recall = 97,9%.

В статье Али и др. [10] анализируются проблемы диагностики и лечения диабета. В статье предлагается новая модель гибридного грубого набора (H2RM), которая решает проблемы неточного прогнозирования (Fuzzy forecasting) и лечения сахарного диабета 1-го типа (T1DM) и 2-го типа (T2DM). На этапе онлайн-прогона модели эти правила используются для прогнозирования T1DM и T2DM для новых пациентов. Экспериментальные результаты показывают, что предлагаемая модель превосходит существующие методы со средней и сбалансированной точностью Accuracy = 95,9%.

В статье Деваган и др. [11] использованы многоуровневый перцептрон (Multilayer Perceptron - MLP) и классификация на основе байесовской сети. Гибридная модель (Multilayer Perceptron + Bayes Net) для классификации данных о диабете показала следующий результат - Accuracy = 81.89%, Sensitivity = 64.10% и Specificity = 90.90%.

Заключение. В ходе исследования произведен выбор статей по метрикам качества классификации - Accuracy, Sensitivity, Specificity, Precision, Recall. Машинное обучение – метод, основанный на данных, и качество прогнозирования зависит от качества доступных данных. В выборе признака (feature) основная цель - найти подмножество, которое обеспечивает более высокую точность классификации. Анализ изучения статей позволяет сделать вывод, что наиболее высокая точность при классификации диабета получается при гибридном подходе (рис.). Таким образом:

- применение искусственной нейронной сети и нечеткой логики улучшает работу байесовской сети;
- при применении совокупности алгоритмов KNNs, NBs, DTs, RF, SVM и LR получают высокие показатели идентификации;
- методы и алгоритмы на основе грубой теории набора (RST) дают высокую точность;
- использование нескольких алгоритмов обучения (Ensemble learning approach) эффективным способом повышает точность классификации.




Рис. Показатели качества классификации в процентах

Результаты данного исследования послужат основой при выборе модели для диагностики и предотвращения болезни сахарного диабета 2-го типа.

Լիտերատուրա

1. Դեդովա Ի.Ի., Շեստակովա Մ.Յ., Մայորովա Ա.Յ. Ալգորիտմներ սպեցիալիզացիոն մեդիցինական օգնության համար շաքարային դիաբետի համար. - 8-րդ համար - Մ.: ՍՊ ՍՊԻՄ, 2017.
2. American Diabetes Association. Classification and diagnosis of diabetes. Diabetes Care, 2018.
3. Ferrannini, Ele, et al. Shift to Fatty Substrate Utilization in Response to Sodium–Glucose Cotransporter 2 Inhibition in Subjects without Diabetes and Patients With Type 2 Diabetes, 2016.- doi: 10.2337/db15-1356.
4. Witten I.H., Frank E. Data Mining: Practical Machine Learning Tools and Techniques. - Morgan Kaufmann, San Francisco, 2011. - P.189-283.
5. Prediction of Diabetes Using Bayesian Network, (IJCSIT) / M. Kumari, et al // International Journal of Computer Science and Information Technologies, IJCSIT. - 2014. - Vol. 5 (4). - ISSN: 0975-9646
6. Intelligent Support Vector Machines for Diagnosis of Diabetes Mellitus / N. Barakat, et al // IEEE. - 2010.- P.1114 – 1120.
7. Rule Extraction from Support Vector Machines Using Ensemble Learning Approach: An Application for Diagnosis of Diabetes / L. Han, S. Luo, et al // IEEE, J-BHI. – 2015. - 19 (2). - P. 728–734.
8. A machine learning-based framework to identify type 2 diabetes through electronic health records / T. Zheng, W. Xie, et al // Elsevier, I JMI. - 2017.- P. 120–127.
9. Giri T., Todma S.R. Prognosis of Diabetes using Neural Network. - Fuzzy Logic, Gaussian Kernel Method, IJCA, 2015.
10. Ali R., Hussain J., Siddiqi M. H., Hussain M., Lee S. H2RM: A Hybrid Rough Set Reasoning Model for Prediction and Management of Diabetes Mellitus, MDPI AG, Basel. – Switzerland, 2015.-15(7):15921-51.- doi: 10.3390/s150715921.
11. Dewangan A., Agrawal P. Classification of Diabetes Mellitus Using Machine Learning Techniques // International Journal of Engineering and Applied Sciences (IJEAS). -2015.- ISSN: 2394-366. – Vol. 2, issue 5.

25.02.2018.

Լ.Կ. Անդրեասյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 2-ՐԴ ՏԻՊԻ ՇԱՔԱՐԱԽՏԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հետազոտության նպատակն է 2-րդ տիպի շաքարային դիաբետի հիվանդության ռիսկի գնահատման, կանխարգելման և ախտորոշման համար մեքենաների ուսուցման մոդելների ուսումնասիրումը: Վերլուծելով հսկայածավալ բժշկական տվյալների հավաքածուները և իրական ժամանակում առողջական վիճակի շարունակական մշտադիտարկման արդյունքները՝ փորձագիտական համակարգերն օգնում են ճիշտ ախտորոշել, մշակել կանխարգելման և բուժման արդյունավետ մեթոդներ:

Առանցքային բառեր. տվյալների ինտելեկտուալ վերլուծություն, մեքենայական ուսուցման մոդելներ, 2-րդ կարգի շաքարախտ, դասակարգման չափանիշներ:

L.K. Andreasyan

A REVIEW OF MODELS AND APPROACHES OF MACHINE LEARNING FOR THE PREVENTION AND DIAGNOSIS OF TYPE 2 DIABETES MELLITUS

The purpose of the research is to study models of machine learning for risk assessment, prevention and diagnosis of type 2 Diabetes Mellitus. On the basis of the analysis of a huge collection of medical data and results of continuous monitoring of the health status in real time, expert systems help to put the right diagnosis, to develop optimal methods of prevention and treatment.

Keywords: intellectual data analysis, machine learning models, diabetes mellitus, classification metrics.

Անդրեասյան Լիանա Կարլենովնա – преподаватель кафедры КСиС, НПУА

ՀՏԴ 004.35/62-182.3

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ ԵՎ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Մ.Տ. Սոխյան

ՏԵՍԱՇԱՐՈՒՄ ՇԱՐԺՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ
ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԽՆԴՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Կատարվել է տեսաշարում շարժվող օբյեկտի հայտնաբերման և ուղղության նախնական որոշման խնդրի հետազոտություն՝ հաշվի առնելով արդի ժամանակաշրջանում այս խնդրում մարդկային գործոնի բացառման անհրաժեշտությունը: Ուսումնասիրվել են օբյեկտին հետևելու ժամանակակից ալգորիթմները և ընտրվել է հայտնի MIL ալգորիթմը, որը հիմնված է բազմաքանակ օրինակների ուսուցման վրա: Օբյեկտի հայտնաբերման խնդիրն առաջարկվում է լուծել ժամանակակից «TensorFlow» համակարգի օգտագործմամբ: Կառուցվել է խնդրի լուծման նախնական բլոկ-սխեմա, որտեղ ներկայացված է հնարավոր լուծման քայլերի հաջորդականությունը՝ առանց որոշ հարցեր մանրամասնելու:

Առանցքային բառեր. շարժվող օբյեկտ, օբյեկտի հայտնաբերում, օբյեկտի հետևում, տեսաշար, շարժման ուղղություն, տարակարգիչ:

Ներածություն: Շարժվող օբյեկտի հայտնաբերումը մարդու համար շատ հեշտ գործընթաց է, որը նա կարող է կատարել ակնթաթյաբար: Կարելի է հեշտությամբ հայտնաբերել օբյեկտը և միաժամանակ տարակարգել այն՝ տալով որոշակի բնութագրեր (օրինակ՝ շարժվող մեքենա, անշարժ ծառ և այլն): Մարդու ուղեղը կարող է անել այդ ամենը առանց որևէ հավելյալ ջանք՝ գործադրելու: Իհարկե այսօր դեռևս մարդուց արագ ոչ մի հաշվիչ մեքենա նշվածը չի կարող անել, սակայն չպետք է մոռանալ մարդկային գործոնը, քանի որ մարդն ամեն դեպքում մեքենա չէ: Կան դեպքեր, երբ անհրաժեշտ է կիրառել ավտոմատացված հսկողություն՝ ինչ-ինչ իրավիճակների վերահսկման նպատակով: Օրինակ, երկրի սահմանին տեղադրված տեսախցիկի օգնությամբ կարելի է իրական ժամանակում հայտնաբերել որևէ օբյեկտ (զինվոր, ռազմական տեխնիկա և այլն) և արձագանքել համապատասխան ձևով: Այնուհետև կարելի է նաև իրականացնել օբյեկտների տարակարգում (մարդ, թռչուն, կենդանի, թռչող սարք և այլն) և միայն դրանից հետո սահմանելով յուրաքանչյուր օբյեկտի նկատմամբ անհատական վերահսկողություն՝ որոշել՝ այն շարժվում է, թե՛ ոչ:

Տեսանյութը իրականում պատկերների հաջորդականություն է, որոնցից յուրաքանչյուրը կոչվում է շրջանակ: Այդ պատկերները իրար այնքան արագ են հաջորդում, որ մարդու աչքը չի հասցնում ընկալել, որ դրանք անընդհատ չեն: Ակնհայտ է, որ պատկերի մշակման բոլոր միջոցները կարող են իրականացվել որոշակի պատկերի (շրջանակի) վրա: Բացի այդ, երկու հաջորդական պատկերները իրար հետ սերտորեն կապված են:

Շարժվող օբյեկտի հայտնաբերման ալգորիթմը կարող է լինել ընդհանուր կիրառության ալգորիթմ, սակայն չափազանց դժվար է ինչպես հարկն է հայտնաբերել օբյեկտներ, որոնք ունենում են էական փոփոխություններ՝ կապված գույնի և կառուցվածքի հետ: Հետևաբար, ներկայումս համակարգչային տեսողության շատ կիրառական համակարգեր ենթադրում են ֆիքսված (ստատիկ) տեսախցիկի առկայություն, որը շարժվող օբյեկտների հայտնաբերման գործընթացը դարձնում է շատ ավելի պարզ [1]: Տեսաշարից վերցված պատկերը բաժանվում է փիքսելների երկու բազմության: Առաջին բազմությունը պարունակում է փիքսելներ, որոնք համապատասխանում են առաջնային պլանի օբյեկտներին, մինչդեռ երկրորդ բազմությունը պարունակում է ֆոնային (ետին պլանի, անշարժ) փիքսելները: Ստացված արդյունքը հաճախ ներկայացվում է որպես երկուական պատկեր, որտեղ զրոն համապատասխանում է ֆոնին, իսկ մեկը՝ առաջնային պլանին: Հիմնականում առաջնային պլանի օբյեկտները շարժվող մարդիկ, մեքենաներ, նավեր և այլ օբյեկտներ են, իսկ մնացած ամեն ինչը համարվում է ֆոնային: Երբեմն ստվերը նույնպես տարակարգվում է որպես առաջնային պլանի օբյեկտ, որը բերում է ոչ ճիշտ արդյունքի:

Օբյեկտի հայտնաբերումը տեսաշարում հետաքրքրություն ներկայացնող օբյեկտների հայտնաբերման և փիքսելների ստացման գործընթաց է: Օբյեկտի հայտնաբերումը կարելի է իրականացնել տարբեր եղանակներով, օրինակ, շրջանակի տարբերակման (frame differencing),

օպտիկական հոսքի (optical flow) և ֆոնի հանման (background subtraction) մեթոդները: Քննարկենք այդ մեթոդները:

1. Շրջանակի տարբերակման մեթոդ (frame differencing)

Տեսաշարում շարժվող օբյեկտների առկայությունը հայտնաբերվում է երկու հաջորդական պատկերների տարբերության հաշվարկման միջոցով: Այդ հաշվարկը բավականին պարզ գործընթաց է և հեշտ է իրականացվում: Այս մեթոդն ունի մեծ հարմարվողականություն տարբեր միջավայրերում: Այս ալգորիթմում օգտագործվում են որոշակի շեմային արժեքներ պատկերում լուսավորության փոփոխությունը որպես շարժում չտարակարգելու համար: Այս մեթոդը չի դասակարգվում որպես շարժվող օբյեկտի ճշգրիտ հայտնաբերման եղանակ [2]:

2. Օպտիկական հոսքի մեթոդ (Optical Flow)

Այս մեթոդում հաշվարկվում է պատկերի օպտիկական հոսքի դաշտը և կատարվում է պատկերի օպտիկական հոսքի բաշխման հաշվարկը: Այս մեթոդը կարող է տալ շարժման ամբողջական ինֆորմացիա և հայտնաբերել շարժվող օբյեկտները, սակայն մեծ ծավալի հաշվարկները և պատկերում առկա աղմուկի հանդեպ զգայունությունը դարձնում են այն ոչ համատեղելի իրական ժամանակամիջոցում աշխատելու պահանջների հետ [3]:

3. Ֆոնի հանման մեթոդ (background subtraction)

Ֆոնի հանման ալգորիթմում առաջին քայլը ֆոնի մոդելավորումն է: Այս քայլը ալգորիթմի հիմքն է: Ֆոնի մոդելը պետք է լինի բավականին զգայուն՝ շարժվող օբյեկտը հայտնաբերելու համար: Այս մոդելը այն պատկերի մաթեմատիկական մոդելն է, որտեղ առկա չեն ապագայում շարժվող օբյեկտները: Շարժվող օբյեկտը հայտնաբերվում է տեսաշարի ընթացիկ պատկերի և ֆոնի մոդելի համեմատության միջոցով: Ալգորիթմն ունի մեծ զգայունություն արտաքին միջավայրի փոփոխությունների հանդեպ և տալիս է շարժվող օբյեկտի մասին ամբողջական տեղեկություն այն դեպքում, երբ ֆոնի մոդելը մոդելավորված է ճիշտ սկզբնական պատկերով [4]:

Օբյեկտին հետևելը ավելի արագ գործողություն է, քան հայտնաբերումը: Սովորաբար օբյեկտին հետևելու ալգորիթմներն ավելի արագ են օբյեկտին հայտնաբերելու ալգորիթմներից: Պատճառը շատ պարզ է: Նախորդ պատկերում հայտնաբերված օբյեկտին հետևելիս արդեն հայտնի է օբյեկտի տեսքի և շարժման մասին որոշ տեղեկություն: Հաջորդ պատկերի մշակման ժամանակ կարելի է օգտագործել այդ տեղեկությունը օբյեկտի դիրքը այդ պատկերում կանխագուշակելու համար և կանխագուշակված տարածքում օբյեկտը փնտրելով գտնել այն: Օբյեկտի որոնման լավ ալգորիթմը օգտագործում է օբյեկտի մասին այդ պահին եղած ամբողջ տեղեկությունը, մինչդեռ հայտնաբերման ալգորիթմը միշտ իր աշխատանքը սկսում է զրոյից: Այստեղ կարող է թվալ, որ կարելի է օբյեկտին հայտնաբերել հենց առաջին պատկերում և ուղղակի շարունակել հետևել նրան: Սակայն հնարավոր է նաև կորցնել օբյեկտը, երբ այն ծածկվի մեկ այլ օբյեկտով, և այդ պարագայում օբյեկտին հետևող ալգորիթմը կձախողվի: Այս թերությունը շտկելու համար առաջարկվում է որոշ ժամանակը մեկ կիրառել նաև օբյեկտին հայտնաբերելու ալգորիթմը: Հայտնաբերման այն ալգորիթմները, որոնք հիմնված են մեքենայական ուսուցման վրա, ուսուցանվում են օբյեկտը պարունակող մեծ քանակի պատկերներով:

Օբյեկտին հետևելու գործընթացում մեր նպատակն է ընթացիկ պատկերում գտնել այն օբյեկտը, որին հաջողվել է հետևել տեսաշարի նախորդ պատկերներում: Եթե հետևել ենք օբյեկտին որոշակի ժամանակահատվածում, ապա կարելի է ասել, որ հայտնի է, թե այն ինչպես է շարժվում, այսինքն՝ հայտնի է օբյեկտի շարժման մոդելը: Բացի այդ, հայտնի է նաև, թե այդ օբյեկտը ինչ տեսք ունի տեսաշարի նախորդ պատկերներում: Այս դեպքում ասում են, որ հայտնի է նաև օբյեկտի տեսքի մոդելը: Շարժման մոդելը օգտագործելով՝ կարելի է կանխագուշակել շարժվող օբյեկտի հաջորդ դիրքը, միջոցառել օբյեկտի տեսքի մոդելը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կերպով գտնել օբյեկտը կանխագուշակված դիրքում: Եթե օբյեկտը շարժման ընթացքում իր տեսքը չի փոխում, ապա կարելի է օգտագործել պարզ, հաստատուն տեսքի մոդել: Սակայն իրականում օբյեկտը շարժման ընթացքում գրեթե միշտ փոխում է իր տեսքը: Այս խնդրի լուծման նպատակով օբյեկտին հետևող ժամանակակից ալգորիթմներում տեսքի մոդելը այնպիսի տարակարգիչ է, որը ուսուցանվում է դինամիկ կերպով, այսինքն՝ օբյեկտին հետևելու ընթացքում: Տարակարգիչը ոչ դինամիկ կերպով ուսուցանելու համար կարող են անհրաժեշտ լինել տվյալ օբյեկտի պատկերի հազարավոր օրինակներ, մինչդեռ դինամիկ տարակարգիչն ուսուցանվում է դինամիկ կերպով, այսինքն՝ մեր դեպքում օբյեկտը հետևելու ընթացքում: Օբյեկտը տարակազող ալգորիթմը՝ որպես մուտքային արժեք, ստանում է պատկերի ինչ-որ հատված և այն տարակարգում է որպես օբյեկտ կամ պատկերի ետին պլան (background): Որպես

արդյունք ստացվում է 0-ից 1 միջակայքի թիվ, որը բնութագրում է պատկերի այդ մասում օբյեկտի գտնվելու հավանականությունը:

Քննարկենք օբյեկտը հետևելու ժամանակակից ալգորիթմներ:

1. Boosting (խթանում)

Այս ալգորիթմը [5] հիմնված է AdaBoost ալգորիթմի [6] դինամիկ տարբերակի վրա՝ այն ալգորիթմի, որն օգտագործվում է դեմքի ճանաչման ալգորիթմում: Այս ալգորիթմում տարակարգիչն ուսուցանվում է դինամիկ կերպով, ստանալով տվյալ օբյեկտի դրական (պատկեր, որը պարունակում է օբյեկտը), և բացասական (պատկեր, որը չի պարունակում օբյեկտը) օրինակները: Պատկերում տվյալ օբյեկտի շրջանակը ենթադրվում է որպես սկզբնական դրական օրինակ, իսկ այդ պատկերի մնացած մասը՝ բացասական: Ստանալով տեսաշարի հաջորդ պատկերը՝ տարակարգիչը փնտրում է այդ օբյեկտը նախորդ պատկերում այդ օբյեկտին հարակից շրջակայքում, ամեն փիքսելի համար որոշում է ինչ-որ գործակից՝ օգտվելով արդեն հայտնի դրական օրինակից: Արդյունքում ստացվում է, որ օբյեկտը պատկերի այն մասում է, որտեղ գործակիցները ավելի բարձր են: Բացի այդ, ստացվում է օբյեկտի ևս մեկ դրական և բացասական օրինակ: Տեսաշարի հաջորդ պատկերները մշակելուն զուգընթաց դրական և բացասական օրինակների քանակն աճում է:

Այս ալգորիթմը դասակարգվում է որպես միջին արտադրողականության: Բացի այդ, այն հուսալի չէ այն պարագայում երբ անհրաժեշտ է հայտնել օբյեկտը հետևելու ձախողման մասին:

2. MIL – Multiple Instance Learning (բազմաքանակ օրինակների ուսուցում)

Օբյեկտին հետևելու այս ալգորիթմը հիմնականում կրկնում է նախորդ ալգորիթմը: Բայց կա մի հիմնական տարբերություն: Որպես օբյեկտի դրական օրինակ դիտարկվում է ոչ միայն տվյալ պահին նրա դիրքը, այլև դիտարկվում է տվյալ դիրքի շրջակայքը և գնեռացվում է մի քանի դրական օրինակ: Արդյունքում տվյալ պատկերից ստացվում են ոչ թե դրական և բացասական օրինակներ, այլ դրական և բացասական օրինակների խմբեր: Հենց այս գաղափարի վրա է հիմնված բազմաքանակ օրինակների ուսուցումը: Եթե օբյեկտի դիրքը ճիշտ չի ստացվում, ապա դիտարկելով նրա շրջակայքը և ստանալով դրական օրինակների խումբ, կարող ենք ասել, որ այդ խմբի մեջ առկա է առնվազն մեկ օրինակ, որում օբյեկտը ճիշտ դիրքում է գտնվում [7]:

Այս ալգորիթմի արտադրողականությունը բավականին բարձր է գնահատվում և մեծ կիրառություն ունի: Մեր խնդրում առաջարկվում է օգտագործել հենց այս ալգորիթմը:

Tensorflow համակարգի օգտագործման նպատակահարմարությունը օբյեկտների հայտնաբերման խնդրում: Tensorflow-ն բաց հասանելիության գրադարան է (open source software library), որը նախատեսված է թվաբանական հաշվարկների համար գրաֆների հիման վրա: Գրաֆի հանգույցներն արտահայտում են մաթեմատիկական գործողությունները, մինչդեռ ճյուղերը ներկայացնում են բազմաչափ զանգվածներ (tensors): Tensorflow-ն մեքենայի ուսուցման (machine learning) գործիք է: Այն ընձեռում է լայն ֆունկցիոնալություն և օգտագործվում է խոր նեյրոնային ցանցի (deep neural network) մոդելների ստեղծման համար: Այս համակարգը ունի մի շարք կիրառական ծրագրավորման ինտերֆեյսեր (API – Application Programming Interface) Python, C++, Java լեզուներով [8]:

Նշված համակարգը հնարավորություն է ընձեռում ստեղծել մեքենայական ուսուցման մոդել, որն ունակ կլինի հայտնաբերել օբյեկտները պատկերի մեջ: Tensorflow համակարգի հիման վրա ստեղծված «TensorFlow Object Detection API»-ը (Օբյեկտի հայտնաբերման կիրառական ծրագրավորման ինտերֆեյս TensorFlow-ի կիրառմամբ) հնարավորություն է տալիս ստեղծել և ուսուցանել օբյեկտի հայտնաբերման մոդել, ինչպես նաև տրամադրում է մի շարք արդեն ուսուցանված մոդելներ:

Օգտագործելով ուսուցանված մոդելը օբյեկտի հայտնաբերման խնդրում՝ կարելի է ստանալ իրական ժամանակամիջոցում աշխատող համակարգ, քանի որ մոդելը արդեն ուսուցանված է որոշակի տեսակի օբյեկտներ հայտնաբերելու համար և ստանալով մուտքային պատկերը ունակ է ավելի արագ կերպով հայտնաբերել օբյեկտը քան վերը նշված մեթոդները: Մեքենայական ուսուցման տեխնոլոգիաները արդի ժամանակաշրջանում հետզհետե ձեռք են բերում ավելի մեծ կիրառություն:

Հիմնվելով վերը նշված մեթոդների համեմատության վրա՝ առաջարկվում է շարժվող օբյեկտի հայտնաբերման և նախնական ուղղության որոշման խնդրի լուծման հետևյալ մոտեցումը:

1. Պատկերի մեջ օբյեկտները հայտնաբերվում են մի ֆունկցիայի միջոցով, որը պայմանականորեն կկոչենք Detection(), բայց ոչ բոլոր պատկերների վրա է կիրառվում այս ֆունկցիան, քանի որ, ինչպես նշել ենք, օբյեկտի հայտնաբերումը ավելի բարդ գործողություն է, քան նրան հետևելը:

2. Այնուհետև կիրառվում է մի ֆունկցիա, պայմանական կոչենք `Track()`, որը ստանալով `Detection()` ֆունկցիայի վերադարձրած օբյեկտների զանգվածը, սկսում է հետևել այդ օբյեկտներին: Տեսաշարի հաջորդ պատկերները կմշակվեն `Track()` ֆունկցիայով այնքան ժամանակ, մինչև որ կանցնի որոշակի Δt ժամանակ կամ ինչ-որ կերպ հայտնի դառնա, որ պատկերում հայտնվել է նոր օբյեկտ կամ անհետացել է արդեն առկա օբյեկտը (այդ մասին կտեղեկացնի մեկ այլ ֆունկցիա, որը պայմանականորեն կկոչենք `IsTimeForDetection()`, որի աշխատանքը կքննարկվի մի փոքր ուշ):

3. `Track()` ֆունկցիայի յուրաքանչյուր աշխատանքից հետո կիրառվում է մեկ այլ ֆունկցիա, որը պայմանականորեն կկոչենք `GetMovingDirecton()`, որը կիրառվում է յուրաքանչյուր օբյեկտի վրա առանձին և համեմատում է տվյալ օբյեկտի ներկայիս դիրքը նախորդ դիրքի հետ ու որպես արդյունք վերադարձնում է այդ օբյեկտի շարժման ուղղությունը (հյուսիս, հարավ, հարավ-արևելք և այլն, կախված այն պահանջից, թե օբյեկտը դիտարկվում է երկչա՞փ տարածության մեջ, թե՛ ոչ (եռաչափ տարածության մեջ ուղղության որոշումը ավելի բարդ խնդիր է, և այդ պարագայում `GetMovingDirecton()` ֆունկցիան կվերադարձնի ավելի մանրամասն արդյունք):

4. Այնուհետև, երբ `IsTimeForDetection()` ֆունկցիան վերադարձնում է `true` արժեքը, կատարվում են հետևյալ գործողությունները. իրականացվում է `Detection()` ֆունկցիան, որը վերադարձնում է այդ պահին պատկերում առկա բոլոր օբյեկտները: Մինչև այս պահը հայտնի էր նաև նախորդ `Track()` ֆունկցիայի արդյունքը, այսինքն՝ ունենք բոլոր այն օբյեկտները (իրենց կոորդինատներով), որոնց հետևում էինք մինչև `Detection()` ֆունկցիան իրականացնելը: Ստացվում է, որ այժմ կան օբյեկտների երկու տարբեր բազմություններ, որոնց պայմանականորեն կկոչենք `PreDetection` և `PostDetection`: Համեմատելով այս երկու բազմությունները՝ կարելի է պարզել, որ հնարավոր է շարունակել հետևել `PreDetection` բազմության այն օբյեկտներին, որոնք համընկնում են `PostDetection` բազմության օբյեկտների հետ (կամ գրեթե համընկնում են, քանի որ օբյեկտին հետևող և օբյեկտին հայտնաբերող մեթոդները կարող են իրարից շատ քիչ մեծությամբ տարբերվող տվյալներ վերադարձնել), քանի որ դրանք կային տեսաշարում և պահպանվել են: Իսկ `PreDetection`-ի այն օբյեկտները, որոնք չկան `PostDetection` բազմության մեջ, այլևս հետևելու հարկ չկա, քանի որ դրանք անհետացել են տեսաշարից: Իսկ ահա `PostDetection`-ի այն օբյեկտները, որոնք չկան `PreDetection` բազմության մեջ, անհրաժեշտ է սկսել հետևել, քանի որ դրանք տեսախցիկի տեսադաշտում հայտնված նոր օբյեկտներ են: Այսպիսով ստացվում է, որ այս կերպ կարելի է լուծել տեսադաշտում հայտնված օբյեկտներին հայտնաբերելու և հետևելու խնդիրը:

5. Քննարկենք նաև `IsTimeForDetection()` ֆունկցիայի հնարավոր իրականացումը: Այս ֆունկցիան կարող է վերադարձնել `true` արժեքը մի քանի դեպքերում: Ամենահավանական դեպքերից մեկը `Track()` ֆունկցիայի ձախողման դեպքն է, երբ հետևող օբյեկտի (`Tracker`) տեսադաշտից անհետանում է հետևվող օբյեկտը: Այս իրավիճակը կարող է առաջանալ այն ժամանակ, երբ օրինակ օբյեկտը ծածկվել է մեկ այլ օբյեկտով կամ անհետացել է տեսախցիկի տեսադաշտից: Այս դեպքում անհրաժեշտ է այդ օբյեկտին հանել շարժվող օբյեկտների ցուցակից և հայտնել, որ այն այլևս չկա: Մեկ այլ հնարավոր դեպք է նաև այն, երբ արդեն հայտնի օբյեկտները դեռ տեսախցիկի տեսադաշտում են, բայց հայտնվել են նոր օբյեկտներ, որոնց մասին տեղյակ չենք: Հենց այս խնդրի լուծման նպատակով կարելի է կիրառել `f(objectCount)` մաթեմատիկական ֆունկցիան, որը ըստ տեսադաշտում եղած օբյեկտների քանակի՝ կհաշվարկի այն Δt ժամանակը, որը ցույց կտա այն ժամանակային ինտերվալը, որից հետո պետք է աշխատի `Detection()` ֆունկցիան: Ֆունկցիայի կախումը օբյեկտների քանակից պայմանավորված է նրանով, որ ինչքան շատ շարժվող օբյեկտներ են առկա տեսախցիկի տեսադաշտում, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ կհայտնվեն նորերը: Օրինակ, եթե տեսախցիկը տեղադրված է ինչ-որ փողոցում, որը հսկում է մարդկանց տեղաշարժը, ապա տվյալ պահին տեսադաշտում հայտնված մարդկանց քանակից կախված կարելի է ենթադրություններ անել տվյալ փողոցում մարդկանց անցուղարձի մեծության վերաբերյալ: Եթե տեսադաշտում մարդիկ շատ են, ապա անհրաժեշտ է որքան հնարավոր է կարճ ժամանակահատվածը մեկ իրականացնել `Detection()` ֆունկցիան: Իսկ այն պարագայում, երբ մարդկանց տեղաշարժ գրեթե չկա, չի նշանակում, որ կարելի է իրագործել `Detection()` ֆունկցիան օրինակ մի քանի տասնյակ վայրկյանը մեկ: Շատ հնարավոր է, որ մի քանի վայրկյանի ընթացքում տեսախցիկի տեսադաշտով անցնի մարդկանց մի ամբողջ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սահմանել Δt ինտերվալի ինչ-որ սահմանային առավելագույն արժեք, որպեսզի խուսափենք նման ոչ ցանկալի իրավիճակներից:

Շատ կարևոր է նաև Δt -ի նվազագույն սահմանային արժեքի գոյության փաստը: Ինչպես նշվել է, օբյեկտի հայտաբերումը ավելի շատ ժամանակ է պահանջում, քան օբյեկտին հետևելը, հետևաբար


անհրաժեշտ է ունենալ այնպիսի նվազագույն սահմանային Δt արժեք, որը կվերահսկի համակարգի աշխատանքի էֆեկտիվությունը, այսինքն՝ միավոր ժամանակում համակարգը ունակ կլինի մշակել տեսաշարի հնարավորինս շատ քանակությամբ պատկերներ:

6. Շարժվող օբյեկտի շարժման ուղղության որոշման խնդիրը բավականին դյուրին է դառնում, քանի որ ունենք տվյալ օբյեկտի շարժման մասին տեղեկություն: Քանի որ օբյեկտին հայտնաբերող ֆունկցիան վերադարձնում է պատկերի մեջ այդ օբյեկտին բնութագրող շրջանակը, իսկ օբյեկտը հետևող ֆունկցիան, ստանալով այդ շրջանակը և հետևելով նրան, նորից վերադարձնում է նմանատիպ շրջանակ, ապա կարելի է կազմել տվյալ օբյեկտի շրջանակների վեկտորը որոշակի սահմանափակ երկարությամբ և որոշակի արդեն հայտնի մոտեցմամբ հաշվարկել օբյեկտի շարժման ուղղությունը:

Ստորև ներկայացված է այս խնդրի լուծման համար առաջարկվող նախնական բլոկ-սխեմա (նկար), որտեղ որոշ բլոկներ կարող են լինել բլոկ սխեմաներ (օրինակ՝ որոշել PreDetection-ի օբյեկտների շարժման ուղղությունները, համեմատել PreDetection-ը և PostDetection-ը և այլն): Այս բլոկ-սխեման ներկայացնում է խնդրի լուծման միայն մոտեցումը՝ առանց որոշ հարցեր մանրամասնելու:

Եզրակացություն: Մշակվել է շարժվող օբյեկտի հայտնաբերման և շարժման ուղղության նախնական որոշման խնդրի լուծման մոտեցում: Շարադրված են խնդրի լուծման նպատակն ու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով օբյեկտի հետևման ներկայումս հայտնի և արդիական ալգորիթմները՝ ընտրվել է այն ալգորիթմը, որն ունի ավելի բարձր արտադրողականություն: Օբյեկտի հայտնաբերման խնդիրն առաջարկվում է լուծել ժամանակակից TensorFlow մեքենայական ուսուցման համակարգի օգտագործմամբ: Կառուցվել է խնդրի լուծման համար առաջարկվող նախնական բլոկ-սխեման:

Այսպիսով, առաջարկվել է խնդրի լուծման մի մոտեցում, որն ապահովում է շարժվող օբյեկտի հայտնաբերման և շարժման ուղղության նախնական որոշում՝ առանց մարդու միջամտության:



Նկ. Խնդրի լուծումն առաջարկող նախնական բլոկ-սխեմա

Գրականություն

1. **Cheng-Laing L., Kai-Wei L.** Automatic path modeling by image processing techniques // Machine Learning and Cybernetics (ICMLC): International Conference. - 11-14 July 2010. - Volume 5. - P. 2589-2594.
2. **Rakibe Rupali S., Patil Bharati D.** Background Subtraction Algorithm Based Human Motion Detection // International Journal of Scientific and Research Publications. - May 2013. - Volume 3, issue 5.
3. **Abhishek K. Chauhan, Krishan P.** Moving Object Tracking Using Gaussian Mixture Model And Optical Engineering. - April 2013. - Volume 3, issue 4.
4. **Sen-Ching S. Cheung and Chandrika K.** Robust techniques for background subtraction in urban traffic video // Proceedings of SPIE - The International Society for Optical Engineering. - January 2004. - Vol. 5308. - P. 881-892.
5. **Grabner H., Grabner M., and Bischof H.** Real-time tracking via on-line boosting // *BMVC.* - 2006, - Volume 1. - P. 6-10.
6. **Zhongliang F.** Effectiveness analysis of Adaboost // Journal of Computer Research and Development. - 2008. - Vol. 45, № 10. - P. 1747-1755.
7. **Babenko B., Ming-Hsuan Y., and Belongie S.** Visual tracking with online multiple instance learning // IEEE. - 2009. - Volume 1. - P. 983-990.
8. Speed/accuracy trade-offs for modern convolutional object detectors / **J. Huang, V. Rathod, C. Sun, M. Zhu, et al** // IEEE. - 2017. - Volume 1. - P. 2396-3297.

12.02.2018.

М.Т. Сгоян

ИССЛЕДОВАНИЕ ЗАДАЧИ ОБНАРУЖЕНИЯ И ПРЕДВАРИТЕЛЬНОГО ОПРЕДЕЛЕНИЯ НАПРАВЛЕНИЯ ПЕРЕДВИГАЮЩЕГОСЯ ОБЪЕКТА НА ВИДЕОРЯДЕ

Проведено исследование задачи обнаружения и предварительного определения направления передвижающегося объекта на видеоряде, имея в виду исключение в этой задаче человеческого фактора на современном этапе. Представлены современные алгоритмы следования объекта, избран известный алгоритм MIL, который основан на изучении многочисленных примеров. Задачу определения объекта предлагается решить с использованием современной системы "TensorFlow". Создана предварительная блок-схема решения задачи, где представлены последовательные шаги возможных решений, без детализации неких вопросов.

Ключевые слова: движущийся объект, обнаружение объекта, следование объекта, видеоряд, направление движения, классификатор.

M.T. Shoyan

THE RESEARCH OF THE DETECTION AND PRELIMINARY DECISION OF DIRECTION PROBLEM OF THE MOVING OBJECT IN VIDEO SEQUENCE

The research of the detection and preliminary decision of direction problem of the moving object in video sequence, taking into consideration the necessity of the exclusion of the human factor in this problem has been done. The object tracking modern algorithms have been presented and selected the multiple instance learning based on MIL algorithm. It is recommended to use the modern "TensorFlow" system for solving the problem of object detection. The preliminary block scheme for solving the problem has been built where it has been presented a possible sequence of steps without clarifying any questions.

Keywords: a moving object, detection of the object, tracking of the object, video sequence, direction of the movement, classifier.

Սիդյան Միսակ Տիգրանի – ՀԱՊՀ, Բակալավր (S2SE)

УДК 551.501

ХИМИЧЕСКИЕ, БИОЛОГИЧЕСКИЕ И
ПРИРОДООХРАННЫЕ ТЕХНОЛОГИИ

Г.Е. Айвазян, Р.Н. Барсегян, А.А. Варданян, И.П. Чунгузов, В.Г. Перепелкин

**ДИСТАНЦИОННОЕ АКУСТИЧЕСКОЕ ЗОНДИРОВАНИЕ АТМОСФЕРНОГО
ПОГРАНИЧНОГО СЛОЯ**

Представлены результаты дистанционного акустического зондирования атмосферного пограничного слоя (АПС) с помощью противорадовой установки. Увеличение амплитуды генерируемых акустических сигналов позволило оперативно восстанавливать тонкую вертикальную структуру атмосферных слоев с градиентами эффективной скорости ветра порядка $0,1...0,3 \text{ с}^{-1}$, расположенных в устойчиво-стратифицированном АПС в интервале высот от 230 до 550 м.

Ключевые слова: акустическое зондирование, противорадовая установка, атмосферный пограничный слой.

Введение. Атмосферный пограничный слой характеризуется наибольшей изменчивостью своего состояния. Детальное изучение и понимание физических процессов, протекающих в АПС, необходимо для решения ряда важных фундаментальных и прикладных задач физики атмосферы, распространения волн различной природы.

Качественные и количественные характеристики распространяющихся в АПС акустических волн также определяются метеорологическим состоянием атмосферы, а их прогнозирование - исходной метеорологической информацией. Именно поэтому в последние годы наряду с совершенствованием традиционных методов измерений метеорологических параметров большое развитие получил метод акустического зондирования атмосферы. Данный метод основан на эффектах сильного взаимодействия акустических волн с атмосферой, в частности, на способности этих волн рассеиваться на неоднородностях показателя преломления, образованного атмосферной турбулентностью [1]. Естественной областью применения акустического зондирования является именно АПС, для которого характерны большая изменчивость и разнообразие термической стратификации, определяемой орографией местности, свойствами подстилающей поверхности, радиационными условиями, а также синоптическими процессами.

Анализ методов измерения метеорологических параметров и определения турбулентных характеристик в АПС показывает, что контактные методы (такие как измерения с мачт, самолетов, привязных аэростатов) весьма громоздки и дороги. Это делает их практически непригодными в задачах непрерывного контроля (мониторинга) АПС и распространения акустических волн. К тому же используемым стандартным метеорологическим приборам присущи существенные инерционные и радиационные ошибки. С другой стороны, дистанционное акустическое зондирование АПС с помощью доплеровских лидаров или содаров обычно ограничивается высотами в 300 м, т.к. выше этих высот резко возрастают ошибки измерений [2].

В работах [3, 4] нами предложен метод дистанционного акустического зондирования нижнего слоя тропосферы, основанный на частичном отражении акустических импульсов с ударным фронтом от непрерывно меняющихся с высотой вертикальных градиентов скорости ветра и температуры в тропосфере и проникновении отраженного сигнала в область акустической тени. Показана принципиальная возможность применения противорадовой установки "Зенит" для акустического зондирования АПС этим методом. Такой мощный источник акустических импульсов для зондирования атмосферы не имеет аналогов в мире. Были представлены параметры акустических волн (амплитуды, формы и длительности) излучаемых акустических сигналов в зависимости от высоты над поверхностью земли. Показано, что временное изменение формы сигналов противорадовой установки вызвано, главным образом, формированием инверсии температуры и приземного акустического волновода.


Цель данной работы состоит в продолжении дистанционного исследования вертикального профиля тонкой слоистой структуры АПС с помощью противорадовой установки.

Генерация акустических волн. Конструкция противорадовой установки “Зенит” описана в [5, 6]. Генерация акустических волн необходимой мощности происходит посредством периодически повторяющихся взрывов смеси бутан-пропан в объеме специальной камеры сгорания, имеющей форму воронки с направленным вертикально вверх открытым соплом (сопло Лавала). Количество инжектируемого газа подбирается таким образом, чтобы концентрация смеси оказалась в диапазоне взрывного горения (2,3...9,5% для пропана и 1,7...8,5% для бутана) и была близка к концентрации оптимального состава смеси, дающего максимальное давление взрыва (4,6% для пропана и 3,6% для бутана). Зажигание горючей смеси осуществляется с помощью автомобильной свечи зажигания, расположенной по оси камеры сгорания.


Регистрация осциллограмм акустических сигналов производилась приемниками (микрофонами) на поверхности земли и на высоте 30 м с помощью наполненных пропаном оболочек. На поверхности земли микрофоны располагались как вблизи противорадовой установки (на расстоянии около 20 м), так и на расстоянии около 2,25 км от установки. В последнем случае три микрофона образовывали треугольную прямоугольную антенну со сторонами 30 м.

В качестве приемников использовались акустические микрофоны фирмы “Брюль и Кьер”, способные регистрировать акустические сигналы в диапазоне частот от 2 до 20 кГц. Каждый микрофон был снабжен специально разработанной усилительной схемой, включающей в себя повторитель, усилитель и фильтр с частотой среза 150 Гц.

Результаты исследования и обсуждение. На рис. 1 а показан волноводный приход сигнала, зарегистрированный на расстоянии $r = 2,25$ км от источника. Там же отмечены приходы 1, 2 и 3, обнаруженные на “хвосте” сигнала. На рис. 1 б показаны частотные спектры начального сигнала ($r = 20$ м), его приходов 1, 2, 3 на расстоянии $r = 2,25$ км от источника и шума перед приходом всего сигнала.



а)



б)

Рис. 1. Волноводный приход сигнала (а) и спектры начального сигнала (20 м), его приходов 1, 2, 3 (2,25 км) и шума перед приходом всего сигнала (б)

Видно, что спектры приходов сосредоточены в полосе частот 20...60 Гц, где они почти на порядок превышают амплитудный спектр шума. В интервалах времени, в пределах которых кросс-когерентности между приемниками максимальны, азимуты приходов практически совпадают с их значениями для волноводного прихода. Отношения амплитуд этих приходов к амплитуде

волноводного прихода лежат в интервале $0,05 \dots 0,1$ Па. По временам задержки приходов 1, 2 и 3 относительно волноводного прихода были оценены высоты расположения неоднородных слоев, а по длительности приходов (порядка $0,01$ с) и углам падения – их толщины.

Используя аналитическую связь между формой отраженного сигнала от каждого слоя и вертикальным профилем флуктуаций эффективной скорости звука внутри слоя, полученную в [7, 8], были восстановлены профили флуктуаций $C_{эфф}(z)$ (скорость звука+проекция скорости ветра на направление источник-приемник) слоистых неоднородностей в АПС. Эти профили в трех слоях в увеличенном масштабе, соответствующих приходам 1, 2 и 3, показаны на рис. 2.






Рис. 2. Восстановленные профили флуктуаций слоистых неоднородностей в АПС

Для того чтобы проверить, насколько восстановленные профили соответствуют реальным, решалась прямая задача, т.е. эти профили накладывались на постоянный профиль $C_{эфф} = \text{const}$ в однородной среде, после чего производился расчет поля отраженного сигнала по аналитической формуле, связывающей отраженный сигнал с самим профилем флуктуаций [7, 8].



а)



б)




Рис. 3. Сравнение расчетных, восстановленных и экспериментальных приходов сигнала 1 (а), 2(б) и 3 (в).

На рис. 3 представлено сравнение расчетных, восстановленных и зарегистрированных приходов сигнала 1, 2 и 3. Видно, что восстановленные приходы удовлетворительно воспроизводят экспериментальные приходы. Их относительное среднеквадратичное отклонение не превышает 10%, т.е. относительной ошибки измерений самого сигнала. Между тем отклонение расчетных приходов от экспериментальных достигает 30%. Такое отклонение связано, прежде всего, с тем, что при расчете использованы сигнал с ограниченной полосой частот (10...100 Гц) вблизи источника и падающий сигнал, форма которого отлична от реального сигнала. Тем не менее это отклонение лежит в пределах относительной ошибки измерений амплитуды самого сигнала на большом расстоянии от источника, где присутствуют значительные шумы, поэтому согласие расчетных и экспериментальных сигналов также можно считать вполне удовлетворительным.

Таким образом, расчеты хорошо подтверждают наличие в сигнале отражений от восстановленной тонкой слоистой структуры, формирующейся в устойчиво-стратифицированном АПС. Обнаружение столь значительных сдвигов скорости ветра в относительно тонких слоях атмосферы (60...80 м) требует достаточно высокого разрешения по вертикали (не менее 10 м), каковым и обладает предложенный акустический метод зондирования.

